

ԷԶՄԻԱԾԻՆ



Թ
2003

ՏԻՄ 110

ДУБЛЕТ



ԾԹ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
 ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
 ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
 ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ



Ու ի ն զ ի յ ի յ ի յ ի յ

2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՅՅՐԱԴԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Օրհնության գիրը Նոր Զուղայի հայոց թեմի հիմնադրման 400-ամյակի առիթով	3
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գերաշնորհ Ս. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	6
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Ս. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանին՝ քահանայական ձեռնադրության քառասնամյակի առթիվ	8
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Կրեյ և Կրիկին Արեգ և Մոնիկ Երկանյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	10
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ռաֆայել Պապայանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին	12
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը եգիպտահայ վարժարանների նախկին սաների՝ Երևանում կայացած հավաքի առիթով	14
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Հայաստանի Ճարտարագիտական Համալսարանի հիմնադրման 70-ամյակի առիթով	16
Հայրապետական գնահատություն	18
Գարեգին Բ Կաթողիկոսի Հայրապետական փնտրությամբ կարգադրված է հռչակված Արմավիրի թեմի Ս. Մաշտոց քահանա Իսայանը	19
Ս. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը պարգևատրվեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով	20
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարգևատրվեց հանձնեց Մաքսիմ Հակոբյանին	21

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

Ս. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մարտիցված Ուխտի Ս. Պապարագին	22
Ս. Հոսիկ եպիսկոպոս Սանթրույանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	25
Ս. Անուշավան վարդապետ Ժամկոչյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	28
Ս. Փառեն եպիսկոպոս Ավերիքյանի քարոզը՝ խոսված	

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . .	31
Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի քարոզը՝ խոսված	
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . .	36
Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի քարոզը՝ խոսված	
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին և քահանայական ձեռնադրությանը	39

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Սուրբ Եպիփան եպիսկոպոս Կիպրացու գովեստը	
Սուրբ Աստվածածին և միշտ Կույս Մարիամի մասին	42
ՇՆՈՐՀԷ Ռ. ՎՐԴ. ԳԱՄՊԱՐԵԱՆ - Քահանան պատարագիչի	
պաշտօնին մեջ	51
ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ - Աղանդների գործունեության հոգեբանական առանձնահատկությունները. դրանց «առաքելությունը» և անձանց ներգրավման հոգեբանական մեխանիզմները	59

ՆԱՐԵԿԸ ԵՎ ՆԱՐԵԿԱՅԻՆ

ԶԱՐԵՆ ԽՐԱԽՈՒՆԻ - Նարեկ Նարեկացի	64
ՎՐԵԺ ՄԿՐՏՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գրիգոր Նարեկացին ժամանակի աշխարհագրագետության ծիրում	66
ԱՌԱՔԵԼ ՍՈՒՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Գրիգոր Նարեկացու «Մաքյան Ողբերգության» պոեմը որպես համամարդկային հոգեվերլուծություն	78
ՀԱՎՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Նոր գիրք Նարեկացու և Նարեկի մասին	88
ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ - Բարձր Հայքի XIII դարի վերջի և XIV դարի մանրանկարչության առանձնահատկությունները	91
ԼԻԼԻԹ ԶԱԲԱՐՅԱՆ - Մի դրվագ հայ-արաբական մշակության հարաբերություններից	96
ՎԻԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ - Ուսումնասիրություն նվիրված Ղրիմում նկարագրողված մի ձեռագրի	107

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱՍՏԴԻԿ ՄԱՀԱԿՅԱՆ - Կենսագրական նոր բառարան	112
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն և Ուխտի Ս. Պատարագ	
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	114
Տ. Նարեկ արեղա Ավագյան	116
Տ. Մեսրոպ արեղա Պարսամյան	117
Տ. Դանիել վարդապետ Ֆրնտըզյանին շնորհվեց մասնավոր վարդապետության աստիճան	118
Տ. Դանիել վարդապետ Ֆրնտըզյան	118
Ձեռամբ Կոպայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի	

օծվեց Հրազդան քաղաքի Ջրառար թաղամասի նորակառույց Ս. Թուխ Մանուկ եկեղեցին	120
Գերմանահայոց թեմի Ուխտի Ս. Պապարազը Մայր Տաճարում	121

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց կոնգրեսական Ժոզեֆ Բրուլիին	122
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ սենատորների և կոնգրեսականների աշխատակազմի պարզիտալությանը	123
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ճանապարհորդ Ֆյոդոր Կոնյուխովին	124
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի և կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թընագեին	125
Եկեղեցական բեմ. լուրեր	126

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	128
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	131

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"

Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՉ՝ 77764

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆՓԱՌԻ ԵՎ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵՐԱՅ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄՆ ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՅԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

«Հայ քրիստոնյաները կենդանի վկաներ են...»:
Կարդինալ Ուիլիամ Բիլեր

Օգոստոսի 27-ից սեպտեմբերի 2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հյուրն էր ԱՄՆ-ի հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությունը՝ առաջնորդությամբ Բալթիմորի Արքեպիսկոպոս Կարդինալ Ուիլիամ Բիլերի: ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Վիգեն եպս. Այբազյանի ուղեկցությամբ Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը Հայաստան էր ժամանել Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով:

Պատվիրակության կազմում էին Մթոթպոնի եպիսկոպոս Սթիվեն Բլերը, Օլբանի եպիսկոպոս Հովարդ Հուբարդը, Սթենֆորդի ուկրաինական կաթոլիկ համայնքի եպիսկոպոս Բեյզլ Լոսպենը, Պրովիդենսի եպիսկոպոս Ռոբերտ Մուլլին, Վեննսփիկի եպիսկոպոս Ջոն Նևինսը, Նյուպոնի մեթոդիստների համայնքի եպիսկոպոս Նիկոլաս Սամրան, Մերձավոր Արևելքի կաթոլիկ բարեսիրական կազմակերպության ընդհանուր քարտուղար Ռոբերտ Սթյենը, ԱՄՆ կաթոլիկ համալսարանի կրթիչների ֆակուլտետի ռեկտոր Սթիվեն Հեպելը, ԱՄՆ կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու հայր Ռոնալդ Ռոբերտսոնը:

Մեկշաբաթյա այցի ընթացքում Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և Տ. Վիգեն եպս. Այբազյանի ուղեկցությամբ քույր Եկեղեցու ներկայացուցիչները, իբրև ռաբաթներ, այցելեցին հայոց սրբավայրեր, Մայր Տաճարում ներկա եղան Ս. Պատարագի և քահանայական ձեռնադրության: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարության հետ:

Այցի առաջին օրը հյուրերին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը Վեհափառ Հայրապետին հանգամանալից ներկայացրեց պատվիրակության անդամներին՝ անդրադառնալով երկու քույր Եկեղեցիների միջև առկա եղբայրական սերը հարաբերություններին:

Ամենայն Հայոց Հայրապետը ողջունելով Միաձնաժե Տաճարի օծման հոբելյանի առթիվ Հայաստան ժամանած կաթոլիկ հոգևորականներին՝ ի մասնավորի ասաց. *«Ուրախ եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ողջունելու հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությանը՝ մեկ անգամ ևս հաստատելով այն ջերմ հարաբերությունները, որոնք առկա են Հայ Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև: 2001 թ. հոբելյանական տարում Նորին*

Մրբություն հովհաննես-Պողոս Բ-ն այցելեց Հայաստան, ուր կեցության ընթացքին մնաց Վեհաբանում, որպեսզի մենք աղոթքի և խոկումի բազում պահեր ունեցանք իրար հետ: Եվ այդ պայմանում էր բացեց մեր երկու Եկեղեցիների փոխհարություններում: Ուստի հայցում ենք Երզնավոր Տիրոջ ողորմածությունն ու բարեգությունը, որպեսզի նման փոխայցելություններով երջանկացնի մեզ ամենքիս, ինչպես նաև մեր երկու բարեպաշտ ժողովուրդներին»,- իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Եկեղեցու առաջ ծառացած խնդիրներին, ինչպես նաև առկա միջնեկեղեցական հարաբերություններին, պարասխանեց պարավիթակության անդամների հարցերին:

Հանդիպմանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպ. Միդգախանյանը, Անդրկովկասում Վարդիկանի դեպյան և պապական նվիրակ Կլաուդիո արքեպ. Գուջերուպին, Մայր Աթոռի միաբաններ: Հանդիպման ավարտից հետո հյուրերը եղան նաև Ս. Էջմիածնի թանգարաններում:

Օգոստոսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղեկցությամբ Բալթիմորի արքեպիսկոպոս կարդինալ Ուիլիամ Զիլերի գլխավորած պարավիթակությունն այցելեց Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Զոհարյանին և վարչապետ Անդրանիկ Մարգարյանին:

ՏՆ նախագահի հետ հանդիպման ընթացքում բարձր գնահատվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Հոմնական Կաթոլիկ Եկեղեցու միջև ձևավորված ջերմ հարաբերությունները՝ ի շահ ժողովուրդների բարօրության: Հանդիպման մասնակիցները կարևորեցին Եկեղեցու դերը բարոյական արժեքների պահպանման գործում: Զրույցի ընթացքում քննարկվեցին նաև հայ-ամերիկյան փոխհարաբերություններին առնչվող հարցեր: Բարձր գնահատելով Միացյալ Նահանգների հետ իրականացվող ծրագրերը, Ռոբերտ Զոհարյանը կարևորեց ամերիկահայ համայնքի դերը հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման գործում:

Նախագահական ևստավայրից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղեկցությամբ կաթոլիկ հյուրերն այցելեցին ՏՆ կառավարություն: ՏՆ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը բարձր գնահատեց Հայ Առաքելական և ԱՄՆ Կաթոլիկ Եկեղեցիների միջև զարգացող համագործակցությունն ու ջերմ հարաբերությունները: Նշվեց, որ քույր Եկեղեցիների բարեկամությունը մեծ խթան է աշխարհում խաղաղության, բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ևս մեծապես կարևորեց Եկեղեցիների միջև բարեկամությունը՝ հատկապես ներկա դարաշրջանի մարտահրավերներին դիմակայելու, մարդկության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներին համարելով լուծումներ գտնելու փասանկյունից:

Վարչապետի հետ հանդիպման ընթացքում Կաթոլիկ Եկեղեցու պարավիթակները հետաքրքրվեցին Եկեղեցի-պետություն հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերով: Եվ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, և՛ ՏՆ վարչապետն այդ հարաբերությունները գնահատեցին որպես բավականին արդյունավետ:



Ինքնուրույն խմբակի անդամները և խմբակի ղեկավարը՝
հայր Գևորգ Բաղդասարյանը



ՈՒՂԱՏԿԻ ՆԵՅԳԱՍՏԻ ՎՏՈՒԴԻՄ ԳՂՈՒՄԵՆՈՅ ՎՂՈՒՄԻՉԻ



Նույն օրը Ամենայն Հայոց Հայրապետի ուղեկցությամբ կաթոլիկ հոգևորականներն այցելեցին նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, եղան Ծիծեռնակաբերդում, ուր ծաղկեպսակ դրեցին 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին՝ աղոթելով բյուրավոր զոհերի հոգիների հանգստության համար:

Օգոստոսի 29-ին կարդինալ Ուիլիամ Զիլերի գլխավորած պատվիրակությունն այցելեց Գյումրի: Ծիրակի թեմի առաջնորդարանում հյուրերին դիմավորեց թեմակալ առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Առաջնորդանիստ եկեղեցում կատարվեց էկումենիկ աղոթք: Հյուրերն առիթ ունեցան հանդիպելու նաև Կոնի հայ կաթոլիկ համայնքի հետ:

Հիշարժան էր **օգոստոսի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի** հանդիսապետությամբ Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Ս. Էջմիածնում մատուցված Ուխտի Պատարագը, որին ներկա գտնվեցին կաթոլիկ հոգևորականները: Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Շահան արքեպս. Սվաճյանը մատուցեց Ս. Պատարագ, հընթացս որի ձեռամբ Սրբազան Հոր կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Ապա հանուն Վեհափառ Հայրապետի կաթոլիկ հոգևորականներին ողջունեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը՝ անդրադառնալով երկու եկեղեցիների եղբայրական իարարություններին: Պատասխան խոսքում կարդինալ Ուիլիամ Զիլերը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության եամար:

ԲԱՆԹԱԿԱՆ ԵՐԵՄԻՍԿՈՂՈՍ, ԿԱՐԴԻՆԱԼ ՈՒԻԼԻԱՄ ԶԻԼԵՐԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ, ԸՆԹԱՅՑ ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳԻ

Չերդ Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ,

Գերապատիվ և Գերաշնորհ Սրբազան Հայրեր, հոգևորականության հարգարժան ներկայացուցիչներ, սիրելի թույրեր և նշալայրներ ի Քրիստոս.

Այս մի քանի օրերի ընթացքում Միացյալ Նահանգներից ժամանած Կաթոլիկ եկեղեցու ներկայացուցչությունն առիթն ունի կիսելու Հայ Առաքելական Եկեղեցու այն ուրախությունը, որ դուք ապրում եք՝ փոխելով Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման և օծման 1700-ամյա հոբելյանը: Մենք նույնպես ուրախ ենք փոխելու այն գործը և առաջընթացային քայլերը, որ Չերդ Սրբության առաջնորդությամբ Հայ Առաքելական Եկեղեցին իրականացնում է քայլ առ քայլ՝ զարկ փալու Չեր հնամենի եկեղեցու վերածննդին՝ կոմունիստական հավածանքի երկարատև խավարից հետո:

Մենք փեսանք երիտասարդությանն ամուր և հաստատուն քրիստոնեական դաստիարակությամբ ապահովելու Չեր ջանքերը ժրաջան ու նվիրյալ հոգևորականներ պատրաստելու, ինչպես նաև ժողովրդի բազում կարիքների համար պահանջվող բազմաթիվ նոր եկեղեցիներ կառուցելու համար:

Երախտագիտության խորը գգացումով՝ մենք գնահատում ենք այն ջերմ հյուրընկալությունն ու բարյացակամությունը, որ մեր հանդեպ դրսևորվեց Չերդ Սրբության և Հայաստանի կառավարության, ինչպես նաև նրանց կողմից, ովքեր գործում են Չեր անունից: Մենք մեզ այսպեղ գգում ենք ինչպես մեր փանը:

Այս ճանապարհորդությունն ինձ համար փարիսների ընթացքում ծնված սպասումների իրականացում է, Ֆիրյալիֆիայի սեմինարիայում իմ ուսանած փարիսներից սկսած, այժմ կեսդարձյալ վաղեմությամբ, երբ ամեն փարի մեզ համար կարարվում էր հայկական Պատարազ և երբ մենք խանդավառվում էինք հայ եկեղեցական մի պերճախոս գործչի այցելությամբ, ով Ֆերշնում էր մեզ իր գերուզանց անգլիերենով:

յամբ, ով հերշեմում էր մեզ իր գերազանց անգլիկոսական
Վարդին Կարինների ընթացքում, Միացյալ Նահանգների արևելյան մասում, մենք օրհ-
նությունն ունենք համագործակցելու Գերաշնորհ Տ. Խաժան արքեպիս- Պարսամյանի և նրա
օգնական Գերապարիկ Վիգեն Եպիս. Այլազյանի հետ, ովքեր երկուսով էլ մեծապես պար-
վել են մեզ՝ ուղեկցելով մեզ մեր այս առաքելության ընթացքում: Մենք ուրախությունն ու-
նենք աշխատելու նրանց հետ՝ լուս երկու Կարի առաջ՝ պարսպարկով Ձերդ Սրբության
այցելությունը Միացյալ Նահանգներ: Մենք չենք կարող մոռանալ Վաշինգտոնում Ազգա-
յցելությունը Միացյալ Նահանգներ: Մենք չենք կարող մոռանալ Վաշինգտոնում Ազգա-
յին սրբարկելի Անարար Հոլության բազիլիկայում Կեղի ունեցած հզոր էկումենիկ աղոթքը,
ոչ էլ Ձեր Կապիտոլիոնից այցելությունը մոտակայում գտնվող Հովհաննես-Պողոս Երկրորդ
մշակութային կենտրոն: Նույնպես մենք հապարդ չենք՝ ցույց տալու Ձերդ Սրբությանն այն
մեծածավալ հայերեն ձեռագիրը, որ մեզ փոխանցել էին այդ առիթով Բալթիմորի Վեյ-
թոն Միջ թանգարանից:

Ուրախությամբ հիշում եմ նաև փարիներ ատաջ Չեր երջանակահիշատակ նախորդի՝ Նո-
րին Սրբություն Գարեգին Առաջին Կաթողիկոսի այցելությունը Վաշինգտոն։ Նա ցանկույթ-
յուն հայտնեց եանդիպելու Հոռմի Սրբազան Քառանայապետ Հովհաննես Պողոս Երկրոր-
դի հետ Հոռմում, և մենք այդ երեկո սկսեցինք այն գործընթացը, որի արդյունքում մի բանի-
րի հետ Հոռմում, 1996 թ. դեկտեմբերին, մա այցելեց Հոռմ։ Այդ առիթով մեր Եկեղեցիների
առաջնորդները Համապետ Հռչակագիր ստորագրեցին՝ հաստատելով իրենց ընդհանուր
հավատքն ի Բրիստոս և իրենց Եկեղեցիներին կոչ անելով «ապելի կանոնավոր ու արդյու-
նավետ երկխոսությունների»։

Չերդ Սրբությունը հորաշալի ճանապարհներով ամառ է ընթացել այդ երկխոսության մեջ՝ և՛ իր անձնական այցելությամբ հովհաննես-Պողոս Երկրորդին հոռմում, և՛ կազմակերպելով նրա մեծաշուք հյուրընկալությունն այսօրը։ Դուք ղոջոնեցիք նրան Չեր Կոս մեջ 2001 թ., նրա այցելության ընթացքում, և Դուք նրան ընձեռեցիք առիթը Լապին Եկեղեցու Կաթոլիկ հավաքացյալների համար պարարագելու Սուրբ Էջմիածնի Մայրավանդում գրավող «Մեծ հորանին», ուր նա քարոզեց հայերենով։ Այդ ժամանակից սկսած, Չերդ Սրբությունը հայ Մտաքեղական Եկեղեցու ներկայացուցիչներին առաքել է 2001 թ. հոկտեմբերին Գեղի ունեցած Կաթոլիկ եպիսկոպոսների համաշխարհային Սինոդի Կեղական հավաքույթին և 2002 թ. հունվարին Ազիզում Կեղի ունեցած «Աշխարհի Օր՝ Խաղաղության համար» ա-դրթին։

Մենք այսպեղ կարող ենք ավելին հիշատակել, ներառյալ այն ապրումները, որ մենք ունենք հայ ժողովրդի դարավոր փառապանքները տեսնելով՝ արյունահեղ ջարդերից ու նահապետություններից, այդ թվում և 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի սարսափազդու իրադարձությունները, կամ խորհրդային հալածանքներից, կամ ավերիչ երկրաշարժներից, որոնք Կեդի են ունենում ժամանակ առ ժամանակ և հափկապես վերջինը, որ Կեդի ունեցավ 1988 թ.:

Հայ քրիստոնյաները կենդանի վկաներ են, որոնց մասին մենք կարող ենք ուսանել՝ կարդալով Մուրբ Մարկոսի այսօրվա Ավետարանը, որ մեզ հուշում է, որ երբ փոթորիկ է ու ալիքները կործանում են մեզ, հիսուսը մութ է մի ուժով, որ օգնում ու փրկում է, երբ մենք Նրան ենք դառնում հավատքով:

Ձեռնադրությունից հետո Ավագ Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները և կարդինալ Ուիլիամ Զիլերի գլխավորած հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակության անդամները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նորընծաներին:

Այցի ընթացքում Կաթոլիկ Եկեղեցու հյուրերը եղան նաև Գեղարդավանքում, Խոր Վիրապում, Սուանի Վազգենյան հոգևոր Դպրանոցում:

Մեպարեմբերի 3-ին ԱՄՆ-ի կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությունը հրաժեշտ տվեց Մայրավաքին և վերադարձավ Միացյալ Նահանգներ:

ՀԵՂԻՆԵ ՄԿՏՉՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆԸ

(8 սեպտեմբերի 2003 թ., Ծաղկածոր)

Գիրաժողովի պարզարժան մասնակիցներ.

Ողջունում ենք Հայաստանում հրավիրված ներկայացուցչական այս հավաքը, որը ձևը սիրո արքայապետությունն է Եկեղեցու հանդեպ և գումարվել է քրիստոնեական արժեքների ու սովանդությունների պահպանման, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ամրապնդման ու բարգավաճման մրահոգությամբ: Այս խնդիրները կարևոր են մանավանդ մեր այս բարդ տարածաշրջանում, որը ժամանակագրական իմաստով քրիստոնեական աշխարհի սկզբնակներն է, աշխարհագրական իմաստով՝ նրա սահմանամերձ գոտին: Այս վերջին հանգամանքով ավելի է կարևորվում այսպիսի քրիստոնեական արժեքների պահպանումը:

Սուրբ Թադևոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ ծնունդ առած Հայ Եկեղեցին դարերի հուլովություն միշտ հավաքարիմ առաքելական ավանդություններին ու կանոններին՝ ժամանակների պահանջներին համահունչ կազմակերպել է իր կյանքն առաքելական ոգով: Հայ Եկեղեցու շուրջ է ծավալվել հայոց քրիստոնեական կյանքը, Հայ Եկեղեցու լույս խորաններից են յուսարձակվել շնորհները սիրո, հույսի ու հավաքի: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց ճիշտ 150 տարի անց առ Քրիստոս հավաքն ունենալով իբրև մաշկի գույն և գոյության խորհուրդ՝ մեր ժողովուրդը 451 թ. Ավարայրի դաշտում մղեց առաջին մարտը խղճի ու դավանանքի ազատության:

Կրոնական ուղղություն հիմնարար իրավական սկզբունքներն են այսօր խղճի և դավանանքի ազատությունը, հանդուրժողականությունն այլադավանի հանդեպ, պետության և Եկեղեցու՝ աշխարհիկ և հոգևոր իշխանության տարանջատումը: Հիմնարար այս դրույթները Եվրոպան այսօր ներկայացնում է աշխարհին, նաև մեզ՝ իբրև արդի քաղաքակրթության ձեռքբերում: Այդ սկզբունքները, սակայն, ծագել են քրիստոնեության հնր մեկտեղ, և մենք ընդունում ենք դրանք ոչ թե որպես օտարաժամուր, այլ սեփական, ոչ թե որպես այսօրվա գյուղ, այլ՝ նրկհազարամյա ցնություն բռնած ճշմարտություններ: Ի՞նչ է Հիսուսի սիրո քարոզը՝ անգամ թշնամու հանդեպ, եթե ոչ՝ հանդուրժողականության կոչ ու հրավեր: Ո՞րն է իմաստը «Հայտնիք» կայսեր, և Աստծունը՝ Աստծուն» խոսքի, եթե ոչ՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարբերակում իրենց գործառնություն: 301 թվականից՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումից ի վեր խաղաղասիրության և հանդուրժողականության ոգին է առաջնորդել հայ ժողովրդին: Այդ ոգին իր արձանագրումն է՝ գրել

դեռևս 1773 թ.՝ Շահամիրյանի գրչին պատկանող «Ռոգայթ փառաց» խորագրով հայոց ապագա պետության սահմանադրության մեջ: Այնպեղ նախ սահմանվում է, որ «Մեզ համար պարվելի է հայաստանայց Սուրբ Եկեղեցու աստվածաշարության կտրդդ, որը մեզ է ավանդվել մեր սուրբ ստաբայներ Թադևոսի և Բարդուղիմեոսի կողմից՝ մինչև այսօր շատավիճվող հաջորդությամբ. նրա ավանդն է մեզ հայոց հայրապետության ծայրագույն Աթոռը՝ Լուսակառույց Սուրբ Էջմիածին եկեղեցին Վաղարշապատում՝ գլխավորությամբ հայոց մաքրագաղղ հայրապետի»: Այնուհետև՝ «հայոց երկրի ներսին բնակվող ամեն մի մարդկային բնություն ներկայումս իր Աստծուն պաշտելու ինչ սովորություն որ ունի, նույն կերպ էլ շարունակելու է հավատարիմ մնալ իր աստվածաշարության հավատքին. նրան արգելելու իրավունք ոչ ոք չունի, ով էլ նա լինի»:

Այս սկզբունքը դարևորով գոյատևել է: մեզանում ն մեր պետական անկախության վերականգնման պահից վերստին հաստատվեց «խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում, որի առանձնահատկություններից մեկն այն է, որ ոչ միայն հատկապես ընդգծված է ազգային փոքրամասնությունների ազատ իրավունքը՝ դավանելու իրենց ավանդական կրոնը, այլ՝ հեշտացված է նրանց կրոնական կազմակերպությունների գրանցման կարգը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այս օրենքի մշակմանը գործուն մասնակցություն է ունեցել հայ Եկեղեցին: Սակայն, ինչպես ամեն Եկեղեցի, հայ Եկեղեցին չի կարող ձևոնպառ գտնվել, որ պետությունն ու հասարակությունն անտարբեր լինեն հավատքի նկատմամբ: Եկեղեցու համար անընդունելի է խղճի ազատության մի տարբերակ, երբ մարդու առաջադիմության շնորհիվ հաղթահարված հեթանոսական բազմաստվածությունն այսօր սողանդների տնտեսկի ներմուծումով անձից փնդափոխվում է հասարակություն: Դավանանքի ազատությունը չի կարող նշանակել, որ հասարակությունը պետք է անտարբեր լինի այն հարցում, թե ո՞րն են երկրպագում իր անդամները՝ Աստծուն, թե՞ սատանային, ո՞ր նորմերն են առաջնորդողը հասարակական կյանքի: Խղճի ազատությունը չի կարող վերախմաստավորվել որպես ազատություն խղճից: «Պետության տարանջատումը Եկեղեցուց չի կարող վերածվել պետության և երա քաղաքացիների» Աստծուց հեռանալու: Այլադավանի հանդեպ հանդուրժողականությունը հասարակական նորմ չպիտի դարձնի ուխտադրությունն ու դավանափոխությունը: Կրթության աշխարհիկ բնույթը չի նշանակում, որ պետական դպրոցը դաջելու է հոգեգործի էակներ՝ անբնույթ թողնելով մարտը սերնդին իր պապենական դավանանքից, որի ծիրում ձևավորվել ու զարգացել է նրա ազգային աշխարհայացքն ու ողջ մշակույթը, մշակույթ, որի ուսուցման ընդգրկումը դպրոցական ծրագրերում ձևական է, քանզի անհնար է այն ըմբռնել ու զգալ առանց ազգային դավանանքի իմացության:

Մեր օրերում հատկապես շար է խոսվում բրիտանական արմենների մասին: Ինչ ուզեք՝ կա շոշափվող արժեքների շարքում, բացի դրանց հիմքում հավատքի ընդգծումից: Համամարդկային արժեքներն այսօր, ցավոք, հաճախ ընկալվում են իրենց հոգեգործի տարբերակով, իսկ հոգեոքը բոլոր հարցադրումներում կարծես դառնում է ներկրողական: Այսօր Մեր մաղթանքն է, որ այս կարևոր հավաքում ծավալվող խոսակցությունն առանձնանա առավել մեծ մտահոգությամբ մեր հավատքի և բրիտանական արժեքների նկատմամբ: Համամարդկայինի հիմքը և բաղադրամասը ազգային արժեքներն են, առանց որոնց

սին ժամանց է խոսելը եամամարդկայինի կամ միջազգայնորեն ճանաչվածի՝ ներառյալ խղճի ազատության մասին:

Առ Աստված աղոթքով բարի ընթացք ենք մաղթում գիտաժողովի աշխատանքներին և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում գիտաժողովի սլաքավարժան անդամներին:

«Շնորհք, սէր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ. ամէն»:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ 1700-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆԸ**

(12 սեպտեմբերի 2003 թ., Ս. Էջմիածին)

Սրբազան Հայրեր,
Հոգևոր եղբայրներ,
Գիտաժողովի սիրելի մասնակիցներ.

Հոգու անսահման բերկրանքով խոշորում ենք նվիրական մեր սրբավայրի՝ Կաթողիկե Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացումը Սուրբ Էջմիածնում: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բխում գիտաժողովի բոլոր մասնակիցներից և Մեր գնահատանքը, որ սիրով ու պատրաստակամությամբ արձագանքեցիք Մայր Աթոռի հրավերին:

Այսօր Ձեզ հետ միասին հրաշալի ամիսն ենք վերստին ապրելու լուսեղեն խորհուրդը Աստվածակառույց Սուրբ Էջմիածնի, որ Երկնավորի բացառիկ պարգևն է մեր ժողովրդին: Աստծո Էջքով նվիրագործված այս սրբավայրից 1700 տարի առաջ քրիստոնեության լույսը ճառագայտ սփռվեց համայն Հայաստանի ու հայոց վրա: Որտեղ էլ տարագիր ապրեցինք, մեր հայացքները ուղղեցինք դեպի Արարատի լանջին վեհորեն կանգնած ու մեզ միշտ կանչող ու միավորող հավատի մեր օրրանը, Միածնաէջ հոգևոր մեր կենտրոնը՝ Մայր Տաճարը ամենայն հայոց: Աղոթախոս նրա քարերին են դիպել մեր մեծ սրբերի՝ Գրիգոր Լուսավորչի, Տրդատ Թագավորի ձեռքերը, Իջման Սուրբ Մեղանի առջև ծնրադրել են մեր երանաշնորհ ու երախտարժան Հայրապետները, նրա կամարների ներքո Մաշտոց Սուրբ Վարդապետը հայոց նորագյուտ Աբրահեմն է ուսուցանել հայ մանուկներին և այստեղ են փսոս հավատի ու հայրենյաց մարտերից առաջ ուխտել և օրհնություն ստացել հայոց քաջերը: Այսպես գիտենք Սուրբ Էջմիածինը ու այսպես պիտի ճանաչենք միշտ՝ «հայ հոգու զորության ակունքն ու գանձարան, ազատության սեր ու դրոշ, հայ հոգու պարծանքն ու հաղթություն, գիտենք մեզ Մայր պաշտելի»՝ գորովագութ սիրով մեզ շաղկապող, սիրտ մեզ հաստատող ու պսոսպանող» (Հայրապետական Կոնդակ, թիվ 124, 2003 թ.):

Սիրելիներ, այսօր դուք ևս գիտական ձեր ուսումնասիրություններով նշանավորում եք Մայր Տաճարի մեծ տարեդարձը: Նրա պատմությանը, ճարտարապետությանը և այլ հարցերին նվիրված ձեր զեկուցումները մեկ անգամ էլ ներկայացնելու են մեր Եկեղեցու հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածինը՝ իր սրբազան առաքելությամբ համազգային մեր կյանքում և քրիստոնեական Եկեղեցիների մեծ ընտանիքում: Երեկ, այսօր և միշտ նույնն է նրա առաքելությունը. Աստծո սերը և հավատի լույսը մեր ժողովրդի հոգում ամմաբ պահելու առաքելությունն է այդ, որը դարձել է նաև հայրդուն հայրենյաց արժեքներով ապրեցնելու լուսավոր ճանապարհ, Հայության հավատով դեպի ազատ Հայաստանի այսօրը առաջ-

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆԸ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ**
(15 սեպտեմբերի 2003 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ազդեց և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հայագիտական միջազգային գիտաժողովի մասնակիցներին և փառք ու գոհություն մատուցում Բարձրալիկ, որ Հայաստանի անկախության վերականգնումով հնարավոր է դարձել նման ընդգրկուն և ներկայացուցչական գիտաժողովի գումարումը հայոց Մայր Հայրենիքում:

Աիրևի հայագետներ, այսօր երջանիկ առիթն ունենք Մեր գնահատանքը բերելու ձեզ հայագիտության ասպարեզում ձեր վաստակյալ ծառայությանը համար: Մեր գնահատանքը ձեզ նան այն նախանձախնդրության համար, որով արձագանքելով Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և Երևանի Պետական Համալսարանի իրավերին՝ սեպտեմբերյան այս գեղեցիկ օրերին հավաքվել եք Երևանում՝ ներկայացնելու վերջին փաստանշաններում հայագիտության ընագտակառում կատարված ուսումնասիրությունները, այսօր առկա անհրաժեշտությունները և նախաշնչելու հայագիտության հեղազա բեթագքն ու գարգացումները:

Արդեն մի քանի հարյուրամյակ ուսումնասիրողներին հեղաբերում են վաղնջական ժամանակներից սկիզբ առնող մեր ժողովրդի պատմությունը և մարդկային բաղաբակրության ակտերներին առնչվող նրա մշակույթը: Արդարև, Արարադի փեշերին հագադամյակներ ապրող ու արարող մեր ժողովրդի ժառանգությունը շար րան կարող է պատմել մարդկության հնագույն անցյալի ու կենսագրության մասին: Բայց, մանավանդ, հոգևոր այն երթի մասին, որ պսակված է Փրկչի Հարությանը և առ Բրիստոս հավադի կյանքով, որը 4-րդ դարից ի վեր ակունքն է հայի գորության ու դիմագիծը հայ իրականության: Հայագիտությունը ճանաչել է փալիս հայ ժողովրդի Լությունը, բրիստոնյա Հայաստանի ոգին, այն ամենը, ինչ կոչվում է հայի հոգևոր աշխարհ:

Մենք ուրախ ենք, որ այսօր հայագիտության ասպարեզում կարևորվում է նան ուսումնասիրվող կյութերի հոգևոր շերտի վերհանումը՝ իրրն գիտական ամբողջականության գրավական: Ուրախ ենք, որ վերանայվում են մեր պատմության խնդաթյությունները, միտումնավոր գնահատականները, որ գնալով մակ ամբողջականության մեջ է ընկալվում Հայ Եկեղեցու ու ժողովրդի պատմությունը և ընդալնվում է Հայ Եկեղեցական ժառանգության ուսումնասիրությունը, առանց որի հնարավոր չէ ճանաչել հայոց մշակույթը ու ընկալել նրա իմաստն ու նպատակը:

Այս առումով Մենք առանձնակիորեն կարևորում ենք Եկեղեցու և գիտական հաստատությունների սերտ համագործակցությունը, որի արդահայությունն են հայագիտական

ուսումնասիրությունների հրապարակումը մեր Եկեղեցու կողմից, ինչպես նաև՝ մեր հոգևորականաց մասնակցությունը Հայաստանի գիտա-ուսումնական կյանքին: Կարևորում ենք մեր Եկեղեցու դերը նաև հայաստանյան և արտերկրի գիտնականների աշխատանքների համակարգման և գիտական տեղեկատվության փոխանակման հարցում: Նման փորձառություն արդեն իսկ ունենք Հայաստանում քրիստոնեության պեղական կրոն հռչակման 1700-ամյակի հանդիսությունների շրջագծում վերջին տարիներին իրականացված տարբեր միջոցառումներով:

Գիտության սիրելի նվիրյալներ, Հայաստանի նորօրյա ազատ կյանքով զարգացման նոր հեռաստաններ են բացվել հայագիտության համար: Ձեր համերաշխ գործակցությամբ իրենց պատասխաններն են գտնելու վիճելի բազմաթիվ հարցեր, ասաց են քաշվելու և լուսաբանվելու նոր հարցադրումներ, փոխվելու են հայ ժողովրդի արդար դատին ամենավտանձին պետությանց ժամանակավորեալ մրայնությունները, որոնք այսօր այլևս հուզում են ոչ միայն հայ իրականությունը: Ձեր ուսումնասիրությունները, գնահատականներն ու եզրակացությունները օգնելու են ընդամաք նկնելու արդի հայ կյանքի հրամայականներին և գտնելու աղյուսավեր կարգավորումներ՝ ի շինություն ազգային մեր կյանքի և ի գորացում մեր Հայրենիքի:

Վերստին հանուն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ողջումում ենք ձեզ գիտաժողովի բացման առիթով և բարի ընթացք մաղթում ժողովի աշխատանքներին: Առ Աստված աղոթքով հայցում ենք, որ այն նոր բայլ դատնա հայագիտության առաջագնաց ճանապարհին: Թող Տերը միշտ շնորհի մեզ պահպանի ձեզ՝ պարգևելով տեղեղծագործական ավյուն և գիտական նորանոր ձեռքբերումներ: Ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուսումնական տարվա սկսման առիթով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում կրթության ասպարեզի սպասավորներին և ուսումնական հաստատությունների սաներին:

Մեր ժողովուրդը դարերով ապրել է գիտելիքի ու դպրության հանդեպ սերը հոգում, պահպանել է այն հակառակ ամեն փորձության և ավանդել է մեզ իբրև թանկ ժառանգություն: Այսօր Մեր աղոթքն է, որ նոր հույսերով սկսվող ուսումնական տարին լեցուն լինի ուսումնալսելիք ոգով, չնվազող ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ, որպեսզի գիտելիքն ու ճանաչողությունը, հոգևոր-բարոյական արժեքները միշտ մնան մեր կյանքի անբաժան մասն ու պտուղներ տան առաջ ու բարի:

Կրթության բնագավառի սիրելի նվիրյալներ և սիրասուն սաներ, մաղթում ենք, որ հոգով ու մտքով գորացած անցնեք դեպի իմացության լույս առաջնորդող ձեր միասնական ճանապարհը, և թող Բարձրյալ Տերն օրհնի ձեր ջանքերն ու բարի ընթացքը՝ հանուն մեր Հայրենիքի վաղվա նոր օրվա և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավերժ շինության ու սլաշառության:

Թող ամենառաջ շնորհներն Աստծո ու սերն անսահման լինեն ձեզ հետ ու բոլորի. ամեն:

Ս. Էջմիածին,

1 սեպտեմբերի 2003 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա պանծալի խորհրդով շնորհավորում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ի սփյուռք աշխարհի համայն մեր ժողովրդին:

Միևնույն ժողովուրդ հայոց, Բարձրալի ողորմությամբ խաղաղ երկնքի ներքո գտնում ենք հայրենի մեր պետականության վերականգնման տասներկուրորդ տարեդարձը: Այսօր օրհնում ենք սևայտնմբեր 21-ի այն ավերաբեր օրը, երբ մեր ժողովուրդը միասնաբար ընդունեց ազատ ապրելու իր իրավունքը:

Արդարև, ազատ է մեր Հայրենիքը հայրենյաց սուրբ արմըներով ապրելու, իր վաղվա նոր օրը կառուցելու, ազատ է՝ աշխարհասփյուռ իր զավակներին հայրենի տան հարկի ներքո խնդությամբ ընդունելու, ազատ է՝ իր սրբեղծագործ ոգու արգասիքները բերելու մոլորությունների ու պետությունների բարեկամությանն ու համագործակցությանը: Հավատարիմ մնանք մեր ընտրությանը, լինենք աստվածապարզն մեր երկրի տերն ու լսարի տնայնապետը մեր գործերով, մեր սիրով ու նվիրումով արդյունավորենք նրա ամեն օրը:

Փա՛ռք Հայաստանի ազատությանն իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին:

Փա՛ռք ազատ Հայաստանի նոր կյանքը կառուցող աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Իջման Սուրբ Սևդանի սաջև աղոթում ենք Բարձրալիին, որ Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո միշտ խաղաղ պայծի մեր Հայրենիքը և առաջնորդի ղեպի շինություն ու բարություն:

Շնորհք Տեսնեմ մերոյ Յիսուսի Զրիստոսի հոյգին ընդ մեզ և ընդ ունենեսեան, ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,

21 սեպտեմբերի 2003 թ.



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԱՆ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ԵՎ ՔԱՐԵՆ
ՏՅՈՒԼԿԵՐՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ԳԱՌՆԻԿ ԵՒ ՔԱՐԵՆ ՏԻԼԿԵՐԵԱՆՆԵՐ,
ՈՐ Ի ՄԵԹՐՕ ՈՒԵՍԹ, ԱՄՆ**

Համայն հայության Սրբության Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական ջերմ ողջոյն եւ օրհնութիւն Ձեզ՝ մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներից:

Սիրելի Տէր եւ Տիկին Տիւկերեաններ, ԱՄՆ հայոց Արևելեան թեմի առաջնորդ Գևորգ Նորի Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն գործունէութեան մասին, որ Բարձրեայի ողորմութեամբ արդիւնաւորուած է բազմաթիւ իրազործումներով, որոնք, յիշաւի, հոգեւոր անանց արժէքներով եւ ազգի գօրացման ու բարգաւաճման տեսիլքով ապրող Զրիստոսասէր հայորդիներից դարձնում են Աստուծոյ արժանաւոր զաւակներ:

Գովելի է Ձեր վաստակը առաւելաբար Մեթրօ Ուեսթում եկեղեցու ձեռքբերման եւ վերանորոգման, ինչպէս նաեւ ԱՄՆ հայոց Արևելեան Տիրախնամ թեմի՝ սեփական ճամբար տնենալու ծրագրի կեանքի կոչման գործում: Այսօր, շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի, վերանորոգեալ եւ նորափնտր զարդարեալ այս եկեղեցին իր շնորհաբաշխ դոներն է բացում եաւարաւոր Մեր զաւակների առջեւ՝ արժա-



նազնելով նրանց աստիճանային օրինաբան և նպաստելով Մերթո Ուեսթի նորակազմ համայնքի ազգային-եկեղեցական կեանքի անխաթար պահպանմանն ու զօրացմանը:

Միրելի Տեր և Տիկին Տիվկերեաններ,

Ձեր ծառայությանը ու վաստակի ամենաբարձր գնահատանքով՝ գոհունակ հոգով ընդ-
առաջում ենք բարեջան Ձեր Առաջնորդի ազնի խնդրանքին և Հայրապետական այսու
Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատույժ բարձրագույն շքանշանը:

Հաւատում ենք, որ նույն յանձնառությամբ ու նուիրումով պիտի շարունակէք եկեղեցա-
նուէր Ձեր ծառայութիւնը աստիճանային մեր Եկեղեցուն և հաւատաւոր ժողովրդին:

Աղօթում ենք, որ Ամենադուր Տէրն Իր ամենագոր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու
պահպանի Ձեզ և Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արագահաս բարեխօսությամբ պարգեւի
բաջատող կեանքի արեւշար փարիներ, գործոց յարանորոգ յաջողութիւններ և ամենայն
բարիք:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Բրիւարոսի եղիցին ընդ ձեզ և ընդ տաննե-
սեան տանն:*

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 11-և Մեպարեմբերի

յամի Տեառն 2003 ի ի թուին հայոց ՌՆԾԲ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 186

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՔԵՐՈՒ ԲՈՅԱԶՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱՎ ՈՐԳԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՔԵՐՈՒ ԲՈՅԱԶՅԱՆ,
ՈՐ Ի ՆԱԼԷՊ, ՄԻՐԻԱ**

Նամայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնությունն ու Նայրական սերն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ, որ զօրակից էք Մայր Նայրենիքում ծաւալուող եկեղեցաշէն ծրագրերին:

Գոհութիւն եւ փառք ենք վերառաքում առ Բարձրեալ Տէրը, որ ազգս հայոց օրհնուած է բազում նուիրեալ որդիներով, ովքեր աստուածայարգել իրենց կեանքն սրժեւորում են բարեգործութեամբ:

Նայրապետիս համար ուրախալի է, որ Դուք, կրելով Ձեր հոգում առ հայրենեաց սրբութիւնները Ձեր ազնիւ ծնողաց սերն ու հաւատարմութիւնը, ի պայծառութիւն Նայաստանեայց Եկեղեցւոյ Ձեր արդար վաստակից մեծաձեռն նուիրատուութիւններ էք կատարում մասնակցութիւն բերելով եկեղեցական մեր կառոյցների բարեգարդման աշխատանքներին: Այսօր, շնորհիւ Ձեր բարի յանձնառութեան, զեղեցկահիւս գորգերով վայելչօրէն զարդարուած են Վեհարանիս հանդիսութեանց սրահը եւ Նայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հոգակման 1700-ամեակի խորհրդանիշը հանդիսացող քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին: Գոհունակութիւն է նաեւ Մեզ համար, որ Դուք, ի սէր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ի վայելումն նրա զինուորեալ միաբանութեան, նուիրաբերեցիք եկեղեցական զգեստի հայառն ու շքեղ գործուածքներ:

Յարգարժան Տիար Բոյաջեան,

Ձեր հաւատարմոր ընթացքի եւ մեր Եկեղեցւոյն մատուցած ծառայութիւնների բարձր գնահատանքով՝ Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պարտույ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք նոյն քաջեղանդությամբ շարունակելու էք Ձեր ազգաշեն ու եկեղեցանուէր գործունէութիւնը՝ յաւերժացնելով Ձեր անուը մեր Սուրբ Եկեղեցու երախտաւորների շարքում:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին քաջատուջ կեանքի արեւշաք ու երջանիկ բազում օրեր եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեակս ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Մեպրեմբերի
ի թուին Տեառն 2003 եւ ի թուին հայոց ԲՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 190

ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց 'աթոռ-դիկոսի սրբապատ կոնդակով

«Ս. Սահունկ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել են.

Հրայր Ռիչարդ Տեքմեճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ազապի Նասիմյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով.

Աննա Գուլպաշյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Լճերի Սելվինազյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Կիրակոս Գույումճյան (Քուվեյթ)

Հասմիկ Բաեի Հանեսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրնության գիր է տրվել.

Չքավորաց օժանդակության կոմիտեին (Իրաքի հայոց թեմ)

Հակոբ Գևաճյան (Իրաքի հայոց թեմ)

Զենոբիա Մկրտիչյան (Իրաքի հայոց թեմ)

Նյու Յորքի հայոց Ծերանոցին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Ավագության պատիվ է տրվել.

Գևորգ քեն. Առաքելյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Արթուր քեն. Սմբատյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Արշակ քեն. խաչատուրյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Միսիկ քեն. Մխայան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Մուշեղ քեն. Թաշճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Վարդան քեն. Գասպարյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Մեսրոպ քեն. Սարաֆյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

«Ս. ՍԱՆԿԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՀՔԱՆԶԱՆՈՎ.

ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՆՏ ԳԱՎ ՆԱԽԱԳԱՏ

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեպրեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ, Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան շնորհվեց ՆՏ Գիպությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանին:

Հանդիսությունը բացեց ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահն արքեպիս. Աճեմյանը՝ բարձր գնահատելով Ֆադեյ Սարգսյանի հայրենասեր գործունեությունը:

«Էջ Միածինն ի Հօրե՝ շարականի երգեցողության ներքո բերվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբաբառ կոնդակը, որն ընթերցեց Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանը: Հայրապետական կոնդակում մասնավորաբար ասվում է.

«Առ Հայրենին որդիական Ձեր սերն ու անյոզնաբեկ ջանքերը բազում բարի պարունեն են Կոստյ մեր ժողովրդի կեանքում: Ձեր անմիջական ղեկավարությամբ ձեռք բերուած գիտաբեխնիկական նուաճումները լայն կիրառություն են գտել Կարբեր ասպարեզներում՝ ընդգրկելով արտադրութեան ու պաշտպանութեան, կառավարման ու գիտաեւրագութեան ոլորտներում: Վարելով վարչական պատասխանաբար պաշտօններ եւ աւելի ջան մէկ Կրաննամակ ղեկավարելով Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը, Դուք մնծապէս նպաստել էք մեր երկրի Կրնեսական առաջընթացին, յարկապէս՝ Հայաստանի արդիւնաբերութեան վերակառուցմանն ու հնրետղական գարգացմանը, կրթութեան ու մշակութային կեանքի գօրացմանը:


Մեծապէս ուրախ ենք, յարգարժան արն Սարգսեան, որ այսօր, որպէս ՆՏ Գիպութիւնների Ազգային Ակադեմիայի Պրեզիդենտ, աննուագ նոյն եռանդով ու նախանձախնդրութեամբ եւ Ձեր հարուստ փորձառութեամբ ծառայում էք հայրենի գիտական մարքի առաջընթացին: Ձեր նախագահութեամբ Ազգային Ակադեմիան յաջողութեամբ շարունակում է իր շնորհակալ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ բարձր պահելով հայ գիպութեան վարկն ու համարումը» (Կրնս «Էջմիածին», Է, էջ 7):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, ի գնահատություն Կրար Ֆ. Սարգսյանի՝ Հայրենիքին ու ժողովրդին մարուցած ծառայությունների ու վաստակի, Հայոց Հայրապետը ՆՏ ԳԱՎ նախագահին պարգևատրեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Շնորհակալություն հայրենելով Նորին Սրբությանն այդ բարձր պատվի համար, Ֆադեյ Սարգսյանն իր խոսքում նշեց. «Մեր Եկեղեցին ամբողջ պատմության ընթացքում հովանա-



ԳԻՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԻՏՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԻՏՈՒՆՆԵՐԻ





ՀԱԳԱՐԱՅԻՆ ՍԵՐԱՓԱՆՆԸ

վորն է եղել մեր գիտության, կրթության ու մշակույթի: Եվ այսօր ամեն մեր ունեցածով մենք պարտական ենք Հայ Առաքելական Ս. Եկեղեցուն»:

Այնուհետև իր օրհնության խոսքն ասաց Հայոց Հայրապետը: «Հավանաբար, երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետն ինքը պիտի ցանկանար շնորհել այս շքանշանը մեծարգո տիրար Ֆադեյ Սարգսյանին՝ մեր ժողովրդին ու Եկեղեցուն իր բերած ծառայության դիմաց: Փառք և գոհություն եմ մատուցում, որովհետև սափթն ունեմ Վազգեն Ա Հայրապետի օրհնությունն էլ իմ հոգու ջերմ զգացումներին շաղախած իրականացնել այս պարգևի արժանությունը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով ակադ. Ֆադեյ Սարգսյանին ծննդյան 80-րդ տարեդարձի առիթով և հղելով իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար տիկ. Թամարա Պողոսյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, ՀՀ ԳԱԱ անդամներ, գիտության ու մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության գեղարվեստական մասում բարձրարվեստ կատարումներով հանդես եկավ Հայաստանի կամերային նվագախումբը՝ ղեկավարությամբ Արամ Ղարաբեկյանի:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՆՇՎԵՅ Տ. ՀՈՒՄԻԿ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ

Մեպոքեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կշվեց Ս. Էջմիածնի ավագագույն միաբան Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի եղևոր ծառայության 50-ամյակը:

Հինգ տարեկան հասակից որբանալով՝ եա մեծացել և կրթվել է նախ Լիբանանի «Թրոչ-նոց բույն», ապա՝ Երուսաղեմի որբանոցներում: 1947 թ. ներգաղթել է Մայր Հայրենիք, իսկ 1953 թ. ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: Եվ ահա 50 տարի է, ինչ Հուսիկ Սրբազանը նախանձախնդիր ծառայում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ծառ հավատացյալներ կարող են հիշել, թե ինչպես արդեն 83-ամյա Սրբազանը, որ շուրջ 40 տարիներ Մայրավանքում վարել է փոխտեսարարապետի, ապա՝ լուսարարապետի (1972 թվականից) պաշտոնները, մշտապես դրսևորել է նախանձախնդրություն եկեղեցական տարրադրությունները պարզաճ կազմակերպելու ու Մայր Աթոռի շրջափակում կարգ ու կանոնի հաստատման գործում, և այսօր էլ իր մասնակցությունն է բերում Ս. Էջմիածնի միաբանական կյանքին:

Հանդիսության ընթացքում Սրբազան Հորը շնորհավորանքի ու գնահատանքի խոսքեր ուղղեցին Վեհափառ Հայրապետը և Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը:

«Խորհրդային տարիներին, երբ մեր Եկեղեցին ապրում էր ծանր օրեր, միայն խորը հավատքի տեր մարդիկ էին իրենց բայերն ուղղում դեպի Եկեղեցի: Եվ ահա Հուսիկ Սրբազանն այն երիտասարդներից մեկն է եղել, ով, ի հեճուկս քիրող կարգերի, համարձակորեն մտել է Եկեղեցի և 50 տարի նվիրումով ու ջանասիրությամբ իր ծառայությունը մատուցել Աստծուն, Եկեղեցուն և ազգին», - բարձր գնահատելով Սրբազան Հոր նվիրյալ ծառայությունը, ասաց Վեհափառ Հայրապետը:

Ի գնահատումն մատուցած անսակարկ այս ծառայությամբ՝ Վեհափառ Հայրապետը Հուսիկ Սրբազանին շնորհեց նպիսկապոսական պանակե:

Հանդիսությանը ներկա էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռի միաբաններ՝ նպիսկապոսներ, վարդապետներ, տարկավագներ:

ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՆԱԼԵՊԱՏԱՅ ԲԱՐԵՐԱՐ ՔԵՐՈՒ ԲՈՅԱԶՅԱՆԻՆ

Մեկսկսման 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը հայեպահայ բարերար Ջերոմ Բոյաջյանին շնորհեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան:

Հայ Եկեղեցու բարձրագույն պարզև հանձնելով պրն Բոյաջյանին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց բարերարի նվիրվածությունը Մայր Եկեղեցուն ու Ս. Էջմիածնին:

«Գոհություն եւ փառք ենք վերառաքում առ Բարձրյալ Տերը, որ ազգս հայոց օրհնված է բազում նվիրյալ որդիներով, ովքեր աստվածապարզ իրենց կյանքն արժնվորում են բարեգործությամբ:

Հայրապետիս համար ուրախալի է, որ Դուք, կրելով Ձեր հոգում առ հայրենյաց սրբությունները Ձեր ազնիվ ծնողաց սերն ու հավատարմությունը, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո Ձեր արդար վաստակից մեծածնոն նվիրատվություններ եք կատարում մասնակցություն բերելով եկեղեցական մեր կառույցների բարեգարդման աշխատանքներին»,- ասված է Հայրապետական Կոնդակում (տնն էջ 19):

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Ս. Էջմիածնի միաբան հայրեր, երիտեր:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԾ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 սեպտեմբերի 2003 թ.)

«Զի փաճար Աստուծոյ սուրբ Էոր էք դուք»:
(Ա Կորնթ. Գ 17)

«Ո՛չ գիտէք եթէ փաճար էք Աստուծոյ, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ. եթէ ոք գրաւաւոր Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած, զի փաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք» (Ա Կորնթ. Գ 16-17):

Պօղոս առաքեալի հոգեւորաբան այս պատգամին ծայն փոռող հայ քրիստոնեայի կեանքին մէջ կը վերապրի Սուրբ Էջմիածնի խորհուրդը ահեղ գործութեամբ, երբ նորովի հաւաքքի գիտակցութեամբ մը լեցուած Սուրբ Էջմիածինը իր պատմութեամբ ու փեսիլքով կը խօսի միաբնակցութեամբ այս փաճարի պատերուն մէջէն, վկայակոչելով Առաքելայինքու նախապաշտօնը, որպէս հիմն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, լուսազարդելով մեր հոգեւոր կեանքը լուսատուրեան հաւաքով, մեր նախնեաց լոյսի գործերով նուիրականացած կեանքը դարձնելով ճշմարիտ կեանքի ճանապարհ մեր ուրբերուն առջեւ, մեր իմաստաւորեալ կեանքը դարձնելով ոգեղէն՝ այն ներկայութեան, որը պիտի խորհրդանշէ Ս. Էջմիածնի վերածնունդը՝ նոր եւ գալիք ժամանակներու մէջ ապրող ու սպեղծագործող հաւաքականութեան համար, որպէս փաճար Աստուծոյ:

Ներսիսեան, Պօղոս առաքեալի խօսքերով հասկանալով այս պատգամը ուղղուած է բոլորիս. «Միթէ չէ՞ք գիտակցիր, որ փաճար Աստուծոյ էք եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ»: Եւ եթէ մեզմէ մէկը իր հոգեւոր կեանքը կը կտրէ Ս. Էջմիածնէն, ուրեմն ապականած կըլլայ Աստուծոյ փաճարը, որը նուիրականացած է Միածնի Որդւոյն իջմամբ մեր հոգիներուն մէջ թթխմորած հոգեւոր փաճարին մէջ, որուն սնունդ են փռուած մեր նախնիք:

Այսօր մեր Լուսնան մէջ ներառած ենք այն քաջ համոզումն ու հաւաքքի գիտակցութիւնը, որ Ս. Էջմիածինը, իր 1700-ամեայ հիմնարկութեամբ, դարձած է մեր ինքնութիւնը բնորոշող ու հասկանալի յանրակրթութիւնը, որուն առջեւ սերունդներ անհամար իրենց կեանքը կամրջած են Արարիչն Աստուծոյ հետ եւ Անով նոր իմաստ են հաղորդած իրենց Աստուածապարգիւ կեանքին, երբ իրենց հոգիներուն մէջ մնայուն արձագանքի են վերածած Զրիստոսի խօսքը. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք»:

Զարեղէն այս Տաճարի պատգամաբեր ներկայութեան հիմնարկէքի 1700-ամեակի փոնակապարտութեան փարին է 2003 թուականը եւ խրախուսիչ է ու ներշնչող այն, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնարկէքի 1700-ամեակի փոնակապարտութեանց շարքին ամենաներշնչող երեւոյթներէն մէկը եղաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներու հերթաբար Ուխտի Պատարագներու մատուցումը Մայր Խորանին վրայ: Սա պահուն, Ուխտի մեր Պատարագը մատուցելով լուսատուրեանապատ այս սուրբ Տաճարի Մայր Խորա-

նին վրայ, հաւաքքի մեր կեանքը նոր ծնունդ կ'ապրի Իջման Ս. Սեղանին իջած Լուսաւորչի կանթեղէն եւ ներքնապէս կը գգանք, որ ծառայութեան պիտի վերադառնանք հոգեւորապէս վերածնուած եւ այն քաջ գիտակցութեամբ, որ մեր աղօթքի կեանքն ու հաւաքքի գգացողութիւնը՝ ապահովելով զօրակցութիւնը թեմի հոգեւորականաց, պատկան վարչական մարմիններու ու հաւաքացելոց, խանդավառութեան նոր ալիք ու շունչ պիտի բերէ Հոսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս, ուր այսօր կապրին աւելի քան վեց հարիւր հազար հայեր, եւ որոնք հոգեւոր առաջնորդի պատասխանատու պաշտօնին կանչուեցանք Աստուծոյ կամբով մայիս 2003 թուականի սկզբնաւորութեան:

Միեւնի բարեպաշտ հաւաքացեալներ, առաջին հերթին պարզ խորհրդածութեամբ մը կ'իզեցնէ ձեզի հետ բաժնել մեր հեռանկարներն այս ուխտագնացութեան հետ կապուած: Բոլորիս համար պարզ է ու յստակ, որ ուխտի գաղափարը իր սկզբնաւորումը կ'առնէ: Հին Ուխտէն, երբ Աբրահամ, Մովսէս, Օրենքի վարդապետներ ու մարգարէներ դաշինք կը կնքէին Աստուծոյ հետ, հաւաքարմօրէն հետեւելու Աստուծոյ պատուիրաններուն եւ իրենց վստահուած ժողովուրդը առաջնորդելու Աստուծոյ ճանապարհէն: Այսօր Ս. Էջմիածին ուխտի այցելութեան նոյնպիսի դաշինք մը կը վերահաստատուի Արեւմտեան թեմէն ուխտաւորաբար ժամանող հաւաքացելոց կեանքին մէջ, եւ սակայն, մեզի համար այս ուխտագնացութիւնը կ'իմաստաւորուի, երբ երեք աստիճանաւորումով նոր գարգացում կը ստանայ ուխտագնացութիւնը մեր անհատական թէ հաւաքական կեանքին մէջ:

Առաջին աստիճանաւորումը ուխտաւորի կեանքին մէջ սա է, որ ուխտաւորի մեր կեանքը, աղօթքի մեր կեանքը որպէս թթխմոր իրմով խմորէ մեզի սպասող թեմի հաւաքացելոց կեանքը: Ուրիշ խօսքով, երբ կը վերադառնանք թէմ, ուխտաւորներու հոգու ու բարոյական պարպը պիտի ըլլայ դառնալու վկայախօսներն ու պատգամախօսները Ս. Էջմիածնի մէջ խմորուող եւ Ս. Էջմիածնի ճառագայթող հոգեւոր վերածնունդին: Մեր խօսքը պիտի ըլլայ սրտաշարժ ու հոգեցունց, որպէսզի մեր ուխտագնացութիւնը դառնայ հրաւեր ու կանչ դէպի Սրբութիւն Սրբոց Էջմիածինը:

Երկրորդ աստիճանաւորումը ուխտաւորի կեանքին մէջ այն է, որ անհատապէս թէ հաւաքականօրէն յարաբերենք մեր ուխտաւորական կեանքին մէջ, մեր աղօթքի կեանքին մէջ, քանզի ուխտագնացութեան ամբողջական իմաստը յարաբերութեան մէջ է, երբ հոգեւոր կապը աւելի շեշտուած կը գգանք Աթոռին հետ:

Երրորդ եւ ամենաւեցեալ աստիճանաւորումը ուխտաւորի կեանքին մէջ այն է, երբ աղօթքը կը մարմնաւորուի հաւաքքի երեւելի գործերով, մասնակցութեամբ այն սրբազան ու նուիրական առաքելութեան, որը իր սկիզբը կ'առնէ այն սուրբ հողէն, որը մեր քրիստոնէական հաւաքքին քուրան է, եւ այնուհետեւ կը ճիւղատրուի եւ կը տարածուի աշխարհի չորս ծագերուն կայք հաստատարած մեր համայնքներէն ներս:

Ուխտաւորի կեանքի այս երեք աստիճանաւորումներուն համար ալ Աւետարանը իր խօսքն ու պատգամը ունի:

Առաջինի մասին պարտք ենք վերլիշել Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքը. «Մէջ գիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ» (Ա Կորնթ. Ե 6, 4-աղապ. Ե 9):

Երկրորդ աստիճանաւորումի համար պարտք ենք վերապրեցնել մեր հոգեւոր Լուսեան մէջ Զրիստոսի սա խօսքը. «Թամենայն ժամ յաղթս կացէք եւ մի՛ ծանծրանայցէք» (հմմտ. Ղուկ. ԺԸ 1):

**Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԿԻՆ**

(14 սեպտեմբերի 2003 թ.)

*«Ուխտաւ դիք եւ կապարեցէք Տեստի
Աւրումոյ մկրտյ ամենեկեան որ շուրջ էր գնովս»:
(Սաղմ. ՏԵ 12)*

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Սեհափառ Տէր եւ շնորհազարդ Հայրապետ.

Հաւաքացեալ եւ սիրեցեալ ժողովուրդ մեր,

Եգիպտահայ վարժարաններու նախկին շրջանաւարտները գեղեցիկ սովորութիւն ունին երկու տարի անգամ մը աշխարհի տարբեր ցամաքամասերէն մեկուն երկրի մը մէջ հաւաք կազմակերպելու եւ գեղարուեստական ձեռնարկներով գոյացած զուտաբոլ Հայաստանի Հանրապետութեան գանազան շրջաններէն մեկուն մէջ դպրոցի մը նորոգութեան, կահույքի գրնման կամ խոնարհած եկեղեցիի մը նորոգութեան հաւակացնելու: Այսպէս, անոնք հաւաքներ կազմակերպած են ի Կալիֆոռնիա, ի Կանադա, լիւստրալիա, յեգիպտոս եւ այս տարի հաւաքաւոր մեր Հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ: Եւ իրենց այս հաւաքը գեղեցիկ զուգադիսութեամբ կը համընկնի Մայր Տաճարի նաւակաւորի 17-րդ դարադարձի յօբելինական հանդիսութիւններու եւ փոսակաւարտութեանց: Արդարեւ, Հայոց պետականօրէն բրիտանացումն ետքը առաջին կառուցուած Տաճարին ուխտի եկած էք հոծ բազմութեամբ: Թող Աստուած ձեր ուխտը ընդունելի ընէ, ամեն:

Այս սրբավայրը հայ ժողովուրդի քաղաքակրթութեան, հայ ժողովուրդի հոգևոր գարգացման հանդիսավայրն է: Մեր մարտնագիրներէն Ազաթանգեղոս կը պատմէ, թէ ինչպէս երկիւնքը բացուեցաւ եւ մեր հաւաքի Հայրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, քնսաւ Միաձինը, որ երկինքէն իջաւ Արարապետան դաշտին վրայ, ոսկի մուրճով գետինը բախեց եւ հրեղէն սիւններ փռնուեցին: Պատմիչը այսպէս կը նկարագրէ. «Եւ սիւնն հրեղէն կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովեաց ամենայն ժողովուրդն ի մի միաբանութիւն հաւաքոց ի ներքոյ թնոցն իւրոց եւ փեղին այն լիցի տաճար Աստուծոյ եւ փուն լազօթից խնդրուածոց ամենայն հաւատացեցոց, եւ արժոյ քահանայապետութեան, իսկ կամարքն, որ սեանց անդի ի միմեանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ»:

Յետ այնու կրեանք ըսել, թէ Հայաստանեայց Եկեղեցիի շոշափելի արտայայտութիւնը եղաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայոց Հայրապետութիւնը, եւ Հայրապետը ինքը այլևս անձ չէ, այլ Հայրապետութեան խորհրդանիշը: Ս. Էջմիածինը հայոց զգալուն սիրտն է, ուրովհետեւ 17 դար ապրած է ժողովուրդին հետ՝ անոր փխրութեան հետ տրտմակից եւ ուրախութեան մասնակից ըլլալով: Հայաստանեայց Եկեղեցւոյ կենտրոնը, ուրեմն, Քրիստոսի իջման առեքարանական կամ փեղեկեղանական ճշմարտութեան հայկական ընկալումն է,

տաներ, փայտին միջոցաւ փրկուեցաւ: Այդ Հին Կտակարանն էր: Նոր Կտակարանին մէջ մենք խաչեալ Քրիստոսի խաչափայտին կը նայինք եւ մեր մեղքերէն կը փրկուինք:

Նախամարդը, նախածնողը դրախտին մէջ ծառին, փայտին պտուղէն կերան եւ մահուամբ պատժուեցան, արտաքսուեցան դրախտէն: Յետոյ, Աստուծոյ Որդւոյն համեղաճաշակ մարմինը գամուելով փայտին վրայ, մենք այդ մարմինը եւ արիւնը ճաշակելով մեր մեղքերէն կը սրբուինք եւ յաւիտենութեան ժառանգորդ կը դառնանք: Այս է խաչին խորհուրդը, խաչին իմաստը: Նաչը Եկեղեցւոյ փառքն է, առաքելայնորու պարծանքը, մարտիրոսներու պսակը, թագաւորներու յաղթութիւնը, վարդապետներու ողջախոհութիւնը, հիւանդներու բժշկութիւնը, ճամփորդներու առաջնորդը: Նաչը փրկութիւնն է բոլորին:

Այսօր, սիրելիներ, այս Սուրբ Տաճարին մէջ, որուն կառուցման 1700-ամեակի յոբելինական հանդիսութիւնն է, եկած ենք գունդագունդ՝ բանալու մեր սրտերը, աղևոսելու երկնաւոր մեր Հօր եւ ըսելու. «Ո՛վ Տէր Աստուած հարցն մերոց, Սուրբ եւ Անմահ Պապարագին միջնորդութեամբ եւ բարեխօսութեամբ Ս. Կոյս Աստուածածնին եւ անբարբառ բարեխօս Ս. Նաչին, ընդունէ մեր աղօթքները եւ անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ի շինութեան եւ ի շէնութեան, եւ անոր գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին պարգեւէ երկար կեանք, առողջութիւն եւ Իր գործոց հաջողութիւն:

Ո՛վ Տէր, մեր աղաչանքն է, որպէսզի մեր հարազատ պետութեան այրերը շնորհազարդես՝ յօգուտ մեր ժողովուրդի բարօրութեան եւ մեր երկրին յառաջդիմութեան, որպէսզի ամենքս ալ, մեր ուխտը կապարելով, կարենանք ինչպէս այսօր, միշտ եւ յաւիտեան փառատրել գանուն Ամենասուրբ Երրորդութեանդ, որ է օրհնեալ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն»:

Տ. ԱՐՄԱՇ ԱՐԵՂԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄՈՒԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 սեպտեմբերի 2003 թ.)

*«Զորության սուրբ խաչի քո Ջրիստոս,
որ կանգնեցիր ի փրկության աշխարհի»:
(Շարականոց, Վաղարշապատ, 1888, էջ 370)*

«Յանուն Հոր և Որդույ և Տոգույն Սրբոյ, ամեն»:

Սիրելի հաւատացեալներ,

Ահա այսպէս կը նկարագրէ շարականագիր Հայրապետը Ս. Խաչի խորհուրդը այս շաբաթակնի մէջ, որ նուիրուած է Ս. Խաչի փօնին: Այս օրերուն Հայաստանեայց Եկեղեցին կը փօնախմբէ հինգ տաղաւարներէն վերջին մեծ տաղաւարը՝ Ս. Խաչի փօնը, Ս. Խաչվերացը, և այս փօնին յարկ է, որ ամէն մէկ հաւատացեալ գիտակցի, թէ ինչ գործութիւն ունի և ինչ նշանակութիւն ունի Խաչը մեզ համար, մեր կեանքի մէջ:

Ինչ է Խաչը: Խաչն ինքնին գրկանք է, խաչն ինքնին տառապանք է, խաչն ինքնին չարքանք է, խաչն ինքնին մահ է: Բայց մենք լինելով յարութեան և փրկութեան որդիներ՝ խաչը մեզ համար եթէ չարքանք է, միաժամանակ սկիզբն է փրկութեան: Ջրիստոս խաչի միջոցաւ մեզի նոր կեանք և նոր փրկութիւն պարգեւեց, և եթէ խաչն ինքնին տառապանք է, ինքնին մահ է, միաժամանակ մեզ համար սկիզբն է յարութեան և նոր կեանքի:

Ահա այս է խորհուրդը Ս. Խաչին յարութեան լոյսով, որ Ջրիստոս պարգեւեց մեզ փրկութիւնը և կեանքը: Բայց մենք ինչպէ՞ն կարող ենք արժանանալ այս փրկութեան, բայց մենք ինչպէ՞ն կարող ենք արժանի դառնալ այն պարգեւին, որ շնորհեց մեզ մեր Տէրը՝ Յիսուս Ջրիստոս, Իր յարութեամբ: Սրբերի կենցաղը, մեր հայրերի վարքը մեզ սովորեցնում է, որ մենք կարող ենք հասնել այն փրկութեան՝ միշտ հաղորդակցութեան մէջ մնալով Աստուծոյ և միշտ հաղորդակցութեան մէջ մնալով մեր Տիրոջ՝ Յիսուս Ջրիստոսի հետ: Եւ դա կարող ենք կատարել միմիայն աղօթքով: Եւ եթէ իբրեւ հաւատացեալ, իբրեւ քրիստոնեայ անհատ միշտ աղօթքի կը կանգնենք, երբեմն կարծես չենք գիտակցիր այն գործութիւնն աղօթքի, այն պարգեւն աղօթքի, որ շնորհած է մեզ մեր երկնաւոր Հայրը:

Սուրբ Գիրքի պատմութենէն գիտենք, թէ ինչպէս մարգարեներ, թէ ինչպէս սուրբգրային սուրբեր արժանի են դարձել սրբանալու և կարողացել են շարժել Աստուծոյ գութը, սէրը իրենց աղօթքով: Եւ նոյն անկակալիքով է, որ մենք այսօր կ'աղօթենք, մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Տէրը գթայ և Իր սէրը պարգեւէ մեզի: Բայց այսօր կարծես կ'ապրինք այնպիսի մը դարաշրջանի մէջ, որ շաբաթ կը մտածենք աղօթքի կարիքը չկայ, գիտութիւնը մեզ այնպիսի հնարաւորութիւններ է ընձեռել, այնպիսի նուաճումներ է արձանագրել, որ կարծես աղօթքի պէտք չունինք: Եթէ ուզենանք իբրեւ երկնային թոյններ

ստատոսն, գիտությունն ունի պարասխանը, եթե ուզենանք սուգուն մինչև օվկիանոսի խորքերը, գիտությունն ունի պարասխանը:

Այսօր այն, ինչ մարդկային երազն էր, գիտությունը սպեղծած է պայմաններ անոնց իրականացման, եւ ամեն հարմարութեամբ կ'ապրինք, կը վայելենք գիտութեան այդ նուաճումները եւ այս մեր բոլոր վայելքին հանգստութեան մէջ կարծես կը մոռնանք աղօթքին այն գոտիները, աղօթքին այն հանգստութիւնը: Ամէն բան կրնանք ընել, ամեն սարքաւորում կայ, բայց ոչ մէկ գիտութեան նվաճում, ոչ մէկ գիտնական կրնայ եւ կարող է մեզ պարզաւէլ հոգւոյ հանգստութիւն. մեր խղճի խաղաղութիւն եւ հաղորդակցութիւն Աստուծոյ յետ: Դա կը մնայ միմիայն եւ միմիայն աղօթքի գոտիները: Եւ երբ կ'աղօթենք եւ կը պահանջենք եւ կը խնդրենք յԱստուծմ գթութիւն, մեր հիւանդներու համար առողջութիւն, մեր գործոց համար յաջողութիւն, միշտ այն պաշտօնութիւնը կը ստանանք, թէ կարծես Աստուած մեր աղօթքները չսէր:

Այսօր եթէ բան մը կ'ուզենք ընել, բան մը կը փափագինք ընել, գիտությունն այնպիսի պայմաններ սպեղծել է, որ մեր փափագին դիմաց կարող ենք ստանալ պարասխանը վայրկենական արագութեամբ: Եւ նոյն ձեւով կը պահանջենք յԱստուծմ: Վայրկենական առօրեայութեամբ ստանալու այն, ինչ որ կը խնդրենք: Եւ եթէ վայրկենական արագութեամբ չստանանք, կ'սկսինք փափաքել, կ'սկսինք կասկածել, թէ արդեօք Աստուած կը լսէ՝ մեր աղօթքը, թէ՛ ոչ:

Մէջ մը մտաբերեցէք ձեր անցեալը, այն ուրախ ժամերը, այն ուրախ օրերը, այն յաջող, գութաբաշխ, ցնծալի օրերը եւ պահերը եւ մէջ մը մտածեցէք, թէ Աստուած ինչ օրեր, շնորհալի օրեր է պարգեւած մեզի, որոնց մասին մենք երբեք չենք ալ աղօթած, բայց Աստուած պարգեւած է մեզի: Եւ եթէ վայրկենական արագութեամբ չենք կարող ընդունել զայն, Աստուծոյ կամքն է: Վերջ ի վերջոյ «Տէրունական աղօթք»-ի մէջ աղօթում ենք. «Վայր մեր, որ յերկինս ես, ...նեղիցն կամք քոյ» (թող թո կամքը լինի, ոչ թէ մեր կամքը): Եւ եթէ կ'աղօթենք, պէք է ունենանք այն վստահութիւնը, պէք է ունենանք այն հաւատարմութիւնը, որ Աստուած անպայման կը լսէ եւ պիտի լսէ մեր աղօթքները եւ Իր կամքին համաձայն, Իր տնօրէնութեան համաձայն պիտի փայ նսան իր ժամանակին այն, ինչ որ կը խնդրենք եւ խնդրած ենք:

Նոյն խորհուրդն ունի նաեւ խաչը: Եթէ մարդիկ կը մտածէին, թէ խաչով կը վերջանար ամեն ինչ, եթէ մարդիկ կը մտածէին՝ խաչը մահն է եւ աւարտն է, ահա Քրիստոս յարութեան լոյսով, խաչով սկիզբը կը դնէ նոր կեանքի, յարութեան եւ փրկութեան: Եւ այս խաչի խորհուրդին իմաստը կարող ենք ըմբռնել միմիայն աղօթքով եւ Աստուծոյ յետ հաղորդակցութեամբ: Նսաչին գոտիները կարող ենք ըմբռնել եւ մեր մէջ վերիմաստաւորել աղօթքով:

Շարականագիր Վայրապետը կ'ըսէ. «Զօրութիւն սուրբ խաչի քոյ Քրիստոս, որ կանգնեցաւ ի փրկութիւն աշխարհի»: Աղօթքն է, որ մեզ կը հասցնէ այս փրկութեան եւ այս խորհուրդին, աղօթքը հոգևոր այն սնունդն է, որ կեանք կը պարգեւէ մեզի: Նոյն աղօթող անձն ալ իր սրբութիւնը կ'առնէ յԱստուծմ եւ իր աղօթքով կը սրբացնէ ինքզինք, իր շուրջիները, իր մթնոլորտը եւ փիեզերքը: Ահա այս է պարզելը, որ աղօթքով կարող ենք ըմբռնել այն խորհուրդը, խաչին խորհուրդը, որ կը տօնախմբէ այս օրերուն Վայստաւանեայց եւ քրիստոնեայ Եկեղեցին:

Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊԱՒԻՈԶՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱՐԳԻՆ

(21 սեպտեմբերի 2003 թ.)

*«Իջեր յերկնից ի դաշտն Արարատեան
Եւ հրաշակեպոեցեր զԵկեղեցիս Հայաստանայց
Սուրբ Էջմիածին»:*
(Շարակնոց)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Այսօր, կանգնած հայ ժողովրդի հավաքքի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորանի առաջ, իմ մտածումը կերթա այն պահուն և օրվան, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչ իր հավաքքի ամրությամբ և գործությամբ, հակառակ փարիսեերու փանջանքին ու փառապանքին, կարողացավ երկինքն երկիր իջեցնել Միածին Որդին, որպեսզի հիմը դնե, հիմնադրե այս սուրբ եկեղեցին այն հրաշափառությամբ, որ երկինքը երկրին կնայի, այն գեղեցկությամբ, որ Աստված իր սերը ցույց տվեց մարդկության նկատմամբ, այն սիրով ու գոհադության, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր անմեղ հոգին գոհաբերեց մարդկության փրկության համար: Ու այսօր հայ ազդեցը, հայ շարականը կրսե Քրիստոսին, թմ՝ «Իջար երկնքից Արարապյան դաշտին մեջ, որպեսզի հրաշակեպոես Հայաստանայց Եկեղեցին Ս. Էջմիածնի մեջ»:

Արարապյան դաշտն աստվածաշնչական վայր մըն է, ուր Նոյյան Տապանն Արարափի բաժնունքի վրա հանգցել է հեփո՝ Նոյ Նաեապետն իջավ Արարապյան դաշտը և նոր կյանքն է, որ սկսավ, նոր քաղաքակրթություն է, որ սկսավ: Ու ահա դարեր հեփո Միածինն անգամ մը ևս կուգա այս աշխարհը, որպեսզի հիմը դնե այս անգամ նոր փառանի մը, նոր եկեղեցիի մը և ան ալ՝ Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցիին:

Այդ եկեղեցիի կառուցման ժամանակ հայ թագավորը, հայ նախարարը, հայ իշխանուհին ու ազնվականը շինական հայու հեփ իր քրքինքը խառնեց այս փառարի կառուցման մեջ: Քարերը փոխադրվեցան Արարափի բաժնունքն, անոր կողերն հասնելու համար մինչև այս Սրբազան վայրն իր Հին Կրակարանով և Նոր ճշմարտությամբ՝ Հայ Եկեղեցիին համար հավաքքի կենտրոն մը, հավաքքի հիմք մը հաստատվելու համար: Եվ Հայաստանայց Եկեղեցին փարիսեեր շարունակ, դարեր շարունակ ուր ալ գտնված ըլլա՝ անոր գավակներն իրենց աչքերն ուղղած են դեպի Սրբազան այս վայրը՝ Սրբություն Արբոց Սուրբ Էջմիածինը, որպեսզի Լուսավորչի հավաքքն կայծ մը կարողանան առնել և Միածին Որդիին օրհնութենն կարողանան օրհնվիլ իրենց հավաքքի գործը շարունակելու և իրենց ազգային պատկանելությունն ամրացնելու համար:

Այս եկեղեցին միմիայն շենք չէ. այս եկեղեցին հրաշակերտված է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմն, որ ոսկե ուռամբ երկինքն երկիր իջավ անոր հիմը դնելու համար: Ամբողջ մեր պարմության ընթացքին յուրաքանչյուր հայ՝ ըլլա անիկա մեծ անձնավորություն, թե շինական հայորդի, իր ինքնությունը, իր պատկանելությունը, իր հավաքըն ստացավ այս սուրբ փաճարեն:

Ու մենք այսօր, իբրև առաջնորդն Ավստրալիո և Նոր Զելանդիայի, մեր հեպ բերած ենք ուխտավորներու խումբ մը, որոնք աշխարհի հեռավորագույն թեմի մը մաս կկազմեն, սակայն գորավոր կերպով կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Եկեղեցիին: Մեզի հեպ եկած են նաև Ավստրալիո եկեղեցիներեն կաթողիկ. բողոքական և անգլիկան Եկեղեցվո ներկայացուցիչներ, որոնք մեզի հեպ ուխտի եկած են՝ իրենց կապը ձևով մը ամրացնելու Հայ Եկեղեցվո հեպ, ձևով մը փոխադարձ այցելություն փալու այն օրհնության, որ ստացան Ամենայն Հայոց Կաթողիկոսն անցյալ փարվա Նոյեմբերին՝ հովվապետական իր այցելության ժամանակ: Այս այցելությունները պարզ և ձևական չեն: Այս այցելությունները մարդու հոգիին թելերն է, որ կգորացնեն՝ կապելով Հայրենիքին ու Հայ Եկեղեցիին: Ու Հայ Եկեղեցին անցնող 17 դարերու ընթացքին կարողացավ այս շենքն ներս ոգի, գիտակցություն և շունչ փայ, որպեսզի մեր գավակները, աշխարհացրիվ հայորդիները կարողանան նայիլ, փեսնել, ջերմանալ այն հավաքքով, որ մեր հավաքքի նախահայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, ունեցավ ու պարզենց հայ ժողովուրդին:

Քրիստոս իջավ Արարապյան դաշտը: Օրենվեցավ այդ դաշտը և մեր ժողովուրդը, օրենրվեցավ մեր Հայրենիքը: Այսօր, երբ անոր անկախության փասնեկությունորդ փարեղարձն է, որ կպոնենք, ուրախություն, գոհունակություն և երջանկություն ունինք այն պատճառով, որ մեր պարմության ընթացքին բազում նեղություններն հեպ, բազում դժվարություններն հեպո առիթ ունեցանք կրկին, ինչպես նաև Եկեղեցին, նաև ժողովուրդն ազապ և անկախ կյանք մը ապրելու համար: Ու այս ամենը մենք կպարփինք Երկնավոր Հոր Միածին Որդիին, որ իջավ և օրհենց այս սրբազան վայրն ու սրբազան երկիրը, հրաշակերտեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Մարդիկ՝ երազի ու փեսիլքի անձնավորություններ, կարողացան այդ ամենը պաշել, հարստացնել ու բազմացնել՝ ըլլա անիկա ձեռագիր ձևի մեջ, ըլլա անիկա ճարտարապետության ձևի մեջ, ըլլա անիկա երաժշտության ձևի մեջ: Ու անոր պարագային մեր Սրբազան Հայրապետներն իրենց ճակտի քրփները, իրենց կյանքի արևը, աչքին լույսն ընծայեցին եկեղեցին կանգուն պաշելու համար՝ հակառակ բազում դժվարություններուն:

Այսօր ավստրալահայ գաղութն իր ուխտավոր գավակներով և ինչու չէ՞ այն բոլոր գավակներով, որ կգրնվին Ավստրալիո մեջ, կուզան խոնարհելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ, հայրենելու իրենց սերը, իրենց հարգանքը, իրենց ակնածանքը հանդեպ Նորին Սրբության, հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Եկեղեցին կանգուն կմնա և՛ Սրբազան Հայրապետներով, և՛ եկեղեցական դասով ու աշխարհական ժողովուրդով: Եվ մենք այդ հեռավոր ափին վրա նայելով Ս. Էջմիածնին՝ կկարողանանք մեր ճամփան, մեր ուղին գրնել ու առաջնորդվիլ միշտ գիտնալով, թե ճամփաները պիտի ուղղվին դեպի Ս. Էջմիածին, որպեսզի ամեն մեկ հայորդի իր հայկական ոգին, իր քրիստոնեական գիտակցությունն ստանա այս Սրբազան վայրեն, որ Էջման խորան կկոչվի:

Մենք եկած ենք մեր ուխտը կատարելու այս բացառիկ փարվա առիթով, երբ կրոնվի Մայր Տաճարի օծման 1700-ամյա փառեղարմը Ս. Էջմիածնի: Ու կիսնդրենք Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր օրհնությունը միշտ բաշխե իր զավակներուն Հայրենիքի, Արցախի, թե՛ Սփյուռքի մեջ և մանավանդ այս պարագային՝ հեռավոր ափերին գտնվող ավստրալահայ ժողովրդին:

Թող Տերը կանգուն և զորավոր պահե Հայաստանյայց Եկեղեցին, անոր Սրբազան Զահանյապետը՝ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, եկեղեցականաց դասը և ժողովուրդը, որպեսզի հավաքքի խորհրդանիշով կարողանա շարունակել և իր Հայրենիքի ազատությունը և իր Եկեղեցիի ազատությունը ի փառս մեր ժողովրդին, ի փառս մեր Եկեղեցիին. ամեն:

Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒՒՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 սեպտեմբերի 2003 թ.)

«Ցանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօրվա այս Սուրբ և Անմահ Պապարագով մենք, իբրեւ Հայ Եկեղեցի, կրկին պապե-
հոյությունը կունենանք մեր երախտագիտությունը հայրենելու մեր երկնավոր Հոր՝ Իր շնոր-
հած բոլոր բարիքներուն, բոլոր սլարգներուն համար: Մասնավորաբար այսօր ես՝ ուխտի
պապարագիչը այսօրվա, խոնարհ մեկ սպասավորս Հայ Եկեղեցվո, երախտագիտություն
կհայրենեմ Տիրոջ՝ երկնավոր Հոր, որ ինձ պապեհոյությունը կշնորհե՛ գալու. այցելելու, Ա. Պա-
պարագ մաքրուցանելու այն սրբազան Տաճարի մեջ, ուր Իր Միաձինը իջավ 1700 փարիներ
առաջ՝ կառուցանելու, շինելու այս լույսի վառարանը՝ հայոց մայրը հավաքելին:

Հազար-հազար շնորհակալություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.
Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ Մայր Տաճարի հիմնարկության 1700-
ամյակի այս բացառիկ առիթով Իր հայրապետական կոչով մեզ բոլորս՝ Հայ Եկեղեցվո գա-
վակներս, ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, հրավիրած է, որ ուխտի գանք, խոնարհինք,
համբուրենք այս Սուրբ Սեղանը, ուր 1700 փարիներ առաջ Միաձինը՝ Քրիստոս, իջավ՝ նոր
էջ մը բանալու մեր ժողովուրդի առջև: Այո՛, Վեհափառ Հայրապետը կանչած է մեզ, որպես-
զի գանք և այսօրեղ, որպես Հայ Եկեղեցվո գավակներ, մեր ուխտը վերանորոգենք՝ խաեղա-
վառված, վերանորոգված վերադառնանք մեր փրկները, մեր երկիրները, մեր քաղաքները,
շարունակելու մեր կյանքն իբրև ազնիվ հայեր, իբրև ազնիվ քաղաքացիներ այն երկիրներու
մեջ, ուր մենք կայք հաստատված ենք և փուն շինած ենք: Շարունակենք մեր կյանքը՝ իբրև
Քրիստոսի հեղինակներ, իբրև քրիստոնյա ազգ, իբրև քրիստոնյա ժողովուրդ: Ամենայն
Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերին ընդառաջելով՝ ինչպես Հայ Եկեղեցվո բոլոր թե-
մերը, թեմակալ առաջնորդները, այնպես ալ մենք՝ Միազլալ Նահանգներն, Ամերիկայեն
եկած ենք ուխտի այսօր՝ այս Սուրբ և Անմահ Պապարագով մենք գմեզ վերանորոգելու, Վե-
հափառ Հայրապետի Աջը համբուրելու և, Էջմիածնա խորհրդով վերանորոգված, վերա-
դառնալու Ամերիկա, մեր կյանքը շարունակելու՝ իբրև Հայ Եկեղեցվո հավաքարիմ գավակ-
ներ և այս Աթոռի, սրբազնագույն Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հավաքարիմ
զինվորները:

Ուխտի այս Պապարագի հուզիչ և ոգևորիչ մթնոլորտի մեջ մենք անգամ մը եւս կվերի-
շենք մեր պարմության այն սքանչելի պարկերը, որ 1700 փարիներ առաջ Աստուծո Միա-
ձին Որդին՝ Քրիստոս, կիջներ այս սուրբ հողին վրա՝ հաստատելու համար այս աստվածա-
կերպ փաճարը, այս Մայր Աթոռը, Մայր Եկեղեցին Ա. Էջմիածնի:

Ազաթանգեղոսի «Հայոց Պապմությունը» մեզ կպատմն. թե ինչպես պարմության այդ
բացառիկ դեպքը կատարվեցավ հայ ժողովուրդի կյանքն ենք: Եվ Ազաթանգեղոս կըսե
հեղինակ խոսքերը, որոնք երկնային ներշնչմամբ ազդված խոսքեր են. «Այդ տեղը, ուր Աս-

պտուծ Միածին Որդին իջավ, թող Աստուծո փաճարը ըլլա, բոլոր հավաքացյալներու աղօթքի ու խնդրանքներու փութը և քահանայապետության Աթոռը»: Եվ խաղապես, շարունակելով Ագաթանգեղոսի Պատմության մեր ընթերցումը, կրեսնենք, որ հայ ժողովուրդը կշիկելով Ագաթանգեղոսի Պատմության աղօթքի ու խնդրանքներու փութը, և քահանայապետության, այսինքն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը: Եվ սակայն մեզ համար, պետության, այսինքն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը: Եվ սակայն մեզ համար, իբրև Եկեղեցվո զավակներ, այսօր ամենակարևորագույնը, ամենաոգևորիչն այն է, թե այս Տաճարը շինվեցավ ոչ թե միայն մեկ անձի կողմն՝ Գրիգոր Լուսավորչի կողմն, Տրդատ թագավորի կողմն և կամ մեկ խումբի կողմն, խմբակի կողմն, այլ այս փաճարը կառուցվեցավ բոլոր հայ ժողովուրդի կողմն: Լուսավորիչը փոխավ Քրիստոս, որ կուգար, կիջներ հայոց կյանքեն ներս, Քրիստոս է, որ մեզի՝ հայերուն կուգար: Եվ այդ տեսիլը Լուսավորիչ հաղորդեց Հայոց Տրդատ թագավորին:

Լուսավորիչը Հայոց և Տրդատ թագավոր միաբերդ հաղորդեցին այդ տեսիլը համայն հայ ժողովուրդին: Եվ բոլոր ժողովուրդը՝ Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ թագավոր, հայոց իշխաններ, հայոց զինվորներ, հայոց շինարարներ, գյուղացիներ, կիներ, զավակներ, բոլորը միաբերդ հավաքված՝ այս փաճարը շինեցին, այսինքն՝ ողջ հայ ժողովուրդով միասնակցաբար: Այս Տաճարը հանությանը ընդունեցին Քրիստոսի ներկայությունը հայոց կյանքեն ներս: Այս Տաճարը համայն հայության շինած, կերպած Տաճարն է: Եվ Ագաթանգեղոս դարձյալ կըսե մեզի. «Բազմության մեջ ամեն մեկն իր օժանդակությունը բերելով՝ կձգվոր շինվածքին կատարյալը վերջացնել, որպեսզի ոչ մեկ հոգի անմասն չմնա շնորհներու փրկութենեն և չգրկվի բժշկությունն»:

Այո, համայն հայ ժողովուրդը շինեց լույսի այս հորանը, այսինքն՝ ամեն մեկ հայու կյանքեն ներս Քրիստոս իջավ, և Քրիստոսի ներկայությամբ ամեն մեկ հայ անհատ՝ լուսավորված, քով-քովի եկած, միաբերդ կառուցին Լույսի հորանը: Լույսի հորանը միայն այս հորանը չէ, Լույսի հորանը մեզմե ամեն մեկուն՝ իր քրիստոնեական հավաքքի արտահայտությունն է և այդ հավաքքի արտահայտությամբ մեր հոգևոր միասնականությունն է, որ կկառուցանե սուրբ և անմահ Մեղանը, Լույսի հորանը:

Միեռյներ, պատմությունը, անցյալը հիշելով՝ մենք կխանդավառվինք: Այսօրվա մեր ժողովուրդին ներկայացված կարեւորությունները տեսնելով՝ մենք կհրճվինք: Անցյալ կիրակի բոլոր հայությունը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, տոնախմբեցինք մեր ազատ, անկախ հայրենիքի հաստատման 12-րդ տարեդարձը: Այսօր արտասահմանի մեջ հայությունը հատաճացած է, այլևս 80 տարիներ առաջվա զաղթական խեղճ հայը չէ: Որ որ հայը հաստատված է, այդ երկրին լավագույն քաղաքացին դարձած է, դաստիարակություն ստացած է և իր կյանքը կշարունակե իբրև ազնիվ մարդ, ազնիվ քաղաքացի և, մասնավորաբար, գիտակից հայ քրիստոնյա այս Աթոռի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության հավաքարհմ զավակը:

Անկախության մեր առջև բացվելն ետք Հայ Եկեղեցին ևս կարողացավ իր կաշկանդումներեն ձեռքազատվիլ, և եկեղեցիներու դռները բացվեցան: Վեհափառ Հայրապետի ջանքերով և աշխատանքներով սկսած են նոր եկեղեցիներ կառուցվիլ, օծվիլ: Ծննդաբաններու դռները կբացվին և մեծ թիվով հայ երիտասարդներ կուգան, կոչումը կզգան իրենց կյանքը նվիրելու այս Մուրը Աթոռին, այս Լուսո Մուրը Մեղանին՝ դառնալով գինվորյալ

միաբաններ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվու Քրիստոնեական կրթությունը, դաստիարակությունը սկսած է փարածվիլ մեր եայրենիքեն ներս: Ուրախ ենք, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և մեր պետության որոշումով մեր բոլոր դպրոցներու մեջ մեր գավակները պիտի ճանչնան իրենց արմարները, իրենց քրիստոնեական գիտակցությունը: Այսպես է, որ մենք պիտի կարողանանք մեր այս օրերուն լույսի փառարներ շինել:

Սիրելիներ, ապագային նայելով՝ պնդեք է անցյալը հիշենք, պնդեք է հիշենք, թե ի՞նչ պատահեցավ 1700 փարիներ առաջ, թե ինչպե՛ս ամեն մեկ հայ, հավաքված Գրիգոր Լուսավորչի շուրջ, հոգևոր միասնականություն ստեղծեց և միապեղ կառույց՝ իր սրբազնագույն Տաճարը՝ Էջմիածինը: Այսօր ալ մեր այս օրերուն այդ իրականության կարիքն ունինք: Անցյալ 100 փարիներու մեր ժողովուրդի կյանքեն ներս պատահարները, եղեռներ, ջարդոր և փարբեր չարիքներ մեզ ցրեցին ոչ թե ֆիզիկապես միայն, այլ նաև հոգեպես ևս իրարմն հեռացանք: Այսօր՝ 1700-ամյակի առիթով այս Տաճարի կառուցման, այդ հոգևոր միասնականության կարիքն ունինք:

Եթե կուգենք, որ մեր այս եայրենիքը գորանա, եթե կուգենք, որ սերը, գիտակցությունը, բարիությունը, ազնվությունը փարածվի ամեն փեղ, ամեն մեկ հայ ընտանիքի մեջ, ամեն մեկ հայու կյանքեն ներս, պնդեք է այդ հոգևոր միասնականությունը ստեղծենք: Առանց Աստուծո ներկայության կյանքը չի կրնար շարունակել, առանց Աստուծո ներկայության այս եայրենիքը չի կրնար հառաջանալ: Եվ ի՞նչ է ստված. «Աստված սեր է»:

Պնդեք է իրար սիրենք, պնդեք է իրար հարգենք և, ինչպես պատահեցավ 1700 փարիներ առաջ, պնդեք է հավաքվինք մեր Հայրապետի շուրջ, Իր եեք միապեղ, մեր պետության եեք միապեղ կառուցանենք մեր ավանդությունը, այսինքն՝ բերենք Քրիստոս մեր կյանքեն ներս, Քրիստոս, որ մեզ լուսավորե, մեր կյանքը պայծառացն իբրև հայեր, իբրև Հայաստան, իբրև արփաստեման, իբրև Հայ Եկեղեցվու գավակներ:

Այս է, որ այսօր, այս Ուխտի Պատարագով, մենք պնդեք է բոլորս ուխտենք և այս առիթով շնորհավորենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով Ամենայն Հայոց Հայրապետին, բոլոր հայ հոգևորականության, բոլոր հայ ժողովուրդի, Հայ Եկեղեցվու գավակներուն հառաջդիմություն, պայծառություն և լուսավոր ապագա:

Թող Աստված անփորձ պառն, պայծառ պառն Հայոց Հանրապետությունը, թող Տեր Աստված անսասան պառն այս սրբազնագույն Տաճարը՝ Էջմիածինը, թող Աստված երկար առողջ փարիներ շնորհե Ամենայն Հայոց Հայրապետին, որու առաջնորդությամբ մենք քալենք դեպի հառաջ, շինենք փառարներ, լույսի փառարներ մեր կյանքեն ներս, մեր ընտանիքներու կյանքեն ներս և ամեն փեղ, ուր որ մենք կյանք հաստատած ենք՝ իբրև Եկեղեցվու գավակներ: Եվ Տիրոջ այս շնորհներուն համար օրենենք զԻ՛նք՝ Հոր, Որդին և Սուրբ Հոգին այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՇՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ

ԾՈՎԱԿ ԿՎԱԳՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր


ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ՄԵԾ ՎԵՆԱՓԱՌԸ (Նուշեր)

Վազգեն Առաջին Հայրապետին հանդիպելու բախտ եմ ունեցել 1960 թվականին Էջմիածնում գումարված եկեղեցական ժողովի օրերին... Էջմիածնի Երկրագործության ինստիտուտի տնօրեն Սիրակ Կարազոզյանը մվաստիս հրավիրել էր կազմակերպելու կենսաֆիզիկայի գիտական կենտրոն: Առաջին անգամ Հայաստանում իրագործվելու էր իոնացնող ճառագայթների և ռադիոակտիվ նյութերի մեծամասշտաբ մերդրումը կենսաբանական հետազոտությունների մեջ:

Եռաձայնեցին Կաթողիկոսարանից, թե պատրաստ եմ, արդյոք, Վեհափառի խընդրանքով հյուրընկալել ժողովի հրավիրված թվով քսան եկեղեցականների: Հարկ է խոստովանել, որ շփոթվեցի: Մի պահ քար լռությունից հետո, պատասխանեցի՝ այո: Ծտապեցի դեպի ջջամուտքը լաթորատորիայի, որը գտնվում էր Էջմիածնում՝ Ս. Գայանե վանքի մոտ, և դիմավորեցի մեր Սրբազան Հայրերին: Մի կողմից ուրախությունն էր համակել ինձ, մյուս կողմից անհասկանալի էր մնում նրանց այցի նպատակը:

«Է՛հ, ի՞նչ լեզվով պիտի խոսեմք», - բարևելուց հետո՝ զենող հայացքով դիմեց Երուսաղեմի հայոց Տ. Եղիշե Պատրիարքը: «Հայերեմ», - առանց հապաղելու ասացի ես: «Կհարցնեմ, քանի որ ի՞նչի ասել եմ, որ Հայաստանի գիտական հիմնարկներում միայն ռուսերեն կխոսին և կգրեն, թե՞ դա անստույգ լուր է, ասեկոս»: «Մե՛նք ձեզ մոտ եկանք դիտելու, քանզի հետաքրքրված ենք, թե ի՞նչ գիտական կենտրոն է ստեղծվել մեր Սուրբ Էջմիածնում, այն էլ հյույնական ուժի օգտագործման նպատակով», - շարունակեց Պատրիարքը: Նրանք սենյակից-սենյակ անցնելով և տասնյակ հարցեր ուղղելով և իրենց գոհունակությունը հայտնելով մեկնեցին Վեհարան:

Քիչ ժամանակ անց՝ կրկին հեռաձայն: Այս անգամ Կաթողիկոսի գավազանակիրն էր: Ասաց, որ հյուրերը շատ ցոհ են մնացել այցելությունից, և հայտնեց, որ եթե ժամանակ գտնեմ, երեկոյան այցելեմ Երևանի ֆիլիարմոնիկ դահլիճ, Վեհափառի օթակը, որտեղ և հյուրերի հետ միասին ներկա ցտնվեմ համերգին: Պիտի խոստովանեմ, որ այդ հրավերն ընդունեցի երազելի ուրախությամբ: Այդ օրվանից Վեհափառն ի՞նչ համար դարձավ իմ ավելի քան պաշտելի հոգևոր հայրը, իմ ամենաբաղձալի բարեկամը, իմ մեծ խորհրդատուն: Տասնյակ տարիներ նրա մեծ հովանավորության ներքո ինչպես խաղաղ տարիներից, այնպես էլ անողորմ երկրաշարժի և Արցախյան պատերազմի շրջանում թե ի՞նչ ազգանվեր գործեր կատարեցի նրա օրհնությամբ, հայտնի էր միայն Վեհափառին: Տարիներ են ան-



ՎԱՋԳԵՆ ՎԵՀԱՓԱՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՆԴԻԿԱՅԻ ԽՆԱՏԻՏՈՒՏՈՒՄ, 1973 թ.





ՎԱՐՓԵՆ ԱՄՈՐՈՒՆԵՐԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՄԵՏՄ ԱՆԻՍՆԱՅԱՆԻՆ
(ԱՎԳՐԵՍԻԱՆՈՒՄԻ ՆՈՂՋԻՆ Ծ. ԱՎԱԳՐԱՆԸ Է). ՏՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՕՊԵՐԱԿԻՆԻ ԴԱՂԱԽԸ, 1971 թ.

ցել, բայց չեմ կարող մոռանալ Հայոց աշխարհի Մեծ Վեհափառին: Մի Հայրապետի, որն ունեցավ հայ ժողովրդի կյանքում մոտ քառասուն տարվա անընդմեջ և անմոռաց ծառայություններ ...

ԽԱՉԸ- Բայց ամեն բան՝ սկզբից: Երկրորդ համաշխարհային պատերազմը մոտենում էր իր ավարտին: 1945 թվականի զարման ջիմջ առավոր էր, երբ զանգահարեց իմ դասընկեր Վիլիկ Տոնիկյանը և ասաց, որ իր հորեղբայր Տոնիկյանը, որը ճշմանակված էր Գերմանիայի Բրեսլաու քաղաքի գինվորական պարետ, իրեն և եղբոր համար ուղարկել է երկու զգերմանական հեծանիվ: Առաջարկեց, որ միասին պտտվենք քաղաքում: Նրան առաջարկեցի մեկնել Էջմիածին: Ժամապարհ ընկանք, մի քանի ժամից հասանք Էջմիածին: Այս ճանապարհորդությունը մեր առաջին ուղևորությունն էր: Մենք մի քանի դասընկերներով միշտ երազել էինք ուղևորություն կատարել, չգիտեմ ինչո՞ւ՝ հատկապես սկանդինավյան երկրներ: Քարտեզի վրա նկարում էինք մեր ճանապարհորդության երթուղին, կարդում, գրեքից տեղեկանում թերակղզու երկրների մասին, սպասում պատերազմի ավարտին իրականացնելու մեր համդուզմ բաղձանքը: Ամեն բան պատրաստ էր: Միայն անհրաժեշտ գումարը չկար:

Մտորումներով հասանք Էջմիածին, մտանք Վանքի բակ: Այստեղ ոչ ոք չկար: Եկեղեցու դուռը բաց էր, դռան աջ կողմում նստած էին երկու ծեր հոգևորականներ, որոնք շուտով հեռացան: Հետագայում իմացա, որ նրանցից մեկը երջանակահիշատակ Կաթողիկոս Չորեքչյանն էր: Ես խորանի վրա նկատեցի, որ մեծ խաչ է դրված: Եկեղեցու նկարագրող պատերը դիտելուց հետո ընկերոջս ասացի՝ «Եթե այս հսկա արծաթե խաչը տանենք մեզ հետ և վաճառենք, մեր ուղևորությունը դեպի սկանդինավյան երկրներ իրողություն կդառնա»: Միմյանց խրախուսելով, հանդգնեցինք, վերցրինք այդ խաչը և վերադարձի ճանապարհը թոնեցինք: Երկուսս լուռ էինք անհասկանալի մտորումների մեջ:

Զվարթնոցի մոտ կանգ առանք, որ շունչ քաշեմք: Սթափ խորհելով կատարվածի մասին՝ եկանք այն հետևության, որ մենք Եկեղեցու դեմ ենք, քանի որ «կրոնը ժողովրդի համար օպիում է», բայց ինչ-որ սարսափեցնող դատապարտելի հանցանք ենք կատարում գողություն: Առաջարկեցի իսկույն ևեթ վերադառնալ Էջմիածին և մետաքսյա գործվածքի մեջ փաթաթված արծաթյա խաչը զետեղել իր տեղը: Արդեն անցել են տասնյակ տարիներ, սակայն երբ լինում եմ Էջմիածնում և տեսնում այդ սքանչելի խաչը, շահագունում եմ կատարածիս համար: Երբ տուն վերադարձանք՝ արդեն ուշ գիշեր էր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ- Հիմա, հենց այս երեկո, հանդիպում եմ ունենալու Ամենայն Հայոց Վեհափառի և Նրա հյուրերի հետ: Ինչո՞ւ պիտի հանդիպեմ, ինչի՞ մասին պիտի խոսեմ Վեհափառի հետ, ինչո՞ւ Նա հրավիրեց հանդիպելու մի երիտասարդ գիտնականի, որը խաչակնքել ամզամ չգիտեր և քիչ մնաց որ խաչագող դառնար, ինչո՞ւ անպայման ֆիլհարմոնիկի դահլիճում, որտեղ հարյուրավոր աչքեր նայում էին իմաստուն, հմայիչ ու սքանչելի Վեհափառին: Տասնյակ ինչուներ, խորհրդավորությունը պատել էր ինձ, բայց հպարտության և ներքին մեծ ուժի մղումով, ուռքերս ուղղեցի դեպի Արամ խաչատրյանի անունը կրող ֆիլհարմոնիկի ներկայիս սրահ:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ - Հայաստանում գիտության զարգացմանը վեհափառի բերած նպաստից հիշեմք մեկ քնորոշ օրինակ, որը կապված է հանրաճանաչ ֆիզիկոս Ա. Ալիխանյանի հետ:

Ակադեմիկոս Արտեմ Ալիխանյանի հետ ծանոթացել եմ 1953 թվականին, երբ երազում էի ընդունվել Երևանի ֆիզիկայի ինստիտուտ՝ զրա մոտ աշխատանքի: Իմ այդ ցանկությունն իրականացավ միայն 1968 թվականին, երբ նա, իմամալով էջմիածնի մեր կենտրոնի աշխատանքների մասին, ինձ հրավիրեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտ՝ կազմակերպելու ճառագայթային կենսաֆիզիկայի լաբորատորիա, հիմք ընդունելով նաև խոշորագույն գիտնական և մտածող Նիկոլայ Վլադիմիրովիչ Տիմոֆեև-Ռեսնովսկու և Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Բ. Ն. Տարուսովի առաջարկությունները՝ միացյալ գիտական համագործակցության և մի քանի հայ երիտասարդ գիտնականների ուղարկելու Օբնինսկի ճառագայթային կենսաբանության ինստիտուտ վերապատրաստվելու:

Արտեմ Ալիխանյանը մի երեկո ինձ հրավիրեց իր առանձնատուն և ասաց, որ դժվար կացության մեջ է, պետք է հրավիրել մի հայ գիտնականի ԱՄՆ-ից, որը մեկ շաբաթից ոչ ուշ անհրաժեշտ էր, որ լինի Մոսկվայում և համատեղ գիտական աշխատանք կատարի Նոբելյան մրցանակի դափնեկիր, ֆիզիկոս Պ. Ա. Չերենկովի ղեկավարությամբ: Այն ժամանակներում արտասահմանից այդքան կարճ ժամանակահատվածում գիտնական հրավիրելն անհնար էր: Ասացի. «Արտեմ Իսակովիչ, ես գիտեմ, թե Դուք ինչու եք դիմել ինձ: Եկեք, գմանք մեր Ամենափրկիչ Վեհափառի մոտ, միևնույն ժամանակ Ձեզ կծանոթացնեմ Վեհափառի հետ»:

Հետաձայնեցի: Վեհափառը մեզ սիրով հրավիրեց էջմիածին: Մեծ հետաքրքրությամբ լսում էր մեծանուն գիտնականին, էլեկտրոնային արագացուցիչի և այլ գիտական հետազոտությունների մասին: Ալիխանյանը հույսկապ ներկայացնել գիտեր ոչ միայն գիտության, այլև արվեստի ու գրականության բնագավառները: Տեսնելով, որ արդեն շատ ուշ է, համարձակվեցի խոսք թացել մեր այցելության բուն նպատակի մասին:

Վեհափառը մեր ներկայությամբ անմիջապես հետաձայնեց Փարիզ և առաջարկեց հրավեր կազմակերպել այդ հայ գիտնականի համար. «Ես ուրախ եմ, որ կարող եմ Ձեզ օգնել, միայն թե գիտական աշխատանքը վերջանա, խնդրում եմ գաք Վեհարան, ինձ մոտ, և պատմեք այդ ուսումնասիրության մասին»: «Իհարկե», - ուրախությամբ ասացիք մենք: Հետագայում այս պատմությունը ակադեմիկոս Ալիխանյանը հաճախ էր պատմում իր մտերիմներին, իսկ ինձ զգուշացնում էր, որ ոչ մի տեղ, հասկանալի պատճառներով, այս պատմության մասին չխոսեմ:

Հետագայում մենք նորեն եղանք Վեհափառի մոտ, որտեղ մեր ճանաչված այս հայ գիտնականը «հաշվետվություն» տվեց իր գործունեության մասին: Վեհափառն իրեն հատուկ ծախտով ընդունեց այդ գիտական հաշվետվությունը՝ ավելացնելով, թե միշտ պատրաստ է օգնել, օժանդակել հայ գիտնականներին:

Տարիներ անց, երբ ակադեմիկոս Ալիխանյանն իր մահկանացուն էր կնքել, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի մշան խորին հարգանքի, այդ տխուր առիթով այցելեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտ:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԴՆՈՒՄԻՆԱԿԱՆ ՈՇՈՎ - Սրտաբան Զավեն Դուրաբջյանը
 մի օր ինձ հայտնեց, որ Վեհափառը հրավիրում է մեզ Վեհարան ընտանյոջ հանդերձ, հատուկ ճաշկերույթի: Հատուկ, քանի որ ճաշը լինելու էր ուսմիճական, և ինքը՝ Ամենայն Հայոց Վեհափառն էր պատրաստելու այդ ճաշը: Մեր տիկնաց հետ ծանոթանալուց հետո, Կաթողիկոսը մեզ հետ սկսեց զրուցել թժկության, գրականության և արվեստի մասին: Վեհափառը պատմեց հուզիչ մի պատմություն, թե ինչպես մի օր ցնցոտիներով մի տիկին գալիս է իր մոտ և խնդրում, որ ընդունի իրեն. «ես արդեն քիչ էր մնում մոռացալի Գրա մա-

սին, երբ գավազագակիրը նորեմ հիշեցրեց, որ ձեր կինը դեռ սպասում է: Մտածելով, որ օգնության կարիքով է եկել, ընդունեցի: Այդ զառամյալ կինը չոքեց գետնին և ձեռքս համբուրելուց հետո, ասաց, որ այս օրվան սպասել է քառասուն տարի և փառք Աստծուն, որ գաղթից հետո, չնայած ահավոր տանջանքներին, ողջ է մնացել և Աստծու հրամանով մաշայոց Հայրապետին է հանձնելու 25 հատ մապոլեոն ոսկեդրամ, որը կրել է իր մարմնի վրա այս տարիներին»: «Ես քարացել էի», - ասաց Վեհափառը: Ուժ գտնելով, ասացի. «Բայց Դուք տիկին, ինքներդ երևի մեծ կարիքի մեջ եք, գուցե մի մասը պահեք Ձեր կարիքների համար»: «Վայ, Վեհափառ, ինչ եք ասում, սա ոխս է, որ այս բոլորը պատկանում է մեր Եկեղեցուն»: Ես պատուհանից նայում էի այդ տիկնոջը, որը կուզե-կուզ և ծանր քայլերով անցնում էր Վեհափառի մոտով, ու ընկա մտքերի մեջ ...աչքերիս առջև նշմարվեց մեր Մեծ եղեռնը...

Հիմա հասկացա՞ք, թե որտեղից է Հայոց Եկեղեցուն, այսպես կոչված, հարստությունը:

Տիրեց քար լռություն... «Մենք պիտի ճաշակենք իմ եփած ոռոմիական ճաշը», - ասաց Վեհափառը և անձամբ ափսեների մեջ լցրեց համեղ ապուրը: Երբ ուտելն արդեն վերջացնում էինք, մա հանկարծ ոտքի ելավ և գայրույթով ասաց. «Այս ի՞նչ արեցի, ես այս ճաշի համար հատուկ սպա՛սք էի պատվիրել Ռոմիոնիայից և մոռացա այն օգտագործել»: Հետո մենք որպես հիշատակ լուսանկարվեցինք և ուշ երեկոյան հիանալի հուշերով հեռացանք Վեհափառից:

ԶԱՎԱՑԱԾԱԾ ՕՐՀՆԱՆՔԸ - 1985 թվականի գարնանը սրտաբան Զավեն Դուլաբջյանն իր ընտանիքով անվերադարձ պիտի մեկնեք Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Ես տեսնում էի Զավենի մտատանջ և սրտաբեկ վիճակը ու չէի շտապում խոսել նրա հետ, մինչ իր խոսք բացելը: Մի առավոտ ասաց. «Սիրելի իմ ընկեր և եղբայր, դու միշտ հասկացել ես ինձ, ներիր, որ պիտի ձգեմ Հայրենիքս, որին ամշափ սիրում եմ, պիտի ձգեմ իմ ընկերներին, որոնց նվիրված եմ, պիտի թողնեմ ծնողներին և բարեկամներին գերեզմանները: Դու, որ գիտես, թե ինչու եմ մեկնում, կարող ես ներել ինձ»: «Ես քեզ կներեմ», - ասացի ես, - բայց քեզ չեն ների քո հիվանդները, քո կաթողիկոսը, քո Հայրենիքը, դու սիրված մարդ ես Հայաստանում, թժիշկ, գրող, Գերագույն խորհրդի անդամ...»:

Զավենը մոայլված էր խոհերի մեջ, անքնակալելիորեն տառապած դեմք ուներ: Ասաց՝ «Եթե ստանամ Վեհափառի օրհնությունը, էլ ինձ բան պետք չէ: Դու կզա՞ս ինձ հետ Վեհափառի մոտ», - հարցրեց Զավենը: «Դժվար է, բայց կզամ, պիտի գամ», - ասացի ես: Երեկոյան Վեհափառն էինք: Կաթողիկոսն ինչ-որ բան զգում էր և վատ տրամադրության մեջ էր: Մի երկու անհասկանալի մտքեր փոխանակելուց հետո, Զավենը լաց լինելով ասաց. «Վեհափառ Տեր, ստիպված պիտի մեկնեմ Հայրենիքից, եկել եմ Ձեր օրհնությունը ստանալու»: Նորին Սրբությունը վեր կացավ գրասեղանի առջևից, և ինձ մի պահ թվաց, որ Նա հիմա դուրս կհրավիրի Զավենին իր ընդունարանից, բայց Նա սկսեց առաջ ու հետ քայլել սեղանի վրա: Մենք երկուսով պապանձվել էինք, Կաթողիկոսը ոչ մի բան չէր արտասանում, երևում էր, որ ահավոր գայրացած էր: Զավենը զուր էր հայրենասիրական խոսքեր ասում, թե գնալուց հետո ինքը հայրենիքի համար կարող է շատ գործեր անել, մեծ օգուտ բերել:

[illegible]

Զապենի հույսը կաթողիկոսն էր, որը, չնայած Զապենի հետ ունեցած սոցիալական, ոչ մի կերպ չէր ցանկանում օրհնել նրա՝ Հայրենիքն ամպերադարձ լքելու մտադրությունը: Ես սթափվեցի, հասկացա, որ Հայոց Հայրապետն ուղղակի չի կարող դա անել, քանի, որ Նա Հայոց Հայրապետն է: Ես Զապենի ականջին ասացի. «Վեր կաց, գնանք, Նա իրավունք չունի քո այդ քայլը օրհնելու: Տե՛ս, Վեհափառը քար լուծյալն մեզ է: Եթե գեր մի փոքր հարգանք ունես, դուրս գանք Վեհափառից», - կրկնեցի ես: Զապենը աղաչեց, որ իրեն մերի Վեհափառը, և մոտենալով նրան ծնկաչոք՝ գլուխը հպեց Վեհափառի ձեռքին: Բոլորս լուռ էինք: Ես մի կողմից ցավում էի Զապենին, մյուս կողմից հպարտ էի, որ Հայոց Վեհափառը մնաց անհողողող, և դեմ կեցավ Հայրենիքը լքելու ամխոհեմ արարքին: Զգայած հետո շատ անգամ եմ հանդիպել Վեհափառին, Նա երբեք ինձ չի հարցրել պրոֆեսոր Զապեն Դուլաբջյանի մասին: Որոշ ժամանակ անց սրտաբանը ցավոք իր մահկանացուն կնքեց Լուս Ամբղեեսում և հողին հանձնվեց հետո իր Հայրենիքից...

ԱՐՑԱԽՑԱՆ ԱՐՀԱՎԻՐՔԸ - Վեհափառիմ մեծապես մտահոգում էր կացությունը Արցախում: Ընկացող իրադրությունը պահանջում էր օգնություն: Պահանջվում էր ամբողջ հայ ժողովրդի ուժերի գերազույց լարում՝ հաղթանակի հասնելու համար: Այգթում, 1988 թվականին, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի 12 հոգուց բաղկացած աշխատակիցների խմբի հետ մեկնեցինք Արցախ: Ժողովուրդը մեզ ընդունեց մեծ ոգևորությամբ: Մենք մի քանի հաճողիպումներ ունեցանք տեղի ղեկավարության, այնուհետև համալսարանում ուսանողների և դասախոսական կազմի հետ: Սրտառույ էր մեր հաճողիպումը էլեկտրատեխնիկական գործարանի աշխատողների, թանկորների հետ:

Մենք կանգնած նայում էինք զլխիկոր քանվորներին, որոնք լուռ իրենց գործն էին անում, երբ մի կիմ, որ իմ կողքին էր նստած, հարցրեց. «Դուք որտեղի՞ց եք եկել, ովքե՞ր եք»: Ասացի՝ «Գիտնականներ ենք, երևանից»: Մեկ էլ այդ կիմը կանգնեց և բարձրաձայն ասաց. «Հսեք, ժողովուրդ, եթե հայ գիտնականները կանգնած են մեր կողքին, մենք չենք պարտվելու, կեցցե Արցախի ազատությունը»: Լսվեցին ծափահարություններ, կոչեր: Էլ ոչինչ չեն հիշում, քանի որ արցունքներ էին հոսում աչքերիցս: Հենց այդ գործարանում էլ երդվեցի դառնալ Արցախի մարտիկ: Անընդմեջ մեկնում էի Ստեփանակերտ, հաճելիալում Արկաղի վոլսկու հետ, իմ սիրելի մարտական ընկերների, հետագայում Ստեփանակերտի քաղաքագլուխ Մաքսիմ Միրզոյանի, Վալերի Աթաջանյանի և շատ ուրիշների հետ: Դարձա «Ամարաս» կազմակերպության անդամ: Սկսվեց գործնական օգնությունների շարքը:

Որոշում են տեսնել պաշտելի Կաթողիկոսին, պատմել իրադրության մասին, խնդրել Նրա աջակցությունը: Նա սիրով ընդառաջում և տալիս է նամակներ՝ ուղղված ԱՄՆ-ի Արևմտյան և Արևելյան թեմերի Գերաշնորհ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին և Թորգոմ արքեպս. Մանուկյանին, որոնցում ասվում էր. «Ի գիտություն Ձեզ հայտնում ենք, որ Տոբթ. Ծովակ Ավագյան, այստեղ ծանոթ գիտնական և գործուն անդամ «Ամարաս» արքայական կազմակերպության, որի կենտրոնը Ստեփանակերտն է, օգնության հատուկ ծրագրով կծանանք ձեր երկիրը: Տոբթ. Ավագյան պիտի այցելի նաև Ձերդ Սրբազնությանը՝ խոսելու իր ծրագրերի մասին: Հաճեցեք օգնել նրան՝ իր հայրենազավեր ծրագրի իրականացման համար: Սիրով ի «Քրիստոս» Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ս. Էջմիածին, 14 մոյսեմբեր 1989 թ.»:

Ուրախությամբ չափ չկար: Օգտագործելով պաշտոնական գործուղումն ԱՄՆ, ես մեկ ամսվա ընթացքում շրջագայեցի մի քանի նահանգներ, որտեղ ներկայացրեցի ստեղծված իրադրությունը՝ խնդրելով օգնության ձեռք մեկնել արցախահայությանը: Այս բոլորի համար ես պարտական էի Վեհափառին:

1990 թ. Մաքսիմ Միրզոյանի հետ այցելեցինք Վեհափառին: Նա հարգանքով լսեց Միրզոյանին, որը խնդրում էր օգնել Ստեփանակերտի բնակչությանը հագուստով և սնունդով: Եվ Վեհափառը օգնություն ուղարկեց երեք մեծ մեքենաներով: Ի պատասխան, Մաքսիմ Միրզոյանի ջանքերով կազմակերպվեց XII դարի մի հիասքանչ արքայական խաչքարի նվիրումը Ս. Էջմիածնին: Վեհափառը երկար և ուշադիր նայելով խաչքարին՝ ասաց. «Սա հիանալի նմուշ է, Էջմիածնի ունեցած խաչքարերի մեջ սա կլինի միակը Արցախից»:

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԵՎ ԽԱՉԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ - Վազգեն Վեհափառը մի անգամ ինձ հրավիրեց Կաթողիկոսարան և անձամբ ցույց տվեց ադամանդներով ընդելուզված ոսկե խաչը և Հայոց Այբուբենը:

Տեսնելով, որ այս հիասքանչ գործերը լուսավորվում են էլեկտրական թույլ աղբյուրի լույսով, խնդրեցի, որ թույլ տրվի այն փոխարինել լույսի հատուկ աղբյուրով: Ես այն նախ լուսավորեցի քարի հետևի մասից, որտեղից երևում էին օմիքսի «երակները»: Դիմացից նույնպես հատուկ լուսային աղբյուր դրեցի: Իմ ընկալումով հիանալի էր ստացվել, ամեն ինչ շողում էր. ադամանդներն ասես դարձել էին փոքր արևներ: Վեհափառին հրավիրեցի վերև, որ տեսնի իմ «ստեղծագործությունը»: Երբ լուսավորեցի այն, Կաթողիկոսը զայրացած զոչեց. «Այս ի՞նչ ես արել, անջատի՛ր և հավաքի՛ր այս ամենը, որ կմամռվի ոսկու վաճառատանը լուսավորված ցուցապահարանի: Այստեղ պիտի հնչի Այբուբենը և խաչը և ոչ թե՛ ոսկին ու ադամանդը՝ բարձրաձայն վանկարկելով՝ նեղացած հեռացավ: Ես ընկա մտաւտանջությամբ մեջ, հետո հասկացա, որ ինչպես միշտ՝ Վեհափառը ճիշտ էր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ - Հայաստանի ամերիկյան համալսարանն ունի հիանալի մի ավանդույթ, որի արմատավորողը նշել և մնում է պրոֆեսոր, համալսարանի պատվավոր նախագահ, ակադեմիկոս, բոլորի կողմից սիրված Միհրան Աղբաբյանը: Զնավորված այդ ավանդույթով ուսումնական տարվա ավարտին հա-

Այնքան այժմեական հնչեղություն ունի անգուգական վեհափառի ավանդած պատգամն այն մասին, որ «Ազգ մը չապրի միայն իր նյութական բարիքներով, չապրի միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես եմ արվեստներն ու գրականությունը, չապրի միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կոստրի մաս պատմի և արժանապատվության զգացումներով, իր «մեծքի» գիտակցությամբ և զոհաբերության ոգիով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բարոյական նկարագրով»:

ՍԵՐՎԱԿ ԱՄԻՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆ

(Կաթողիկոսության սկզբնափուլը)

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն և նրա ազգանվեր գործունեությանը նվիրված հիմնարար ուսումնասիրությունները դեռ ատջևում են: Այն, ինչ արվել է առ այսօր այդ ուղղությամբ, քիչ չէ, բայց պակասավոր է: Սույն հոդվածով մենք ուզում ենք բացել մոր՝ այժմեական, վերլուծական ուսումնասիրությունների ծիրը, փորձելով լուսաբանել Վազգեն Առաջինի կաթողիկոսության սկզբնափուլի մի քանի հիմնախնդիրները, որոնց լուծմանը կաթողիկոսական զանր ստանձնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ Վեհափառը՝ այն հույժ կարևոր ժամանակաշրջանում (չնայած Հայոց համար բոլոր ժամանակներն էլ հույժ կարևոր են եղել), որով աչքի էր ընկնում Մեծ Բոցակայի մահից հետո սկսված բեկումնային փուլը:

1955 թ. սեպտեմբերի 30-ին էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումիհյայի և Բուլղարիայի թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալմյանին, ում վիճակվեց դառնալ դեպի մայրամուտ թեքվող ամբողջատիրական համակարգի հարուցած դառնությունների վերջին կրողը: Վազգեն Առաջինը միաժամանակ այն երջանիկ Հայրապետն էր, որը Հայաստանի այնքան երազած անկախության վերականգնման ականատեսն ու մասնակիցը եղավ:

Համբաճախ է, որ Ռուսաստանում խորհրդային կարգերի արշալույսին քաղաքական իշխանության եկած բոլշևիկների կողմից ընդունված՝ հոգևոր հաստատությունների, կրոնի և պետության փոխհարաբերությունները կանոնակարգող դեկրետները և, մասնավորապես, խղճի ազատության, եկեղեցին պետությունից անջատելու մասին, այդպես էլ մնացին թղթի վրա:

Հայաստանում ևս խորհրդային կարգեր հաստատվելու առաջին օրերից եկեղեցին դրվեց հզոր պետական մամլիչի տակ և եկեղեցա-կրոնական բոլոր գործընթացներն ուղղվեցին նույն հունով, ինչ հունով արդեն երեք տարի ընթացում էին հետհեղափոխական Ռուսաստանում:

Այլ կերպ չէր կարող լինել, եթե ճկատի առնենք, որ այստեղ հաստատվել էր նույն քաղաքական ուժը, արմատավորվել նույն գաղափարախոսությունը, գործողության մեջ էին դրվել նույն ուժային լծակները, կիրառվում էին նույն մեթոդներն ու ձևերը:

Դրությունը փաստորեն չփոխվեց և Ստալինի մահից հետո, այսպես կոչված՝ «խրուչչովյան ձեհալ»-ի տարիների: Չնայած որոշակի լիբերալացման քաղաքականությունն ակնհայտ էր:

Պետության վերահսկողությունը եկեղեցու ճկատմամբ Վազգեն Առաջինի կաթողիկոսության նախաշեմին հասել էր այնպիսի ծայրահեղության, որ ՀԵԳԽ-ի նախագահը փաստորեն ստանձնել էր անգամ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի դերը: Նա «իդ սեփական

ձեռքով ուղղումներ էր կատարում տեքստում, մակագրություններ անում շարելու համձնե-
ված նյութերում, ստորագրում էր շարվածասյունները տպագրության, կատարելով այդ ա-
մենը խմբագրության փոխարեն¹:

Այս մասին մատնանշում էր ոչ այլ ոք. քան ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առըն-
թեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի (ԿՊԳԽ) նախագահ Պոլյանսկին²:

Վազգեն Առաջինի ստացած ժառանգությունը մույնքան ծանր էր, որքան մրա մախոր-
դինը՝ Գևորգ Զ Կաթողիկոսին: Դրությունը ոչ միայն չէր փոխվել, այլև ինչ-որ տեղ ավելի
էր վատթարացել: Տարիների ընթացքում լուծման կարոտ խնդիրները չլուծվելով՝ ավելի
էին խորացել: Դրանց ավելացել էին մորերը: Տազնապալի վիճակ էր ստեղծվել եկեղեցա-
կան թեմերում, ինչպես մերքին, այնպես էլ արտաքին: Գրեթե կտրվել էր կապը Պրանց
հետ: Տեղ-տեղ այդ թեմերը հասել էին չգոյության: 1952 թ. հունիսի 21-ին, Գարեյին Ա
Հովսեփյանի մահից հետո, թափուր էր մնացել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական
գահը: Նոր Կաթողիկոսի ընտրության խնդիրը մեծ ճգնաժամի էր վերածվել: Բուն Մայր
Աթոռում կազմալուծվել և գրեթե չէին գործում ամենամահրաժեշտ կառույցները, չկային
հոգևոր սպասավորներ, չկային նյութական միջոցներ...

Հակառակ փոփոխություններ չէին եղել մահ Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք-
եպիսկոպոս Չորեքյանի՝ Ստալինի հետ 1945 թ. ապրիլի 19-ի հանդիպումից հետո:

Այդ մասին վկայում էր անգամ ՀեԳԽ-ի նախագահ Հ. Գրիգորյանը՝ ՀԽՍՀ կառավա-
րության ղեկավարությամբ 1956 թ. մարտի 2-ին ներկայացրած տեղեկանքում.

«1945 թ. Կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքյանը (հետագայում Գևորգ VI կաթո-
ղիկոս) ընդունվեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ի. Վ. Ստալին-
ի կողմից: Ընդունելության ժամանակ Չորեքյանը ԽՍՀՄ կառավարության քննարկ-
մանը ներկայացրեց գրավոր մի շարք խնդրանքներ: Ի. Վ. Ստալինը դրականորեն վերա-
բերվեց մամակում շարադրված հարցերին և հենց տեղում մակագրեց՝ «Համաձայն եմ»:
Այդ փաստաթղթերը Ի. Վ. Ստալինի մակագրությամբ լայնորեն զովագրվեց, հատկապես
արտասահմանյան հայ մամուլում, որպես Եկեղեցու մկատմամբ խորհրդային իշխանու-
թյան քարեհամ վերաբերմունքի փաստ:

Սակայն այդ մամակի մի շարք կետեր, չնայած պաշտոնապես լուծում էին ստացել,
գործնականում առ այսօր չեն իրականացվել:

Այդպիսին է մնում մասնավորապես վանքապատկան շինությունների հարցը, որոնք
պաշտոնապես համձնվել են Էշմիածնին, իսկ գործնականում առ այսօր չեն ազատվել
մասնավոր բնակիչների, կազմակերպությունների և գործամասերի կողմից, որոնք զբա-
ղեցրել են այդ շինությունները²:

Հայ Եկեղեցու վրա հակողություն իրականացնող պետական այդ խոստովանում էր,
որ այդ հարցը տեղիք էր տվել մահ անհեթեթությունների: Էշմիածնից ամեն տարի սկսել

¹ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 95, թ. 20:

² ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 10:

էին զանգնել պետական Քարկ ու տուրք հեցց այդ շինությունների և շենքերի դիմաց, որոնցից նա փաստորեն չէր օգտվում³:

«Անշուշտ նորմալ չի, - գրում էր նա, - երբ Վառքի ցերքին բակային տարածքում, այն էլ Մայր Տաճարի և Կաթողիկոսի նստավայրի, գտնվում են մասնավոր բնակիչներ, պետական հիմնարկներ, առավել ևս գործասեր: Մանավանդ ցանկալի չէ վերջիններիս առկայությունը, քանզի Էջմիածնի Մայր Տաճարը, որպես Հայաստանի բացառիկ հուշարձաններից մեկը, այցելում են առանց բացառության Հայաստան ժամանող արտասահմանյան բոլոր պատվիրակություններն ու զբոսաշրջիկները»⁴:

Տեղեկանքում այնուհետև զգվում էր, որ վիճակը նույնն է նաև տպարանի հարցում: Էջմիածնի տպարանի բացման թույլտվությունը նույնպես տվել էր անձանք Ստալինը, իսկ տպարանի շենքը շարունակում էր օգտագործվել պետական հիմնարկների կողմից:

«Էջմիածնի Կաթողիկոսարանում գործերի վիճակի ծայրահեղ վատթարացման մասին»⁵ ՀԵԳԽ-ի նախագահը հաղորդում էր և մինչև այդ՝ Վազգեն Առաքինի զահակալությանը նախորդող տարիներից, օրինակ, 1953 թ. դեկտեմբերին ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ա. Թովմապանին հասցեագրած ընդարձակ զեկուցագրում:

«... Մինչև հեղափոխությունը Էջմիածնի միաբանությունը կազմված էր 300 մարդուց, այդ թվում 20-30 եպիսկոպոսից: Ներկայումս Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսից բացի, որն 85 տարեկան է, կան միայն երկու եպիսկոպոսներ...»⁶: Վերջինների տարիքը, համաձայն մեկ այլ փաստաթղթի, 70-ից բարձր էր⁷:

«Նախքան հեղափոխությունը ԽՍՀՄ ներկա տարածքում Էջմիածինում ուներ մինչև 900 հայկական եկեղեցի, այժմ դրանց թիվը չի անցնում 30-ից: Նշված թեմերից յուրաքանչյուրը իր կազմում ունի 2-3 եկեղեցի, սահմանափակ թվով հոգևորականներով... այդ, այսպես կոչված, թեմերը խղճալի գոյություն են քարշ տալիս...»⁸:

Երկու տարի անց, նույնի մասին ցավով գրում էր նաև Վազգեն Առաքինը՝ ԽՍՀՄ քարձրագույն իշխանություններից հղած իր մամակում: Նա նշում էր, որ Ադրբեջանում ապրում է կես միլիոն հայ, իսկ գործում է ընդամենը երեք եկեղեցի: Նույնն է վիճակը Վրաստանում, որտեղ ապրում է ավելի քան 400 հազար հայ⁹:

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո Վազգեն Առաքինը, ծանոթանալով Մայր Աթոռի ֆինանսական կացությանը, արտառոց փաստի է համոզիպում: ԽՍՀՄ ֆինանսների նախարարության ոմն վերաքննիչ, դեռևս 1954 թ. այցելելով Հայաստան, ստուգել էր նաև Էջմիածնի Կաթողիկոսարանի հաշվապահական գործերը և ֆինանսական «զանգանքներ էր հայտնաբերել»: Կաթողիկոսարանի կողմից 1953-1954 թթ. ընթացքում

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, թ. 11:

⁵ Նույն տեղում, գ. 69, թ. 31:

⁶ Նույն տեղում, թ. 8:

⁷ Նույն տեղում, գ. 6, թ. 11:

⁸ Նույն տեղում, գ. 3, գ. 69, թ. 9:

⁹ Նույն տեղում, գ. 113, թ. 4:

պատրաստված մոմերի վաճառքից եկեղեցիների ստացած 1.500 հազար ռուբլի եկամուտը համարելով արտադրական եկամուտ, մա պահանջել էր հանրապետության ֆինանսական մարմիններից հարկադրել էջմիածնի Կաթողիկոսարանը 1.200 հազար ռուբլու չափով:

Էջմիածնի Կաթողիկոսարանը ոչ ճիշտ, կամայական կերպով հարկելու վերաբերյալ Վազգեն Առաջինը բողոքի երկու մամակ է հասցեացրում ՀԵԳԽ-ի մախագահին: Ուսումնասիրելով հարցը, վերջինս 1956 թ. մարտի 3-ին համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ՀԽՍՀ մախարարների խորհրդի մախագահ Ա. Ե. Քոչիմազին:

«Ամհրաժեշտ եմ գտնում հայտնել, - ասված էր զեկուցագրում, - որ եկեղեցիներում մոմերի վաճառքը չի կարելի համարել արտադրական եկամուտ, քանի որ եկեղեցիներում զնված մոմերի արժեքը... հանդիսանում է հավատացյալների կողմից եկեղեցու ծախսերը հոգալու համար հատկացված գումար: Հենց դա է հանդիսանում Էջմիածնի Կաթողիկոսարանի դրամական մուտքերի գոթթե միակ աղբյուրը (բոլոր միջոցների 90% տոկոսը)... Անգամ այս մուտքերի առկայության պայմաններում Էջմիածնի Կաթողիկոսարանը ի վիճակի չէ ծածկել իր բոլոր ծախսերը, և պարբերաբար նրա բյուջեում ճեղքվածք է առաջանում, որը փակելու համար Կաթողիկոսը մախկնում դիմել է Ալեքսիյ Պատրիարքի և Կառավարության զգնությանը»¹⁰:

Զափազանց ծանր էր մաև Մայր Աթոռի ֆինանսական դրությունը: Հ. Գրիգորյանի վերոհիշյալ զեկուցագրում բերվում էին հետևյալ տխուր փաստերը. «Որպեսզի կարողանա ապահովել... իր տաղեկան ծախսերի մվազագույնը, Կաթողիկոսը ստիպված է եղել 1950 թվականին վաճառել իր մյութական արժեքների մի մասը: Էջմիածնի ֆինանսական դրությունն այնքան աղետալի է, որ եթե մինչև այս տարվա վերջը Կաթողիկոսը չստանա լուրջ ֆինանսական աջակցություն, մա պարտադրված կլինի... փակել հոգևոր ճեմարանը և «Էջմիածին» ամսագիրը»¹¹:

Օրելյակիվորեն այս և այլ կարգի բազում հիմնախնդիրներ էին դրված Վազգեն Առաջինի աշխատանքային օրակարգում գործունեության առաջին իսկ օրից: Բոլորը՝ հույժ կարևոր, բոլորը՝ կենսականներն ամհրաժեշտ, ոչ թե Էջմիածնի նեղ եսակենտրոն շահերի, այլ հայ ժողովրդի գոյապահպանման ու ազգապահպանման, ազգային ու հոգևոր դիմագծի և կերտվածքի պահպանման տեսանկյունից, մի սրբազան պարտականություն, որից մա ոչ մի կերպ չէր կարող հրաժարվել խորհրդային վարչակարգի ամենաքիրտ ճնշումների պայմաններում անգամ:

Այդ հիմնախնդիրների լուծման հիմնական թանալին, սակայն, Էջմիածնի ձեռքում չէ, որ գտնվում էր, այլ խորհրդային իշխանությունների, շարքայինները, վերը բերված օրինակի կարգի, հանրապետական, մյուսները՝ Կրեմլի: Նման դերակատարման պայմաններում Էջմիածնի թողնվել էր խնդրատուի դերը: Եվ Մայր Աթոռը՝ հանձնիս Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այդ դերը պարտադրված կատարում էր խորհրդային կարգերի գոյու-

¹⁰ Նույն տեղում, թ. 19-20:

¹¹ Նույն տեղում, գ. 69, թ. 9, 13-14:

թյան 70 երկար ու ձիգ տարիների ընթացքում: Այդ դերը բաժին ընկավ մաև Վազգեն Առաքիճին:

Էջմիածնից անվերջ հոսքով խնդրագրեր էին ուղղվում իշխանություններին, որոնց գերակշիռ մասը մնում էր ամառադուր: Ժամանակ առ ժամանակ կաթողիկոսի բարձրացրած հարցերը, անցնելով Հեգհիս-ի գրաքննությամբ, ուղեկցվելով դրանց վերաբերյալ կարծիքներով, բացատրագրերով, տեղեկանքներով ու մեկնաբանություններով, վերահասցեագրվում էին հանրապետության և ԽՍՀՄ իշխանությունների բարձրագույն մարմիններին, ինչ-ինչ հարցերի վերաբերյալ մասնակի որոշումներ էին կայացվում, բայց արմատական մշակակության հիմնախնդիրները շարունակում էին մնալ չլուծված:

Վազգեն Առաքիճի կաթողիկոսության առաջին մի քանի տարիներին՝ Մայր Աթոռի և առձանք կաթողիկոսի հեղինակած այս բնույթի փաստաթղթերի թիվը փոքր չէր: Դրանցից յուրաքանչյուրը կատարելով պատմական սկզբնաղբյուրի իր դերը, յուրովի լույս է սփռում Վազգեն Առաքիճի գործունեության այս կամ այն կողմի, այս կամ այն հարցի լուծման նկատմամբ նրա մոտեցումների վրա, թույլ է տալիս ինչ-որ չափով վեր հանելու Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների որոշ ծալքերն առանձին վերցրած ժամանակահատվածում և վերջին հաշվով օգնում՝ ըստ հնարավորին լուսաբանելու այդ հարաբերություններն իր ամբողջության մեջ:

Բայց դրանց թվում կան մաև այնպիսիները, որոնք իրենց մշակակությամբ, բովանդակած տեղեկատվության կարևորությամբ, ժամանակին ունեցած իրենց դերակատարությամբ ու հետևանքներով պատմական նշանի փաստաթղթերի շարքը կարող են դասվել:

Այս կարգի մեկ-երկու փաստաթղթերի վերլուծությունը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել Վազգեն Առաքիճի 40-ամյա կաթողիկոսության սկզբնափուլի, նրա մտածումների, ծրագրերի, գործերի ու գործառնության, Հայ Եկեղեցու տագնապաթարույց վիճակի ու այդ վիճակը շտկելուն ուղղված կաթողիկոսի համառ ջանքերի, պետություն-Եկեղեցի հարաբերության հայտնի ու անհայտ երևույթների մասին:

Վազգեն Առաքիճի գործունեության առաջին տարիներին վերաբերող այս բնույթի փաստաթղթերից են ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահներ Ն. Ա. Բուլգանինի և Ն. Ս. Խրուշչովին հասցեագրած նրա մամակները, Ն. Ա. Բուլգանինի հետ կաթողիկոսի հանդիպմանն առնչվող նյութերը:

Նորընծա կաթողիկոսը շատ լավ հասկանում էր, որ Էջմիածնի հիմնախնդիրները լուծել հանրապետության իշխանությունների միջոցով՝ մախկինի պես անհնար էր: Ջերմ ցանկության դեպքում անգամ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն առանց կենտրոնի թույլտվության՝ կարևորություն չէր կարող: Եվ Վազգեն Առաքիճը պարտադրված էր գնալ իր մախորդի ճանապարհով՝ ձգտել անձնական հանդիպման ԽՍՀՄ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Նախարարների խորհրդի նախագահի հետ: Մանավանդ, որ այդ աթոռը զբաղեցնող Ն. Ա. Բուլգանինը լավատեղյակ էր Էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների մանրամասներին և «Սուրբ Էջմիածնում գումարուած Հայ ազգային-եկեղեցական ժողովը յաջողութեամբ իր աշխատանքները աւարտելուց» և Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելուց հետո, հենց նրան էր հասցեագրել Հայ ազգային-եկե-

ղեցական ժողովի խոր երախտիքի արտահայտությամբ հեռագիրը, որում մասնավորապես ասված էր. «Ծանձինս Ձեզ իր ամենաբարի մաղթանքները հղելով Սովետական բաշխմամ կառավարությանը, Ազգային-եկեղեցական ժողովը շնորհակալություն է յայտնում այն դիրքությունների համար, որ ընձեռնեց Սովետական կառավարությունը մեր ժողովի գումարման համար:

Հաստատական իր դարատոր աւանդություններին, Հայ Եկեղեցին, առաջնորդ ունենալով իր նորընտիր Կաթողիկոսին, այսուհետև նույն եռանդով կը պայքարի բոլոր ժողովուրդներին միջև եղբայրության, նրանց երջանիկ ապագայի, ամբողջ աշխարհում խաղաղության գործի հետևագալ ամրապնդման համար, մի գործ, որն այնքան յաջողությամբ զվարտում է Սովետական Միությունը»¹²:

Որոշումը կայացվել էր: Բայց այն իրականություն դարձնելու համար, ի տարբերություն վազգեն Առաքինի մախորդի, ահռելի դժվարություններ էր անհրաժեշտ հաղթահարել: Քաղաքի Ստալինի հետ շորեքյանի հանդիպումը կայացել էր վերևների մախաձեռնությամբ, այսինչ Բուզգանի հետ Կաթողիկոսի հանդիպման մախաձեռնությունը գալիս էր ներքևից:

Այսուհանդերձ, վազգեն Առաքինի հաջողվում է իրականացնել իր ծրագիրը: Ըստ որում թե՛ հանդիպումը մախապատրաստելու և թե՛ այն անցկացնելու ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես է բերում մեծ դիվանագետին պատիվ բերող ճկունություն ու հմտություն:

1956 թ. փետրվարին, Հայ Եկեղեցու արտահամայնյան թեմերը այցելելու մպատակով, ուղևորության պատրաստվող Կաթողիկոսն ընդունելության համար դիմում է Բուզգանին: Պահը ճիշտ էր ընտրված: Նոր էր ավարտել իր աշխատանքները խՄԿԿ XX համագումարը, որը, ի թիվս այլ հարցերի, քննարկել էր Ստալինի անձի պաշտամունքի և նրա հետևանքների հաղթահարման մասին հարցը: Անհատի պաշտամունքը մերկացնող Ն. Ս. խրուշչովի զվապորած խորհրդային նոր վարչակազմը չէր կարող չընդառաջել Հայ Եկեղեցու դեկավարի ցանկությանը, ում դրանից տասնմեկ տարի առաջ չէր զլացել ընդունելու նույն այն Անհատը, որի պաշտամունքը դատապարտեց խՄԿԿ համագումարը:

Բուզգանին հանձնվելիք Կաթողիկոսի մախապատրաստած մամակը, իհարկե, մախապես անցավ խորհրդային Հայաստանի իշխանությունների և առեմից առաջ՝ ՀեԳԽ-ի գրաքննության բովով: ՀեԳԽ-ի մախագահը 1956 թ. մարտի 2-ի գրությամբ հայտնում էր ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանին.

«Սույնից կից ներկայացնում եմ Կաթողիկոս Վազգեն Առաքինի մամակի մախագիծը, որը մա ցանկանում է ներկայացնել խՍՀՄ Միմիստրների խորհրդի մախագահ ընկ. Ն. Ա. Բուզգանին, նրա ընդունվի վերջինիս կողմից:

Կից ուղարկում եմ նաև հիշյալ մամակի վերաբերյալ իմ կողմից կազմված տեղեկանքը և հարցերի մախանակամ սխեման, որոնք մա պատրաստվում էր շարադրել վերոհիշյալ մամակում: Այդ սխեմայում կա այն եկեղեցիների և վանքերի ցանկը, որոնց բացման մասին

¹² Նույն տեղում, գ. 91, թ. 71:

ցանկանում էր խնդրել Կաթողիկոսը իր մամակում և հետո հանեց մամակից մեր հանձնարարականով»¹³:

Վազգեն Առաքինի գրաքննությունն անցած մամակն ի վերջո պատրաստ էր: Նրա խնդրանքն ընդունելության վերաբերյալ չի մերժվում: Միայն թե Բուլղանիցի առաջարկով ընդունելությունը մշանակվում է ոչ թե Կաթողիկոսի արտասահման մեկնելուց առաջ, ինչպես առաջարկել էր Վազգեն Առաքինը, այլ վերադարձից հետո:

Հանդիպումը կայացավ 1956 թ. մայիսի 12-ին: Հանդիպմանը մասնակցում էին մահ Հեֆիս-ի մախազար Գրիգորյանը և նրա անմիջական ղեկավարը Կենտրոնից՝ ԿՊԳԽ-ի մախազար Պոլյանսկին: Առաքինը որպես թարգմանիչ, երկրորդը՝ արձանագրող:

Բուլղանիցի հետ հանդիպման գրույցի արձանագրության¹⁴ ծանոթությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ երկու կողմերն էլ լավ էին մախապատրաստվել հանդիպմանը, հատկապես Վազգեն Առաքինը: Ողջ գիտակցական կյանքը Ռուսիցիայում ապրած և ընդամենը յոթ ամիս խորհրդային կարգերի պայմաններում, այն էլ հիմնականում Մայր Աթոռի շրջափակում, անցկացրած Ամենայն Հայոց Հայրապետը հասցրել էր տիրապետել կոմունիստական գաղափարաբանության զինանոցի հիմնական մեթոդներին ու ձևերին և ըստ անհրաժեշտի դիմում էր դրանց՝ ազգային-եկեղեցական խնդիրների լուծմանը տալով խորհրդային ֆոն:

Ջրույցի արձանագրությունն սկսվում է այսպիսի տողերով. «Այն բանից հետո, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաքինը ներկայացավ ընկ. Բուլղանիցին, մա դիմեց նրան շնորհավորական խոսքերով՝ ուսերեն լեզվով. «Ես կցանկանայի,- ասաց Կաթողիկոսը,- խոսել մեզ՝ հայերիս համար հաճելի ռուսերեն լեզվով, բայց, ցավոք, ես առայժմ դեռ չեմ տիրապետում ռուսերեն լեզվին»¹⁵:

Վազգեն Առաքինն ապա ավելացնում է. «Ես կուսումնասիրեմ այդ լեզուն»: Առաջ ընկնելով ասեմք, որ մա իր խոստումը կատարում է շատ կարճ ժամկետում:

Այնուհետև Վեհափառը հայտարարում է, որ ինքը երկրորդ անգամ է հանդիպում Բուլղանիցին: Որ առաքին հանդիպումը կայացել է անցյալ տարի Ռուսիցիայում, երբ Բուլղանիցը կանգ է առել Բուխարեստում, Հարավսլավիայի խորհրդային Միություն վերադառնալիս: «Մեր հանդիպման հաջորդ օրը,- ասում է Կաթողիկոսը,- Բուխարեստի ողջ հայկական համայնքը ուրախությամբ իմացավ այն մասին, որ ես սեղմել եմ Ձեր ձեռքը: Եվ այսօր ես դարձյալ սեղմում եմ Ձեր ձեռքը և իմ կողքին զգում եմ ողջ հայ ժողովրդին, որն ինձ հետ միասին մի անգամ ևս շնորհակալություն է հայտնում Ձեզ այն բանի համար, որ Դուք ինձ ընդունեցիք»¹⁶:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գրույցի այն մասը, երբ Բուլղանիցը, ասես ի միջի այլոց, հարցնում է Վազգեն Առաքինին. «Երբ փետրվար ամսին Դուք դիմեցիք Ձեզ ընդունելու խնդրանքով, իսկ ես առաջարկեցի ընդունելությունը տեղափոխել

¹³ Նույն տեղում, գ. 110, թ. 1:

¹⁴ Նույն տեղում, գ. 113, թ. 6-13:

¹⁵ Նույն տեղում, թ. 6:

¹⁶ Նույն տեղում:

Ջեր՝ արտասահմանից վերադառնալուց հետո, ապա ի՞նչ եք դուք կարծում այժմ, մենք մի՞շտ վարվեցինք, որ տեղափոխեցինք ընդունելությունը»¹⁷:

Կաթողիկոսը պատասխանում է, որ դա շատ իմաստուն խորհուրդ էր և բացարձակապես ճիշտ, ինչի համար ինքը շնորհակալություն է հայտնում: Վազգեն Առաջինը միանգամայն ճիշտ էր իր պատասխանում: Իրոք, ընդունելության հետաձգումը չափազանց օգնակալ էր իր պատասխանում: Երբ, քանի որ, ինչպես ինքն էր բացատրում Բուլզանի տավետ և ձեռնտու էր կաթողիկոսին, քանի որ, ինչպես ինքն էր բացատրում Բուլզանի, ամեն ինչից բացի, հնարավորություն ընձեռեց իրեն ուսումնասիրելու սփյուռքահայության տրամադրությունները և փոխանցել այն իսՍՀՄ կառավարության նախագահին, ինչը չէր կարող կատարել այն ժամանակ՝ փետրվար ամսին:

Հանդիպման հենց սկզբում Վազգեն Առաջինը Բուլզանիին է հանձնում երկու ցամաք-ուղեւոր: «Դրանցից մեկը, - ասում է կաթողիկոսը, - ես գրել եմ արտասահման մեկնելուց առաջ: Նրանում ես առաջ եմ քաշում մի շարք խնդրանքներ և խնդրում եմ Միությունական կառավարությանը օգնել Հայկական եկեղեցուն այդ խնդրանքների դրական լուծման կառավարությանը օգնել Հայկական եկեղեցուն այդ խնդրանքների դրական լուծման գործում: Երկրորդը՝ ես կազմել եմ հապճեպ, արտասահմանից վերադառնալուց հետո, վերջին 2-3 օրում: Այդ փաստաթղթում ես աշխատել եմ շարադրել արտասահմանի հայության խոհերն ու ձգտումները և խորհրդային կառավարության ուշադրությանը ներկայացնել մի քանի հարցեր, որոնց ինձ մույմպես հուզում են»¹⁸:

Մեր համոզմամբ, երկրորդ մամակը Վազգեն Առաջինը մույմպես կազմել էր արտասահմանյան ուղևորությունից առաջ և գրաքննությունից ու իշխանությունների միջամտությունից զերծ պահելու նպատակով հրապարակ չէր հանել: Ցավոք, այդ մամակը մեզ չհաջողվեց հայտնաբերել Հայաստանի արխիվներում: Բայց, բարեբախտաբար, մեր հիմնական բովանդակությունը մանրամասնված է պահպանված մեկ այլ փաստաթղթում՝ Բուլզանիին հետ կաթողիկոսի զրույցի վերջին մասում արձանագրությունում, որից պարզ է դառնում երկրորդ մամակի ծնունդի բուն շարժառիթը: Ջերձ գրաքննությունից ու վերահսկողությունից, հրաժարվելով Վազգեն Առաջինն ազատորեն շարադրել էր այն հարցերը, որոնք մեր շերտում չէին հաջողվել ներառել առաջին մամակում, ավելի ստույգ՝ որոնք հանել էին մեր մամակից գրաքննությունում իրականացնողները: Նամակում արտացոլված էր ողջ հայությանը հուզող՝ հայկական պատմական տարածքների վերադարձման հիմնախնդիրը:

Կաթողիկոսը, ազգայնականության մեջ մեղադրանքներից ու պիտակներից խուսափելու համար, խնդիրը ներկայացնում էր՝ այն կապելով բացառապես սփյուռքահայության հետ: Եվ այս առումով էր, որ Վազգեն Առաջինի համար շահեկան էր Բուլզանիին հետ հանդիպման հետաձգումը:

Ինչ վերաբերում է Բուլզանիին դիրքորոշմանը, ապա մա, ինչպես ինքը բացատրեց Վազգեն Առաջինին, այլ իմաստ էր դրել ընդունելությունը հետաձգելու մեջ: Նա գտնում էր, որ «Կաթողիկոսին մինչև մեր արտասահման մեկնելը ընդունելու դեպքում, դաշնակցներն այդ ընդունելությունը կօգտագործեին Կաթողիկոսի դեմ»¹⁹: Այսինքն, սփյուռքահայ-

¹⁷ Նույն տեղում, թ. 11:

¹⁸ Նույն տեղում, թ. 7:

¹⁹ Նույն տեղում, թ. 12:

յության շրջանում հարցը կենդանացվել էր այնպես, որ խորհրդային ղեկավարությունը Հայոց Կաթողիկոսին ընդունել էր՝ նրան հրահանգավորելու նպատակով: Պատահական չէր Բուզանդի մի այս «խոստովանությունը»: Այն միջոց էր, մի ավելորդ անգամ, ի սկզբանե խորհրդային իշխանությանը թշնամական քաղաքական ուժ դիտվող դաշնակցությանը ու Ամենայն Հայոց Կաթողիկոսին բարեկադների հակադիր կողմերում պահելու համար:

Վազգեն Առաքինի գրույցը Բուզանդի հետ գնում էր նրան ներկայացված երկու նամակներում շոշափվող խնդիրների շուրջ: Անտարակույս, ԽՍՀՄ կառավարության նախագահը քաջածանոթ էր Կաթողիկոսի առաքին նամակի բովանդակությանը, որը, անկասկած, նրան էր ուղարկվել ՀԵԳԽ-ի և ԿԴԳԽ-ի միջոցով նախապես, ինչը չէր կարելի ասել երկրորդ նամակի մասին, որն առանց այդ մարմինների գիտության էր հանձնվել Բուզանդիին:

Այնպես որ հանդիպման ժամանակ Բուզանդին արդեն ուներ առաքին նամակում առաջադրված հարցերի պատրաստի պատասխանները: Նա չէր կարող լավատեղյակ չլինել նաև Ստալինի և Չորեքշյանի՝ 1945 թ. հանդիպման մանրամասներին, արդյունքներին ու հետևանքներին: Այդ մասին չէր մոռացել իր առաքին նամակում նշելու Վազգեն Առաքինը: Եվ, բնականաբար, Բուզանդին պետք է աշխատեր, որքան էլ անհարիր թվային Կաթողիկոսի առաջադրած հարցերը, առնվազն մի քանի առաջ անցնել Ստալինից՝ Կաթողիկոսին ընդառաջելու, թեկուզ և զուտ ցուցադրական մղումի մեջ: Այլապես ինչ տարբերություն բռնապետի և բռնապետությունը բարեփոխելու կարգախոսներով քաղաքական ասպարեզ մտած ԽՍՀՄ նոր ղեկավարության միջև:

Ժամանակին Ստալինի «բարյացակամությունը» Հայ Եկեղեցու կարիքների նկատմամբ թելադրված էր գլխավորապես երկու գործոնով.

ա) Հայրենական մեծ պատերազմում թշնամու նկատմամբ հաղթանակը կոփելու գործում Հայ Եկեղեցու զգալի օժանդակությամբ;

բ) Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ներկայացնելու բարենպաստ քաղաքական իրադրությունը ի շահն օգտագործելու ձգտումով:

Բուզանդիի պարագայում, Ամենայն Հայոց Հայրապետի գրեթե զրկաբաց ընդունելության շարժիչ ուժը փոքր-ինչ այլ էր, չնայած դարձյալ թելադրված էր, ամշուշտ, ժամանակի հրամայականով.

ա) Ստալինյան քաղաքական կլիման բարեփոխելու տպավորություն ստեղծելու ձգտումը;

բ) Միջազգային հանրությանը ժողովրդավարական լուսապսակով երևալու խրուշչովյան վարչակազմի ցանկությունը:

Հանդիպման և գրույցի արդյունքում Վազգեն Առաքինի առաքին նամակում արձանագործված էջմիածնին հուզող խնդիրներից ոչ մեկը չմերժվեց: Ռուսները մեծ մասն անհապաղ լուծեցին, իսկ մնացած հարցերն ուսումնասիրելու և դրանց լուծմանը ընդառաջելու միանշանակ խոստումներ տրվեցին:

Հայաստանի ազգային արխիվում պահպանված Կաթողիկոսի առաքին նամակի բնագրին համարժեք պատճենում, բարձրացված թուրք հարցերի դիմաց՝ լուսանցքում թափ թանաքով ռուսերեն «З» («կողմ», «համաձայն») նշում կա արված, ամենայն հավանական

նությանը հենց գրույցի ընթացքում գրված Գրիգորյանի ձեռքով: Դրանց թվում էին նաև այն հարցերը, որոնք նույն միանշանակությամբ խոստացել էր լուծել Առաջնորդը՝ պետության միահեծան ղեկավարը, որի բերանից դուրս եկած խոսքը, ինչպես հայտնի է, ենթադրաբար էր անվերապահ և ամհապաղ կատարման, էլ ուր մնաց գրավոր խոսքը: Այդ պարականոն լուծել գործնականում, ստալինյան այնքան բնորոշ նենգ հմարանքներից մեկը, որին իր քաղաքական կարիերայի ընթացքում մա դիմել էր բազում անգամներ:

Բուլգանինը Ստալինից ժառանգված հարցերի մասին հայտարարեց. «ԽՍՀՄ Միմիստերների սովետի 1945 թվականի կարգադրությունը մենք կյանքի կկոչենք»²⁰:

Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի փոխադարձ կապն ուժեղացնելու հարցի մասին նա ասաց. «Դա լիովին համապատասխանում է մեր ներքաղաքական կուրսին: Հետևաբար այդ հարցը կբավարարվի»²¹:

Եպիսկոպոսաց ամենամյա և հիմա տարին մեկ Ազգային-եկեղեցական ժողով անցկացնելու թույլտվություն տալու մասին, ասվեց. «Դրա դեմ Խորհրդային կառավարության կողմից առարկություն չի լինի, ընդհակառակը, եթե այդ ժողովները հրավիրվելու համար Հայկական Եկեղեցուն պետք լինի ինչ-որ բանով օգնել, ապա այդ օգնությունը միշտ ցույց կտա Խորհրդային կառավարությունը»²²:

Այլ էր Բուլգանինի վերաբերմունքը երկրորդ նամակում պարունակած հիմնախնդիրների նկատմամբ, որոնք, ինչպես ճշվեց վերևում, ըստ Կաթողիկոսի արտահայտում էին «սփյուռքահայության տրամադրությունները»: Այնինչ դրանք Հայ դատի հիմնական բաղկացուցիչներն էին, որոնց լուծման մեջ կենսականորեն շահագրգռված էր համայն հայությունը՝ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայրենիքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԽՍՀՄ կառավարության առջև հարց էր բարձրացնում քայլեր ձեռնարկել.

ա) Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հայկական այն տարածքները, որոնք գտնվում էին Թուրքիայում, ինչպես նաև Խորհրդային Միությունում:

բ) Կազմակերպելու սփյուռքահայերի մեր հայրենադարձությունը:

Կաթողիկոսը մասնին փորձի հաշվառմամբ, խելամոռեմ, հայկական հողերը վերադարձնելու և սփյուռքահայերի մեր մերգաղթի կազմակերպման հարցերը ներկայացնում էր շաղկապված, մեկը թխնցնելով մյուսից, ճիշտ այնպես, ինչպես Ստալինը դրանից տասը տարի առաջ իրականացնում էր սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը՝ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ առաջադրելու հիմքեր ստեղծելու նպատակով:

Կիսելով այս մասին իր հաշվեկշռված մտածումները Բուլգանինի հետ, Վազգեն Առաջինը շեշտում էր, որ մեր հայրենադարձությունը մախընթացի համեմատությամբ ավելի

²⁰ Նույն տեղում, թ. 7:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

լավ և կազմակերպված անցկացնելու համար՝ «... հարկավոր է նախապես լուծել երեք խնդիր.

Որոշել այն տերիտորիան, որտեղ պետք է տեղավորվեն հայրենադարձները,

Ապահովել բոլոր հայրենադարձներին բնակարանով:

Նախօրոք ամեն ինչ նախապատրաստել նրանց աշխատանքով ապահովելու համար»²³:

Խորհրդային իշխանությունների համաձայնությունում ու աջակցությունը ձեռք բերելու համար, Կաթողիկոսը դիմում է հնարավոր բոլոր միջոցների՝ բարենպաստ գույմերով ներկայացնելու բախտորոշ այս խնդիրը: Նա հավատացնում է, որ, գտնվելով արտասահմանում, գրուցել է թագմաթիվ հայերի հետ, որ արտերկրի հայկական կազմակերպությունները պատրաստ են ներգաղթի հետ կապված բոլոր ծախսերը հոգալու: Ինչ վերաբերում է մնացյալ խնդիրներին և ամենից առաջ նրանց տեղավորմանը, ամօշուշտ, դրանք պետք է իր վրա վերցնել Խորհրդային կառավարությունը:

«Երբ ես մկատի եմ ունենում վերը նշված երեք հիմնախնդիրները, շարունակում է իր միտքը վեհափառը, - ապա, մասնավորապես, ես ցանկանում եմ հատկապես ծանրանալ առաջին հիմնախնդրի վրա, որն առնչվում է տերիտորիային: Հենց տերիտորիայի հետ եմ սերտորեն կապված երկու հարցերը իմ երկրորդ փաստաթղթում, քանի որ տերիտորիան, որի մասին ես խոսում եմ այդ փաստաթղթում, կարող է վճռել որոշ թվով հայերի այստեղ տեղավորելու հարցը»²⁴:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անտարակույս, չէր կարող չհասկանալ, որ իր երկրորդ նամակում առաջ քաշված հիմնախնդիրները չէին կարող անմիջապես լուծվել: Բայց շարունակելով իր նախորդների գործը, նպատակ ունեւ «տաք» վիճակում պահել դրանք, թույլ չտալ սոոաացության մատնվելու և երբ զար հարմար պահը, իսկ նա շատերի նման հավատում էր, որ վերջիվերջո այդ պահը գալու է, այդ խնդիրների քաղաքական լուծումը ապահովելու կոչված իրավասու պետական այրերը պատրաստ լինեին դրան, հանկարծակիի չգային և համարձակություն ունենային բախտորոշ վճիռ կայացնելու: Եվ երբ Բուլգանինը, ինչպես և սպասվում էր, կտրուկ չմերժելով հանդերձ Կաթողիկոսին, կասկած է հայտնում ներկա պահին այդ հարցերը բարձրացնելու և լուծելու նպատակահարմարության մասին, վազգեն Առաքինն անկեղծորեն պատասխանում է, որ ինքն իր պարտքն է համարում այդ ամենի մասին գրել՝ ամենևին չմտածելով, որ այդ հարցերը կարող են արագ լուծվել: «Ես գիտեմ այդ հարցերի բարդությունը, - ասում է նա, - և գրել եմ այն հաշվով, որ քեր ուշադրությունը դարձնեմ այդ հարցերի վրա: Ես ուզում եմ հուսալ, որ երբ հնարավորություն ընձեռվի, Միութենական կառավարությունն անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնի այդ հարցերի լուծման համար»²⁵:

Կաթողիկոսի մարգարեական կանխատեսումը իրականացավ 32 տարի անց: 1988-ին ստեղծվեց այդպիսի հնարավորություն՝ սահմանադրական ճանապարհով լուծելու Հայ

²³ Նույն տեղում, թ. 3-4:

²⁴ Նույն տեղում, թ. 4:

²⁵ Նույն տեղում, թ. 5:

դատի մի կնճիոր՝ Լեոնային Ղարաբաղի ինքնավար Մարզը Հայաստանի հետ վերա-
սրավորելու հարցը: Սակայն խորհրդային հասարակության «արմատական» վերակառուց-
մանը ձեռնամուխ եղած գործաչոփյան վերնախավը ոչ միայն քաղաքական իմաստություն
ու համարձակություն չունեցավ մեկընդմիջտ վճռելու այն, այլև իրարամերժ ու շփոթ որո-
շումներով խոր ու ամուրձելի փակուղի մտքեց խնդիրը:

«Ես համարում եմ, - ասում է Վազգեն Առաջինը Բուլզանցիի հետ հանդիպման ավար-
տին, - այս օրը պատմական է մեր Եկեղեցու կյանքում, այն երախտագիտությամբ կհիշվի
հայ ժողովրդի կողմից»²⁶: Դարձյալ անկեղծ էր Վեհափառը: Չնայած իր նախորդի դառը
փորձին, մա ուզում էր հավատալ խորհրդային մոր դեկավարության և Հայ Եկեղեցու
փոխհարաբերությունների բարելավման խոստումնալից սկզբի հաջող վերջավորությանն
ու հետագա զարգացմանը: Նա ամզամ ոգևորված էր: Եվ ինչպես կարելի էր չոգևորվել
գերտերության կառավարության նախագահի հրաժեշտի քաջալերիչ ջերմ խոսքերից:
Բուլզանցիը համոզվածություն հայտնեց, որ սա վերջին ընդունելությունը չէ, և առաջար-
կեց Կաթողիկոսին, վերստին դիմել խորհրդային կառավարությանը, եթե առաջանա ինչ-
ինչ մոր հարցեր:

Հանդիպումից հետո մոր հարցեր, իհարկե, առաջացան: Բայց դրանց լուծումը մեծա-
պես կախված էր հին հարցերի լուծումից, որոնք, սակայն, ամուրձելի էին մնացել:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ դեկավարության հետ մոր հանդիպումների անհրաժեշտու-
թյուն առաջանալու դեպքում, առանց երկմտելու խորհրդային կառավարությանը դիմելու
Բուլզանցիի բարի խորհրդին, ապա դա մույնպես չիրականացողավ: Վազգեն Առաջինի
մասնկներն ու դիմումները՝ հանդիպելու ԽՍՀՄ կառավարության մոր նախագահ Ն. Ս.
խրուշչովի հետ, որը միաժամանակ գլխավորում էր ԽՄԿԿ կենտկոմը, ոչ մի արդյունքի
չհասցրեցին:

Ամենայն Հայոց Հայրապետը կանգնում է ամելանելի մույն խնդրի առջև, որի առաջ
մեկ տասնամյակ առաջ կանգնել էր իր նախորդը: Ի՞նչ ամել, եթե չեն կատարվում ամզամ
գերագոր տերության առաջին դեմքերի խոստումները: Իսկ ելքը դարձյալ մույնն էր, միակը:
Պետք էր շարունակել պայքարը և ինչ գնով էլ լինի հասնել տրված խոստումների կատար-
մանը: Ինչ գնով լինի՝ շարունակել բարձրացնել հայկական հողերի վերադարձման խըն-
դիրը, այն չմատնել մոռացության: Հիասթափված, հուսախաբված լինելով, չհուսահատ-
վել:


Պատմությունը դարձյալ կրկնվում էր:

²⁶ Նույն տեղում, թ. 13:



Ա. ԷՋՄԱՆՈՒՄ (ՏԵՍ ՆԱԵՎ ՆԵՐԴԻՐԻ 2-ՐԴ ԷՋԻ ՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ)

Մարտի 1 (հինգշաբթի)



Արամ Խաչատրյան

19 $\frac{27}{xii}$ 73 թ

Երևան



ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՇԱՌԻԴՅԱՆ

ՄԻ ԴՐՎԱԳ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

«Երջանիկ է այն սպեղծագործողը, որը, լինելով իր հարազատ ժողովրդի և այդ ժողովրդի հոգևոր մշակույթի ծնունդը, աշխարհով մեկ ճանաչվում է որպես դարի մեծագույն արվեստագետներից մեկը: Առավել երջանիկ է այն աշխարհահռչակ վարպետը, որը վաղուց և բեղմնաշատ փուլ է գտել իր բոլոր հայրենակիցների սրտերում: Այդ երջանիկներից մեկը Արամ խաչատրյանն է: Երջանիկ է այն ժողովուրդը, որ ունի Արամ խաչատրյան»:

Գնահատանքի այս խոսքերով է բնութագրել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանն իր լավ բարեկամին ու մեծ գործընկերոջը:

Հայ ժողովրդի ականավոր գավակ Արամ խաչատրյանի տաղանդն իր արմատներով հասնում է մինչև հայկական ժողովրդական արվեստի խոր շերտերը, ապրում և սնվում է հայկականության հրաշալի ակունքներով:

Աշխարհն այսօր տնոնում է Արամ խաչատրյանի ծննդյան 100-ամյակը: Մակայն խաչատրյանական հզոր ու անկրկնելի արվեստի մասին չէ, որ ուզում եմ խոսել, այլ կոմպոզիտորի կյանքի մի շատ հեղաշրջիկ ու խուլիչ դրվագի, որի ակնապեսն ու վկան եմ եղել այն ժամանակ. երբ դեռ երիտասարդ սարկավագ էի, Հոգևոր ճեմարանի ուսանող:

1958 թվականի հուլիսի 19-ն էր, ամառային պայծառ ու սրևոտ մի օր: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր հյուրընկալ դռները բացել էր հայ ժողովրդի արժանավոր գավակի՝ արդեն մեծ ճանաչում ունեցող կոմպոզիտոր Արամ խաչատրյանի ու նրան ողբկցողների՝ դստեր, որդու և մի խումբ ուսանողների առջև:

Մայր Տաճարում վերանորոգման աշխատանքներ էին ընթանում. մեծ հեղաշրջությամբ ու սրտացավությամբ դրանց հետ ծանոթանալուց հետո, կոմպոզիտորը և նրան ողբկցողները մասնակցեցին Վազգեն Առաքին երջանկահիշատակ Հայրապետի կազմակերպած ընդունելությանը, որի ընթացքում գրույց ծավալվեց հայ երաժշտության ու հայկական Սփյուռքի մասին: Այնուհետև հյուրերի պարվին ճաշկերույթ կազմակերպվեց:

Հիշարժան այդ օրվա ամենաամոռաճանալի պառն, սակայն, վերջին ակորդն էր՝ Արամ խաչատրյանը պարվո հյուրերի տալավորությունների մատչանում իր խոսքը գրեց մայրենի լեզվով:

Վրաստանում ծնված, այնուհետև Մոսկվա տեղափոխված և ողջ կյանքն այնտեղ անցկացրած, սպեղծագործական բոլոր կյանքով ապրող մշտագրադ կոմպոզիտորի համար մայրենի լեզու սովորելու ամենամեծ խոչընդոտը ժամանակի սղությունն էր եղել թերևս:

Մակայն օրերից մի օր Հարավային Ամերիկայից դարձրական մի հայ աղջիկ նամակ է գրում սիրելի կոմպոզիտորին և խնդրում, որ նա հայերեն պարասխանի: Սրտառույց նամակն էր պարճառը, թե՛ տարիների չիրագործված ցանկությունը, Արամ խաչատրյանը սկսում է հայերեն գրել սովորել:

Երջանիկ պարահավանությամբ, թե հոգևոր մեծ խորհուրդ պարունակող օրինաչափությամբ, իր հայերեն առաջին խոսքը խաչատրյանը պահեց Երջանիկահիշատակ Վազգեն Առաջին Հայրապետի ներկայությամբ ու օգնությամբ: Հայոց Հայրապետը ներողամտորեն ու խնամքով ուղղեց սևագիր օրինակի փառասխալները: Սևագիրն այնուհետև որպես հիշատակ պահեցի ինձ մոտ:

«Խորին հարգանքի զգացումով այցելեցի Մուր Էջմիածին, որը հայ մշակույթի պարմության մեջ խաղացել է ոչ փոքր դեր: Ցանկանում եմ նոր ծաղկում այս հայ օջախին: Ցանկանում եմ հաջող գործունեություն հայկական ներկա իրավիճակի հետ: Հայրնում եմ խորին շնորհակալություն Վեհափառ Հայրապետին իր սիրալիք ընդունելության համար»:

Վերջում Վազգեն Վեհափառն օրհնեց Արամ խաչատրյանին՝ ասելով. «Մենք ծանոթ ենք, անշուշտ, Ձեր երաժշտությանն ու համբավին և ուրախ ենք, որ մեր ժողովուրդը ծնունդ է տվել Ձեզ նման երաժշտագետի, որը կարող է միայն պատիվ բերել Հայ Ազգին»: Սարկափաղներով ուրախությունից հուզվել էինք, երբ տեսանք, թե այդ աշխարհահռչակ մարդը ինչպես է խոնարհված, հուզմունքով համբուրում Հայոց Հայրապետի Աջը և խնդրում իր գավակներին ևս օրհնելու: Այո, մեծությունները խոնարհվել գիտեն:

Տարիներ շարունակ Արամ խաչատրյանի Հայաստան կատարած յուրաքանչյուր այցելություն յուրահատուկ հաշվեքվություն էր երազավոր ժողովրդի առաջ, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելությունը՝ հաշվեքվություն Վեհափառ Հայրապետի առաջ: Այս փոքրիկ հուշագրությունն ցանկանում եմ ավարտել Վազգեն Ա Հայրապետի հետևյալ խոսքերով.

«... Արամ խաչատրյանի երաժշտությունը լեցուն է խորունկ մտքերով, խոհերով, օծուն է լավարեսությամբ և մարդասիրությամբ: Արամ խաչատրյանի երաժշտությունը լույսերի հեղեղ է, գույների փառքիկ և կյանքի կրակով լի, որ երբեք չպիտի հանգի, նվազի, ընդհակառակը՝ հեղեղներն ավելի պիտի պայծառանա և պիտի մնա հավերժական արժեքներից մեկը մարդկային քաղաքակրթության պարմության մեջ:

... Ամեն անգամ, երբ Հայաստան էր գալիս փարբեր առիթներով, այցելում էր նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Մեզ անձնապես ուրախացնում էր իր ներկայությամբ, և կարծում ենք, որ իր այցելությունները Ս. Էջմիածին սովորական այցելություններ չէին նրա համար: Նա այսպեղ, այս սուրբ վայրում ինչ-որ նոր ծայներ էր լսում և նոր ներշնչումներ քաղում երկնքից»¹:

¹ «Էջմիածին», 1978, Ե, էջ 25-26:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՆԱՄԱԴԱՏԱՍԽԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԱՓԱՌ- ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐՍՈՒՄ*

Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միության և ընդհանրության հիմքը մրանց ընդհա-
մուր հավատն է կամ աստվածաբանությունը, հիմնված Տիեզերական երեք ժողովների՝
Նիկիայի 325 թ., Կոստանդնուպոլսի՝ 381 թ. և Եփեսոսի՝ 431 թ., Նիկիա-Կոստանդնուպոլ-
սի «Հավատո հանգանակի» և «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» քրիստոսա-
բանական բանաձևի վրա:

Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների այս ընտանիքը, որն իրենում ներառում է Ղպտի,
Եթովպական, Հնդկաստանի Ասորի Մալաբար Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղե-
ցիները, իսկ 1991-1992 թթ. ման Էրիթրեայի Ուղղափառ Եկեղեցին, կարող է բնորոշվել
որպես «Միասնություն բազմազանության մեջ», կամ հակառակը՝ «Բազմազանություն մի-
ասնության մեջ»: Փաստորեն, մրանց ունեն ոչ միայն ծիսական և կանոնական տարբեր
համակարգեր, այլև եկեղեցական վարչության տարբեր կառուցվածքներ և աստվածաբա-
նական ըմբռնումներ կամ ավանդույթներ, էլ չսսած մրանց ազգային լեզուները:

Ուստի, այս պատճառով հետաքրքիր է այն հարցադրումը, թե կա՞ն արդյոք Արևելյան
Ուղղափառ Եկեղեցիներում կանոնական կամ կառուցվածքային այնպիսի ըմբռնումներ և
ավանդույթներ, որոնց կարող են խոչընդոտել մրանց միասնությանը և անգամ խզել այն:
Մենք վստահաբար կարող ենք բացատել այս հարցադրման երկրորդ մասը, քանի որ այս
միությունը շատ ամուր է, կայուն և հաստատուն, ու չկա որևէ այնպիսի լուրջ հակասու-
թյուն և կամ հիմնահարց, որը կարող է խոչընդոտել կամ քայքայել այն:

Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները կարող ենք խմբավորել երեք գլխավոր ավան-
դույթների շրջանակում.

- ա) Ղպտի Ուղղափառ,
- բ) Ասորի Ուղղափառ,
- գ) Հայ Առաքելական:

Մյուս եկեղեցիները հարաբերվում են այս ավանդույթներին ու հատկապես Ղպտի և
Ասորի Ուղղափառ ավանդներին, ուստի մենք գլխավորաբար կընենք այս երեք Եկեղե-

* Կարդացվել է Արևելյան Եկեղեցիների իրավունքի Ընկերության 16-րդ կոնֆերանսում, 2003 թ. սեպտեմբե-
րի 8-ին՝ Ծաղկածորում:

ցիների կառուցվածքը. կանոններն ու կանոնագրությունը, ինչպես նաև մի քանի կարևոր սովորություններ:

1. Ղպտի Ուղղափառ Եկեղեցի

1.1. Կառուցվածքը՝ գուգահեռի մեջ դիտված քույր Եկեղեցիների հետ.

Համեմատելով Ղպտի Ուղղափառ Եկեղեցու կառուցվածքային համակարգը Հայ Եկեղեցու կառուցվածքի հետ, տեսնում ենք, որ այն ունի էական տարբերություններ: Ղպտի Ուղղափառ Եկեղեցում բարձրագույն օրինադիր և վճիռ արձակող ատյանը Պապ-Պատրիարքի նախագահությամբ գործող Սուրբ Սինոդն է: Այն միաժամանակ «հավատի և դավանանքի» համար պատասխանատու բարձրագույն մարմինն է: Այն կարող է մեկնաբանել հավատո հիմնադրույթները, առանց սակայն հակասելու ընդունված ըմբռնումներին¹: Սինոդը նաև քվեարկում ու ընտրում է ն' Պապին, ն' տեղապահ (Locum Tenens)², ով վարում է իշխանությունը և ստորագրում կարևոր փաստաթղթերը և հրավերներն այնքան ժամանակ, ինչքան որ Սուրբ Մարկոսի Աթոռը թափուր է մնում մինչև նոր Պապի ընտրությունը:

Ս. Սինոդի անդամներն են Պապ-Պատրիարքը, որպես եկեղեցական պետ, պատրիարքական տեղապահները, եպիսկոպոսներն ու մետրոպոլիտները, ինչպես նաև վանահայրերը և քորեպիսկոպոսները³: Անդամությունը Սինոդին «ցմահ է բոլոր եպիսկոպոսների և մյուս անդամների համար ևս»⁴:

Պատրիարքն ունի մեծ իշխանություն, սակայն նա չէ բարձրագույն իշխանությունը: Եկեղեցու բոլոր որոշումներն ընդունվում են Սուրբ Սինոդի կողմից, որը ստեղծում և ղեկավարում է տարբեր խորհուրդները, ինչպես վանական, հավատո, կրթության և թեմական գործերի ու եկեղեցական ծեսերի, նաև մյուս եկեղեցիների հետ կապերը⁵: Սինոդի քարտուղարությունը ևս կարևոր դեր է կատարում:

Հայոց Եկեղեցին ու եկեղեցական իշխանությունը, սակայն, ունի միանգամայն այլ կառուցվածք: Ղպտի Եկեղեցում իշխանությունը եթե կենտրոնացած է Սուրբ Սինոդի ձեռքում, ապա Հայոց Եկեղեցում այն բաժանված է Կաթողիկոսի, Գերագույն Հոգևոր խորհրդի, որը համապատասխանում է Ուղղափառ Եկեղեցիների Սուրբ Սինոդին, ինչպես նաև եպիսկոպոսական և Ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովների միջև:

¹ The Constitution and By-Laws of the Holy Synod for the Coptic Orthodox Church of Alexandria and the See of St. Mark (approved on June 2nd 1985), article No 10. See also "Pro Oriente Dialogue" / Booklet No 9 on Authority and Jurisdiction, Vienna 1998, էջ 35. (Սահմանադրություն և կանոններ Ալեքսանդրիայի Ղպտի Ուղղափառ Եկեղեցու և Ս. Մարկոսի Աթոռի (վավերացված 2 հունիսի 1985 թ.), հոդված հմ. 10: Տե՛ս նաև Պրո Օրիենտե, Երկխոսություն (իշխանության և արդարադատության մասին, տեղեկագիր, հմ. 9, Վիեննա, 1998 թ., էջ 35):

² The Constitution, ibid. articles N° 17 and 36, Pro Oriente Booklet № 9, էջ 35-36.

³ Սահմանադրություն, հոդված հմ. 6, տեղեկագիր, հմ. 9, էջ 35:

⁴ Կույն տեղում:

⁵ Սահմանադրություն, հոդված հմ. 29-35, «Պրո Օրիենտե, Երկխոսություն», Առաջնության մասին, տեղեկագիր, հմ. 4, Վիեննա, 1993, էջ 56:

Օսմանյան տիրապետության շրջանում Ղպտի եկեղեցին ևս ուներ Ազգային-կրոնական ժողով, որը, սակայն, հիմա ապանել է խորհրդակցական կոմիտեին⁶:

Եկեղեցական տարբեր «աստիճանի ձեռնադրությունները Ղպտի եկեղեցում թեև կատարվում են ժողովրդի հավանությանը և եպիսկոպոսի համաձայնությամբ»⁷, ժողովրդի դերը, սակայն, սահմանափակվում է ավելի շատ քննարկմամբ և հավանություն տալով, այնինչ Հայոց եկեղեցում աշխարհականների մասնակցությունը և դերը կաթողիկոսի, թեմակալ առաջնորդի և ծխական քահանայի ընտրության հարցում բավականին մեծ է:

I. 2. Պատրիարքների և եպիսկոպոսների ընտրությունը.

Ղպտի Ուղղափառ եկեղեցում Պապ-Պատրիարքը ընտրվում է բացառապես կուսակրոն հոգևորականներից⁸: Հայոց եկեղեցում կաթողիկոսը ևս ընտրվում է եպիսկոպոսներից և արքեպիսկոպոսներից և ի վերջո թեկնածուների եռանուն ցանկից, թեպետև, տեսականորեն, վարդապետներ, ոչ ամուսնացյալ սարկավագներ և անգամ աշխարհականներ կարող են իրենց և կամ էլ ազգային եկեղեցական ժողովի անդամների կողմից առաջադրվել կաթողիկոսության թեկնածու: Որպես կարևոր տարբերություն, հարկավոր է նշել Ղպտի եկեղեցու այն կանոնը կամ օրենքը, համաձայն որի, պատրիարքական թեկնածուն ընտրվում է Ս. Սիմոդի և «Եկեղեցու անդամների ներկայացուցիչների» կողմից⁹:

Ղպտի եկեղեցու սահմանադրության հմ. 13 հոդվածում ասվում է. «Ս. Սիմոդին է վերապահված Պատրիարքի թեկնածուի առաջադրումը, ընտրությունը, ձեռնադրությունը և գահակալական արարողության կազմակերպումը»: Պապը Ս. Սիմոդի հետ համատեղ է կատարում «եպիսկոպոսների ձեռնադրությունը»: Նույն կերպ թեմական եպիսկոպոսները ևս ընտրվում են «ժողովրդի համաձայնությունը ստանալուց հետո»՝ Ս. Սիմոդի կողմից, ապա Պապը հաստատում է ժողովրդի առաջադրած թեկնածուին, սակայն հստակ չէ, թե Սիմոդը ինչպես է ստանում թեմի հավատացյալների այս համաձայնությունը: 60-րդ հոդվածում այս մասին սակայն ասվում է. «Նոր եպիսկոպոս ընտրվում է ժողովրդի համաձայնությունը և հավանությունը ստանալուց, ինչպես նաև Նորին Սրբություն Պապի կողմից ժողովրդական այդ հավանության վավերացումից հետո այն պայմանով, որ ձեռնադրվողը հավատարիմ կմնա հավատո ուղղափառ դավանությանը և եկեղեցական կանոններին: Եթե Ս. Սիմոդի անդամների մեծամասնությունը դեմ է այս ձեռնադրությանը, ապա այն չպետք է տեղի ունենա»¹⁰:

Հայոց եկեղեցում թեմի հավատացյալներին ու հոգևորականներին ներկայացնող պատվիրակների ժողովում ընտրված թեմակալ առաջնորդից բացի կա նաև հայրապե-

⁶ Պրո Օրիննոն, տեղեկագիր, հմ. 4, էջ 57:

⁷ Պրո Օրիննոն, տեղեկագիր, հմ. 9, էջ 37:

⁸ Paul Verghese (Paulos Mar Gregorios). Koptisches Christentum. Die orthodoxen Kirchen Ägyptens und Ethiopiens (Die Kirchen der Welt, Bd. XII), Stuttgart 1973, էջ 46. Ընդունված կարգի այս փոփոխությունը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 19-րդ դարում, որպես հակազդեցություն որոշ եպիսկոպոսների քաղաքական զործունեության:

⁹ Հեռագրես, մույն տեղում:

¹⁰ Տես՝ Պրո Օրիննոն, տեղեկագիր, հմ. 9, էջ 37:

տական պատվիրակի՝ նվիրակի պաշտոնը: Վերջինս ուղղակիորեն նշանակվում է կաթողիկոսի կողմից և իր առաքելությունն իրականացնում է առանց ժամանակային սահմանակաման, եթե նրա դեմ որևէ հիմնավոր առարկություն չի բերվում:

Հայրապետական պատվիրակները վարում են Հայոց Եկեղեցու ոչ միայն այն երկրի առաջնորդությունը, ուր նշանակված են, այլև հարևան երկրների, ինչպես օրինակ. Փարիզի առաջնորդը, որպես Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ պատասխանատու է նաև Բելգիայի և Հոլանդիայի ղեկավարող եպիսկոպոսների համար. իսկ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակը առաջնորդ է Ավստրիայի, Սկանդինավիայի, Հունգարիայի, ինչպես նաև Չեխիայի և Սլովակիայի Համրապետության հայոց եկեղեցական համայնքների:

1.3. Եթովպական Ուղղափառ Եկեղեցի.

Արդեն ասացինք, որ Եթովպական Ուղղափառ Թեմաքեդ Եկեղեցու կանոնական ավանդույթը մեծապես նման է Ղպտի Եկեղեցու ավանդույթին: Ստորև ցանկանում ենք ներկայացնել այս ընդհանրության մի քանի բնորոշ գծեր.

Եթովպական Եկեղեցում ևս Ս. Սիմոնը «թարծրագույն մարմին է՝ պատասխանատու Եկեղեցու հոգևոր, վարչական և կառնական կյանքի համար»¹¹ կամ այլ խոսքերով՝ «Եթովպական Ուղղափառ Թեմաքեդ Եկեղեցում գերագույն իշխանությունը վերապահված է Ս. Սիմոնին»¹², որի անդամներն են հանդիսանում եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, բնականաբար, Պատրիարքի գլխավորությամբ: Սիմոնի որոշումները, սակայն, մասնակիորեն վերահսկվում կամ հավասարակշռվում են Ազգային ընդհանուր ժողովով (վերջինիս Ազգային գործադիր կոմիտեի հետ միասին) և Պատրիարքարանի հոգևոր գրասենյակով, որը որոշ իմաստով համապատասխանում է Մայր Աթոռ Սուրբ Էջիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին: Ազգային ընդհանուր ժողովն ընդգրկում է «բոլոր արքեպիսկոպոսներին, թեմական ավագ քահանաներին և հոգևորականությանն ու աշխարհականների մեկնությանը իշխանին» և «ընդունում Եկեղեցու վարչական գործերին և ունեցվածքին վերաբերվող որոշումներ և հանձնարարականներ, որոնք գործադրվում են Ս. Սիմոնի հավանությանն արժանանալուց հետո»¹³:

Այս համակարգը թեև մի փոքր տարօրինակ կամ անորոշ է թվում, սակայն մենք հավատում ենք, որ այն ի վերջո օգնում է որոշ չափով և որոշ դեպքերում համակշռել Սիմոնի գործունեությունը: Հոգևոր գլխավոր գրասենյակը խորհուրդ է, որը Պատրիարքի գլխավորությամբ վարում է Եկեղեցու ընթացիկ վարչական ու հոգևոր գործերը: Ի տարբերություն Ղպտի Եկեղեցու, Եթովպական Եկեղեցում Պատրիարքը ընտրվում է Ս. Սիմոնի անդամներից՝ Սիմոնի անդամների, ինչպես նաև ավանդական վանքերի և մեծաստանների վաճառարների և ողջ երկրի ծխական խորհուրդների մեկնությանը իշխանների կողմից¹⁴: Մեկ այլ

¹¹ Պրո Օրիենտե, տեղեկագիր, հմ. 4, էջ 66:

¹² Պրո Օրիենտե, տեղեկագիր, հմ. 9, էջ 81:

¹³ Պրո Օրիենտե, տեղեկագիր, հմ. 4, էջ 67:

¹⁴ Պրո Օրիենտե, տեղեկագիր, հմ. 4, 66, տեղեկագիր հմ. 9, էջ 86:

վարչական միավոր է «Ավրայա» անվանվող Միսական ընդհանուր ժողովը՝ խորհուրդը, որը միջանկյալ դիրք է գրավում Թեմական ընդհանուր խորհրդի և Տեղական ծխական ընդհանուր խորհրդի միջև, որը պատասխանատու է շրջանի բոլոր եկեղեցական գործերի համար և գործում է տվյալ թեմերի իշխանությունների հովանու ներքո¹⁵: Եթովպական Ուղղափառ Թեմաճեղո եկեղեցում թեմակալ եպիսկոպոս «ընտրվում է Ս. Սիմոնի և այլ թեմերի Միսական խորհուրդների կողմից, որոնցում մա պետք է մշանակվի: Ընտրվողը ձեռնադրվում է Պատրիարքի և Ս. Սիմոնի մի շարք անդամների կողմից համատեղ»¹⁶:

1.4. Նվիրապետությունը.

Ավանդական մյուս եկեղեցիների մասն Արևելյան Ուղղափառ եկեղեցիները ևս ունեն հոգևոր երեք աստիճան՝ սարկավագ, քահանա և եպիսկոպոս: Պատրիարքները կամ կաթողիկոսը հանդիսանում են քահանայապետ կամ զխավոր եպիսկոպոսներ և Ռիմնականում ունեն եպիսկոպոսի աստիճան: Հայոց եկեղեցում աստիճանադրությունը երկու մասից է բաղկացած. առաջինը՝ ձեռնադրությամբ, և երկրորդը՝ Նվիրագործման կամ օծման միջոցով, որը կատարվում է Հայոց եկեղեցու սրբազան յուղով՝ Սրբալույս Մյուռոնով: Քահանաները, եպիսկոպոսները և կաթողիկոսը ձեռնադրվում և օծվում են, իսկ սարկավագները կարգվում են ձեռնադրությամբ:

Հայոց եկեղեցու երկու առավել բնորոշ առանձնահատկություններն են. առաջին՝ սարկավագության իմաստիտուտը, պահպանված միայն Հայ եկեղեցում¹⁷, և երկրորդը՝ կուսակրոն քահանաներից վարդապետ ուսուցիչները, ովքեր հատկապես իրավունք ունեն ուսուցանելու և մեկնաբանելու Սուրբ Գիրքը և Հայոց եկեղեցու դավանանքը:

Արդեն 16-17-րդ դարերում լատին հեղինակները նկատել էին, որ «վարդապետները» կամ «դոկտորները» կարևոր դեր էին խաղում Հայոց եկեղեցում: Օրինակ, բելգիացի Հայր Սիմոնը իր «Կրոնների և սովորությունների պատմություն» գրքում գրում է. «Վարդապետ կամ դոկտոր կոչումն այնքան բարձր է հայերի մոտ, որ մրանք այն շնորհում են այնպիսի արարողություններով, որով հոգևորականի աստիճան են շնորհում և ասում են, որ այս կոչումը տրվում է Ռաբբի, որ մշանակում է վարդապետ, տիտղոսի հետևողությամբ: Նրանք դոկտորներ են, ովքեր քննում և որոշում են հավատքին վերաբերվող հարցերը»¹⁸:

Սկզբից եթե՝ 4-5-րդ դարերից Հայոց եկեղեցին ունեցել է վարդապետական այս կարգը, որը, սակայն, 14-րդ դարում նորովի սահմանեց Հայոց եկեղեցու մեծագույն աստվածաբանական հեղինակություն Գրիգոր Տաթևացին, վարդապետությունը բաժանելով երկու աստիճանի.

¹⁵ Պրո Երեմյան, տեղեկագիր, հմ. 4, 67, տեղեկագիր հմ. 9, էջ 82:

¹⁶ Պրո Երեմյան, տեղեկագիր, հմ. 4, 67, տեղեկագիր հմ. 9, էջ 86:

¹⁷ M. K. Krikorian, „An almost lost Tradition: the Deaconess in the Armenian Church” in: *Kanon XVI. Mutter-Nonne-Diakonin, Frauenbilder im Recht der Ostkirchen*, Verlag Kovar 2000, էջ 213-25 (Մ. Գ. Գրիգորյան, «Մի գրեթե մոռացված սովորություն. Սարկավագությունը Հայոց եկեղեցում»):

¹⁸ Father Simon, *The Critical History of the Religions and Customs of the Eastern Nations*, translated from the French text by A. Lovell. London, 1685, էջ 129.

1. վարդապետ.

2. Ծայրագույն վարդապետ:

Վարդապետին տրվում են վարդապետության առաջին չորս աստիճանները, իսկ ծայրագույն վարդապետին՝ հաջորդ տասը աստիճանները: Վարդապետները մեծ հեղինակություն և համբավ էին վայելում ժողովրդի մեջ և մրանք էին Եկեղեցու ուղղափառության պաշտպանները այն աստիճան, որ համարձակվում էին քննադատել ամգամ կաթողիկոսներին, եթե մրանք փորձում էին դավանական որևէ շեղում կատարել:

Նվիրապետության հետ կապված քննարկման վերջին կետը՝ Ամտիոցի Ասորի Ուղղափառ Եկեղեցու քորեպիսկոպոսի հիմնահարցն է: Սկզբունքորեն քորեպիսկոպոսը եպիսկոպոս է, որը պատասխանատու է կամ էր թեմի տարածքի մաս կազմող որևէ վիճակի համար: Այս իմաստով այն համապատասխանում է Եթովպական Ուղղափառ Թեմաբեկո Եկեղեցու «Ավրայա»-ին: Հիմա ավագ քահանաներն են այդպիսի վիճակների հովիվները: Ղպտի Եկեղեցին ևս ունի քորեպիսկոպոսներ: Ժամանակին Հայոց Եկեղեցին ևս ունեցել է սակայն այժմ չունի: Ասորական Ուղղափառ Եկեղեցուն քորեպիսկոպոսի կոչումը պահպանվել է որպես պատվավոր կոչում և որպես այդպիսին այն շնորհվում է ամուսնացյալ քահանաներն, սակայն մրանց վերապահված չէ թեմակալ առաջնորդ լինել կամ եպիսկոպոսական որևէ կանոն կատարել:

Կարծում ենք, ամուսնացյալ քահանաներին քորեպիսկոպոսական թեկուզև պատվո կոչում տալը ճիշտ չէ, քանի որ ավանդական բոլոր Եկեղեցիներում եպիսկոպոսական աստիճանի հետ կապված որևէ տիտղոսի կրողը կարող է լինել միայն կուսակրոն հոգևորականը: Ըստ երևույթին, Ասորի Եկեղեցուն այս փոփոխությունը եղել է բավականին վաղ, քանի որ եպիսկոպոսի ձեռնադրության կարգում որպես քորեպիսկոպոս են հիշվում և քահանաները:

1.5. Կրկնամկրտության հիմնահարցը.

Հայ Առաքելական, Ասորի Ուղղափառ և Ասորի Ուղղափառ Մալաբար Եկեղեցիները, որպես կանոն, վավերական են համարում և ընդունում Հռոմեական Կաթոլիկ, Արևմտյան Ուղղափառ և Անգլիկան, ինչպես նաև Բողոքական (հատկապես Ավետարանչական-Լյութերական) Եկեղեցիների մկրտությունը: Ղպտի Ուղղափառ և Եթովպական Թեմաբեկո Ուղղափառ Եկեղեցիները մինչև 1979/80 թվականը վերամկրտում էին այն բողոքականներին, ովքեր ցանկանում էին իրենց Եկեղեցու ամդամը դառնալ կամ ամուսնանալ իրենց եկեղեցական ծեսով: 1980 թ. հետո ղպտիները սկսեցին վերամկրտել մաս Հռոմեական Կաթոլիկ և Բյուզանդական Ուղղափառ այն քրիստոնյաներին, ովքեր ցանկանում են դառնալ իրենց Եկեղեցու ամդամը: «Եվ ամգամ, երբ խոսքը վերաբերվում է Ուղղափառ Եկեղեցիների հետևորդներին, մենք անհրաժեշտ ենք համարում, որ մրանք մեր Եկեղեցուն ամդամակցելու համար զրավոր դիմեն»¹⁹, ասում է Դամիեթթի Ամբա Բիշոյը՝ Ղպտի Ուղղափառ Ս. Սիմոնի գլխավոր քարտուղարը:

¹⁹ The Vienna Dialogue on Ecclesiology, Third Study Seminar, Pro Oriente Booklet № 7, Vienna 1995, էջ 123.

Այս հիմնախնդրի հետ կապված կցանկանալից վկայակոչել Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հռչակագրի այն հատվածը, որը վերաբերվում է ԱՄՆ-ում խառը ամուսնությունների կատարման քառամսյակյա հրահանգին. «Ղպտի և Եթովպական ընդունված կանոններն այնուամենայնիվ պահանջում են, որ ոչ Արևելյան Ուղղափառ ընտանիքից դիմողները, այդ թվում և բողոքական, լինեն մկրտված Ղպտի կամ Եթովպական Արևելյան Ուղղափառ Եկեղեցում մինչև ամուսնությունը: Արևելյան մյուս Ուղղափառ Եկեղեցիները պահանջում են ոչ Արևելյան Ուղղափառ ընկերակցությունից դիմողները ներկայացնեն իրենց մկրտված լինելը հավաստող համապատասխան փաստաթղթեր: Բոլոր դեպքերում, ոչ խառը ամուսնությունը կարող է վավերական համարվել առանց տեղական եպիսկոպոսի կամ հոգևորականի գրավոր հաստատման»:

Անցյալում քրիստոնյաները սովորաբար վերամկրտում էին հերետիկոսներին, քանի որ եկեղեցին չէր ընդունում նրանց ունեցած մկրտության վավերական լինելը, ինչպես Ս. Կիպրիանոսն է ասում. «Մեր հաստատումն այն է, որ նրանք, ովքեր զալիս են մեզ մոտ հերետիկոսությունից, մկրտվում են մեզ պես և ոչ թե վերամկրտվում»²⁰. Ղպտի Ուղղափառ Եկեղեցին մկրտում է Հռոմի կաթոլիկ, բողոքական կամ ուղղափառ քրիստոնյաներին ոչ այն պատճառով, որ նրանց իսկապես հերետիկոս է համարում, այլ որովհետև եկեղեցիների միությունը չի կայացել մինչև այժմ:

Ղպտի աստվածաբանները բազմիցս հայտարարել են. «Մեկ Աստված, մեկ հավատ, մեկ մկրտություն»²¹, առաջադրելով, որ մեկ մկրտություն Եկեղեցիների ներսում և միջև կարող է լինել, երբ նրանք դավանական առումով միավորված են մեկ ընդհանուր հավատի մեջ: Հատկապես շեշտվում են Հռոմեական Եկեղեցու հետ ունեցած տարբերությունները. «Մեզ համար տարբերություններ կան կաթոլիկ Եկեղեցու հետ, որի համար էլ վարվում են երկխոսություններ: Եթե մոտ ապագայում մենք փոխադարձաբար վերացնենք միմյանց ուղղված բացադրանքները, որը ես հավատում եմ, որ կարվի, այնժամ մենք կարող ենք ունենալ հավատո միություն և բոլոր խորհուրդների ընդունում»²², ասում է Ամբաստանապետը:

Եկեղեցագիտության վերաբերյալ «Պրո Օրիենտի» 1994 թ. հուլիսին կազմակերպած քննարկման ժամանակ նա նշեց մի շարք տարբերություններ, ինչպես, օրինակ, Հռոմեական Եկեղեցու կողմից ծայրագույն անհրաժեշտության դեպքում թույլ տալ յուրաքանչյուր մեկին աշխարհական կամ հոգևորական, քրիստոնյա կամ ոչ քրիստոնյա, կատարել մկրտության խորհուրդը, Հռոմեական Եկեղեցու այն ընթացումը, թե կարող է փրկություն լինել Եկեղեցուց դուրս, Filioque-ի (Բխման) հիմնախնդիրը²³, Ղպտի Արևելյան կաթոլիկ Եկեղեցու հարցը²⁴ և այլն:

Մեր կարծիքով, այնուամենայնիվ առկա բոլոր այս տարբերությունները չէին կարող պատճառ դառնալ վերամկրտություն կատարելու համար, ինչպես որ մինչև 1979/80 թթ.

²⁰ Pro Oriente Booklet N° 7, 67-68: H. Bettenson, The Early Christian Fathers, London 1969, էջ 271.

²¹ Eph. 4, 5:

²² Պրո Օրիենտի, տեղեկագիր հմ. 7, էջ 67, 123, 173:

²³ Նույն տեղում, էջ 123, 173:

²⁴ Նույն տեղում, էջ 90-100, 123:

Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու ամրամնքին չէին վերամկրտում Ղպտի եկեղեցում: Կարծու ենք այս վերամկրտության իրական պատճառը Կաթոլիկ եկեղեցու եզիպտոսում ծավալած միսիոներական գործունեությունն է: Ամբա Բիշոյի պատճառաբանությունը բավականին հստակ է և հասկանալի. «Ղպտի կաթոլիկները եզիպտոսում իրենց են ձգում մեր ժողովրդին, ասելով՝ մենք մույն հավատքն ունենք»²⁵:

Ղպտի եկեղեցում կատարվող վերամկրտության մյուս պատճառը պայմանավորված է տեղի մահմեդական միջավայրով: Ծարիաթը չի թուլատրում յառն ասունությունը քրիստոնյայի հետ: Որևէ մեկը եթե ցանկանում է ասունանալ մահմեդականի հետ, պետք է գրավոր ստորագրությամբ մահմեդականություն ընդունի: Վերամկրտությունն այս դեպքում օրենսդրական վավերացումն է սեփական պաշտպանության և դավանափոխության առաջն առնելու համար: Այս առումով Ղպտի Ուղղափառ եկեղեցին կարող է արդարացնել վերամկրտության առկա կարգը, սակայն, այնուամենայնիվ, այն հակասության մեջ է եկեղեցու կանոնական ավանդույթի հետ:

II. Օրենքների և համապատասխան կանոնների հակասությունը Ասորի Ուղղափառ եկեղեցիների հետ.

II. 1. Ներածություն.

Հայ և Ասորի եկեղեցիների միությունը հաստատվել էր 6-րդ դարի կեսերին (553-555 թթ.), երբ հայերը պաշտոնապես մերժեցին Քաղկեդոնի ժողովի՝ 451 թ., որոշումները և դատապարտեցին Քաղկեդոնի քրիստոսաբանությունը: Այս մերժման մեջ Ասորի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները, փաստորեն Հուլիանոս Հալիկաոնացու կողմնակիցները (6-րդ դար) իրենց մասնակցությունն ու ազդեցությունն ունեցան: 551-552 թթ. ասորական մեծաստամների մի ջանքի վանահայրեր Ներսես Բ Բագրևանդցի Կաթողիկոսին (կթղ. 548-557 թթ.) նամակ գրեցին, որում նրանք դատապարտում էին Քաղկեդոնի ժողովը, Լեոնի Տումարը, Ապոլինարին (Հավոդիկեի եպիսկոպոսը 374-392 թթ.), Եվտիքիսին, ինչպես նաև Սևերիանոսին (Անտիոքի եպիսկոպոսը 512-518 թթ.) և խնդրում իրենց եպիսկոպոս ձեռնադրել «գրեզ այդ Աբդիսոյ երեց, ի վանաց Սարգսայի»²⁶:

Ավելի հավանական է, որ Աբդիշոն ձեռնադրվել է Հայաստանում 553 թ., իսկ 555 թ. Դվինի երկրորդ ժողովում ասորիներն ու հայերը համատեղ դատապարտեցին Քաղկեդոնի ժողովը, որպես ճշտտորականություն և վերստին հավաստեցին իրենց հավատարմությունը «Մեկ ընության» (Մեկ է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ) քրիստոսաբանությամբ: Ժողովին նաև վերադառնալուց հետո Աբդիշոն մի ջանքի նամակներ է գրել ուղղված Ներսես Բագրևանդցի կաթողիկոսին, նրան և ընդհանրապես հայերին զգուշացնելով

²⁵ Նույն տեղում, էջ 123, 173:

²⁶ Գիրք թղթոց, երկրորդ հրատարակություն, Երուսաղեմ, 1994, 172-75: (Առաջին հրատարակությունը Թիֆլիս, 1901, 52-54), երկրորդ՝ Տեր-Միմասյանց, Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ, Ս. էջմիածին, 1908, 90-115, Մաղաքիա պատրիարք Օրմանյան, Ազգապատում, Ս. էջմիածին, 2001, հտ. 1-իմ, էջ 622-28, 633-39:

ճեստորակամ աղանդից և դատապարտելով ճեստորականության գլխավոր ճերկայացուցիչներին՝ Տարսմի եպիսկոպոս Դիողորին (379-384 թթ.), Թեոդոր Մոպսուեստացուն (392-428 թթ.), Կոստանդնուպոլսի Նեստորիոս եպիսկոպոսին (428-431 թթ.), Կիրիակի եպիսկոպոս Թեոդորեսին (մահ. 457 թ.), ինչպես նաև Քաղկեդոնը (451 թ.), Լևոնի տումարը և Սևերիոս Ամտիոքացուն (512-518 թթ.)²⁷:

Բնականաբար, շատերի համար Սևերիոս Ամտիոքացու դատապարտումը, ով համարվում էր Աստրի Հակոբիկ Եկեղեցու սյուն, «Եկեղեցու գլխավոր հայր» և «գերազանց քարոզիչ», կարող է տարօրինակ թվալ, սակայն մենք այս հարցին պետք է մայնց մղված ճերքին վնճի համատեքստում կապված Քրիստոսի մարմնի անապականության հարցի հետ: Արդիշոն Հուլիանոսի հետևորդն էր և հետևաբար Սևերիոսի ու սևերիանականության հակառակորդը:

Ժամանակի ընթացքում երկու ճշանավոր եպիսկոպոսների հետևորդները հայտնվում են հակադիր ճամբարներում՝ սեվերիանականները մեղադրվում էին ապականության կամ եղծելիության ուսմուցքի և Աստվածաչարչարության համար, իսկ Ռուլիանոսականները հետևորդներն էին համարվում երևութականության ըմբռման, համաձայն որի, Քրիստոս միայն երևութապես է մարմնով հայտնվել: Ներսես Բագրևանդցի կաթողիկոսին հասցեագրված նամակում Արդիշո եպիսկոպոսը գրում է. «Բայց և այլ հերձուածողք, որ ունիմ զՍևերոսի չար ուսումն և ասեն թե՛ Մարմինն Տեառն ապականացու էր ի խաչին, եւ ապականութեան հմազանդեցաւ, եւ յանդգնեալ մոյնպէս ասեն, թե՛ Յորժամ չարչարեցաւ Մարմինն Տեառն ապականութիւն ընկալաւ, եւ զայն ոչ լսեն, զոր Պետրոսն ասէ²⁸, թէ Մարմինն Նորա ոչ ետես զապականութիւն»²⁹:

555-ից մինչև 726 թ. Հուլիանոսի հետևորդները ավելի մեծ ազդեցություն ունեին Հայաստանի վրա, քան սեվերիանականները, սակայն 8-րդ դարի սկզբից Արևմտաասորական Պատրիարք Աթանասիոսը և Հայոց Կաթողիկոս Հովհաննես Օճեցիին (կթղ. 717-728 թթ.) կարողացան համաձայնության հասնել միության հարցում նախ թղթակցությամբ, ապա և հանդիպմամբ 726 թ. Մանազկերտի ժողովում:

Հայոց Եկեղեցու կողմից ժողովին մասնակցել են կաթողիկոսը, քսաներեք եպիսկոպոս և երեք վարդապետ, մինչդեռ ասորական կողմից եկել են միայն Եդեսիայի 6 եպիսկոպոս: Այս ժողովում հայերն ու ասորիները քննարկել են որոշ ծիսական հարցեր և մարդեղությանը վերաբերող խնդիրներ, սակայն քննարկումների և համաձայնության գլխավոր թեման, իհարկե, Քրիստոսի մարմնի անեղծական լինելու հարցն էր: Թեև վավերագրերն այս հարցում հստակ չեն, սակայն, իհարկե, ժողովի մասնակիցները մախընտրել են միջին ուղին, դատապարտելով և՛ Հուլիանոսի, և՛ Սևերիոսի ծայրահեղական հետևորդներին: Այս

²⁷ Գիրք թղթոց, 2-րդ հրտ., էջ 182, 185, 191-192:

²⁸ Հմմտ. Գործք Բ, 31:

²⁹ Գիրք թղթոց, 2-րդ հրտ., էջ 183:

համաձայնությունն արդյունավետ էր և շարունակվեց հաջորդող հարյուրամյակներին, հասնելով մինչև մեր օրերը, չնայած մի քանի ծիսական տարբերությունների³⁰:

II. 2. Գիոմիսիոս Բար-Սալիբիի բանավիճային գործն ընդդեմ հայերի.

Չնայած Մանազկերտի 726 թ. ժողովի համաձայնությանը, որը գործում է մինչև այսօր, այնուամենայնիվ բուռն քննարկումները և բանավեճերը շարունակվեցին հաջորդող դարերում ևս, մինչև մոնղոլական արշավանքները 13-րդ դարում: Հիշենք Գեորգ Գ Լոռեցի աթոռակից (1067-1072 թթ.) Կաթողիկոսի և Ասորիների Հովհաննես Բար-Օուշան Պատոհարքի (պատր. 1064-1073 թթ.) միջև թղթակցությունը³¹, խոստովիկ թարգմանչի գործը Քրիստոսի մարմնի անապականության մասին³², Գրիգոր Մագիստրոսի թուղթն ուղղված, հավանաբար, Բար-Օուշանին³³, Բար-Սալիբիի բանավիճային գործը³⁴ և վերջապես Ներսես Օմորիայի Հայրապետի (կթղ. 1166-1173 թթ.) թղթերն ուղղված ասորիներին³⁵: Հայաստանում բանավեճերը հատկապես բուռն էին 11-րդ դարում, և Բար-Սալիբիի գործը մի բնորոշ օրինակ է, ուստի ճիշմանականում կանոնադառնացն անապականության մեղադրանքներին և քննարկված հարցերին, բնականաբար անդրադառնալով մաև այլ վավերագրերի:

Գիոմիսիոսը ժամանակի ճանաչված ուսյալ մարդկանցից էր: Ծնվել էր Մալաթիայում Պատմական Հայաստանի Մելիտինե քաղաքում: Նա եղել է Մարաշի մետրոպոլիտը Կիլիկիայում, իսկ 1156 թ. դառնում է Մաքբոզի եպիսկոպոսը Ասորիքում, այնուհետև գնում Ամիդ, ուր և մահանում է 1171 թ.: Օմորիայում վախճանվելուց երկու տարի առաջ:

Օմորիայի երկար տարիների այս շփման, ճալով էր ճանաչում հայերին, Հայոց Եկեղեցին և ծեսերը, ուստի կարող էր գրել հայերի մասին կողմ կամ դեմ:

³⁰ Մանազկերտի ժողովի մասին տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցին, էջ 172-208, Օրմաշյան, Ազգապատում, հտ. Ա, էջ 975-1082, Walter Selb, Orientalisches Kirchenrecht, Bd. II, Die Geschichte des Kirchenrechts der Westsyrier. Verlag der ÖAW, Wien 1989, էջ 192-93, 203.

³¹ Եովհաննէս Բար-Օուշանի Հայոց Կաթողիկոսին գրած թուղթը. ուսումնասիրեց ու ասորի ռմագիրէ թրգմ. Հ. Ա. Վարդանեան, Վիեննա, 1923, 102 էջ:

³² Գարեգին վրդ. Հովսեփյան, խոստովիկ Թարգմանիչ (Ը դար), Պատմական-մատենագրական ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1899:

³³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատասիրությամբ Կարապետ Կոստանյանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 148-164:

³⁴ A. Mingana, The Work of Dionysius Barsalibi against the Armenians, Cambridge, 1931 (Woodbrooke Studies: Christian documents in Syriac, Arabic and Karsbuni, editions and translations, vol. IV). Paul Essabalian, a member of the Mechilvarist Congregation in Vienna, has translated this work from Syriac into Armenian: The Polemic of Dionysius Bar-Salibi against the Armenians, Vienna 1938.

³⁵ Ընդհանրական թուղթը Ա. Ներսիսի Օմորիայում, Երուսաղեմ, 1871, էջ 205-206, 230-40, 275-89:

Բանավիճային համամասն գործեր նա գրել է նաև հրեաների, մահմեդականացների, ընտրականների և քաղկեղոնականների դեմ: Նա հեղինակ է և սուրբգրային ու Նիկիայի Հավատո Հանգանակի մեկնությունների և կանոնների ժողովածուների³⁶:

Դիոնիսիոսը լինելով Ալեքսիոսի հետևորդը, պաշտպանում էր նրա վարդապետությունը՝ Բրիստոսի մարմնի անեղծելիության մասին: Հետևաբար «սևերիոսական հերետիկոսություն»³⁷ արտահայտությունը չի պատկանում նրա գրչին: Ըստ երևույթին, Հուլիանոսի վարդապետության որևէ կողմնակից իր կողմից մեծ հավելում է կատարել նրա այս երկում: Հիշյալ գործի սկզբում նա պատմում է Հայոց Դարձի մասին և հայերին ներկայացնում որպես Ուղղափառ Եկեղեցու հայրերի հետևորդ: Այնուհետև նա գրում է. «Իսկ երբ Քաղկեդոնի ժողովը գումարուեցաւ, որ Քրիստոսը երկու բնութեանց բաժնեց, հայերը թողուցին քաղկեդոնականները և մեզ միացան»³⁸: Դիոնիսիոսը ապա անդրադառնում է Բրիստոսի մարմնի անապականությանը, գրելով. «Քրիստոսի մարմինը ծնունդէն մինչև յարության ապականացու կը կոչուի, այնու, որ կերաւ, խմեց ու չարչարանքներ կրեց, քայց գերեզման դրուելով չքայլայեցաւ կամ չապականեցաւ: Ենտոյ գիտուն վարդապետները հայերը համոզեցին և ճշմարտութեան դարձուցին»³⁹:

*Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ
Քրիստոս Աստուած եւ Փրկիչ անձանց մերոց
Ջքեզ քարեբանեմք Աստուածածին կոյս*⁴⁰:

*Եւ ծնար ի Սուրբ Կուսէ
Անապական մարմնով
Ջքեզ անդադար քարեբանեալ մեծացուցանեմք*⁴¹:

Դիոնիսիոս Բար-Սալիբին Ռիշատակում և քննադատում է մի քանի մոլորություններ, որոնք միշտ չէ, որ մոլորություններ են, այլ իր կողմից սխալ հասկացված և մեկնաբանված ըմբռնումներ, ինչպես նաև երկու Եկեղեցիների միջև գոյություն ունեցող պարզ տարբերություններ:

Ստորև կներկայացնենք այն գլխավոր հիմնահարցերը, որոնք հատկապես կապվում են կանոնական իրավունքի հետ.

³⁶ Concerning the literary works of Dionysius see A. Baumstark, *Geschichte der syrischen Literatur*, Bonn 1922, 295-98; W. Wright, *A short History of Syriac Literature*, London 1894, 246-50, and Selb. *Die Geschichte des Kirchenrechts der Westsyrier*, *ibid.*, 164-65 (Դիոնիսիոսի գրական գործերի մասին տե՛ս նաև գերմաներեն՝ Ա. Բաուստարկ, *Ասորական գրականության պատմություն*, Բոնն, 1922, 295-98, նաև գերմաներեն Վ. Վրայթ, *Ասորական գրականության համառոտ պատմություն*, Լոնդոն, 1894, 246-50 և Ջելը, *Արևելյան ասորիների եկեղեցական գրեցությունների պատմություն*, Մոսկով տեղում, էջ 164-165):

³⁷ Դիոնիսիոս, *Հակաճառություն*, էջ 47:

³⁸ Նույն տեղում, էջ 8:

³⁹ Նույն տեղում, էջ 9-10:

⁴⁰ Շարակոթց, Կ. Պոլիս, 1838, էջ 23 (48):

⁴¹ Նույն տեղում, էջ 52, տե՛ս նաև էջ 279:

II. 3. Անթրախտի հաց և անխառն գինի.

Բուրից շատ վեճի տեղիք տվող հիմնահարցը Հաղորդության անթրախտի հացի և անխառն գինու՝ առանց ջուր խառնելու գինու խմորն է: Քրիստոնեական բոլոր Եկեղեցիները Հաղորդության գինուն ջուր եմ խառնում, բացառությամբ հայկականից, և գրեթե բոլոր Եկեղեցիները Պատարագը կատարում են թթխման հացով, բացի Հոմեական Կաթոլիկ և Հայոց Եկեղեցիներից: Եթովպացիներն են միայն, որ չեն գործածում խաղողի գինի, այլ՝ չամիչի: Գինին պատրաստվում է չորացած չամիչից: Դրանք ջրում թրջվելու են դրվում երեքից հինգ ժամ և հյութը քամվում է ամանների մեջ, ուր այն մնում է մինչև գործածման պահը⁴²: Միայն Արևմտաստորական Եկեղեցին է, որ թթխմանով հունցված Հաղորդության հացին խառնում է աղ և յուղ:

Բար-Սալիբից պաշտպանում է ասորական ավանդույթը հետևյալ փաստարկմամբ. Ադամի մարմինը, մամապես և Քրիստոսինը, ունեն չորս տարրեր՝ հող, ջուր, կրակ և օդ, գոմարած հոգին: Հստ Բար-Սալիբիի, հացի այդպիսի խորհրդանշում է հողը, ջուրը՝ ջուրն է, աղը խորհրդանշում է կրակը և թթխմանը՝ օդը, իսկ յուղը՝ հոգին⁴³: Նույն կերպ, ցերեկայացվածի հոգևոր-ալյաքանական խորհրդով ասում է, որ աղը խորհրդանշում է սերը, թթխմանը՝ միտքը, և յուղը՝ Աստծո գթասրտությունը, մաս հույսը⁴⁴:

Այնուհետև Դիոմիսիոսը ցերեկայացնում է թթխման օգտագործման աստվածաբանական բացատրությունը, գրելով. «Խմորը կը նշանակե դարձեալ մարմնաւոր աճումը Բանին Աստուծոյ, ինչպէս որ խմորը կաճեցաւ և կ'աւելցաւ ալիւրը, այդպէս մաս մեծցաւ Բանը մարմնով, մինչ էութեամբ կատարեալ էր և աճելու պէտք չուներ: Թթխմանը դարձեալ կը խորհրդանշէ այն հոգին, որ միացաւ Բանին հետ, և նշխարի մէջ աղը կը խորհրդանշէ միտքը, զոր Բանը մարմնաւորութիւն առաւ»⁴⁵: Այս ամենից կատարվող եզրակացությունը բանավիճային մեղադրանք է. «Ամեն մի զոհ աղով պիտի համեմտուի»⁴⁶: Այս միտքը վերաբերվում է բոլոր զոհաբերություններին, սակայն հատկապես շեշտում է, որ նրանք, ովքեր կատարում են Պատարագը անթրախտի հացով առանց աղի, նրանք զոհաբերում են մարմին, որը պակասավոր է⁴⁷:

Փաստորեն աղի և ձեթի կիրառումը հակասում է Տիեզերական Եկեղեցու ավանդության, ուստի և այս հարցում որևէ մեղադրանքը կարող է շրջվել իրենց՝ ասորիների դեմ, քանի որ այն չի հիմնավորվում Տիեզերական Եկեղեցու կամ տեղական ժողովների որևէ որոշմամբ:

Ասորի Եկեղեցու այս քուռն քննադատություններին հայ աստվածաբանները պատասխանել են երկու փաստարկով: Առաջին՝ այն ժամանակ, երբ Քրիստոս սահմանեց Հաղոր-

⁴² The Oriental Orthodox Churches in the United States, editor Robert F. Taft SJ, Washington D.C. 1986, էջ 15:

⁴³ Դիոմիսիոս, Հակաճառություն, էջ 41:

⁴⁴ Նույն տեղում, էջ 41-42:

⁴⁵ Նույն տեղում, էջ 42-43:

⁴⁶ Հմմտ. Մկ. Թ. 49:

⁴⁷ Դիոմիսիոս, Հակաճառություն, 43: Համանման փաստարկներ է քերում մաս Հովհաննես Բար-Օուշանը իր թղթում, տես Քայքայեմ Քրատարակությունը, Վիեննա, 1923, էջ 37-50:

դուրյան խորհուրդը, Բաղարջակերպ տոմի առաջին օրն էր, և աշակերտները եկան Հիսուսի մոտ ասելով. «Ո՛ր ես կամենում քատրաստեմք քեզ համար գատկական ընթրիքը, որ ուտես»⁴⁸։ Երեկոյան Հիսուս ընթրիքի մասեց տասներկուսի հետ. «Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուս վերցրեց հացը, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»⁴⁹։

Հետևաբար պարզ է, որ վերջին ընթրիքին, երբ Զատկական գառը պետք է գեցվեր, հացը, որ Հիսուս կիսեց և ճաշակեց իր աշակերտների հետ, անթթխմոր էր⁵⁰։ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը վկայակոչում է հրեական Զատիկի ծեսը Մովսեսի կողմից, համաձայն Տիրոջ խոսքերի. «Բոլոր նրանք, ովքեր առաջին օրից մինչև յոթերորդ օրը թթխմորով հաց կուտեն, կվերացվեն իսրայելացիների միջից»⁵¹։

Ըստ Օձնեցու, անթթխմոր հացով կատարումն ավանդվել է Ս. Գրիգոր Լուսավորչից. «ով այն կատարեց համաձայն Հից Օրենքի»⁵²։

Երկրորդ փաստարկը, թթխմորը, «օտար» տարր կամ մյուս է, որը կարող է բորբոսնել, կամ ազդել, որ հացը բորբոսնի, որով այն դառնում է ապականության տարր, ուստի այն չպետք է խառնվի հացին, որը խորհրդանշում է Քրիստոսի անապական մարմինը Հաղորդության ժամանակ, որով և դառնում է աստվածաբանական փաստարկ Քրիստոսի մարմնի անապականության հարցում։ Աթոռակից Գեորգ կաթողիկոսը (1067-1072 թթ.) մեղադրում էր ասորիներին, որ նրանք թթխմորով, աղով և յուղով աղարտում են Հաղորդության հացը, որը Քրիստոսի մարմնի օրհնակն է⁵³։

Նա ասում է, որ անթթխմոր հացը բնական է և որ թթխմորը վերափոխում է սկզբնական այս բնությունը։ Ամանիա Սանահնեցին ևս բերում է այս փաստարկը, որ թթխմորված հացը չի կարող մեղքերի թողություն պարգևել, քանի որ այն խառնված է ապականացու տարրերի հետ և չի կարող լինել Քրիստոսի մարմինը, քանի որ Տիրոջ մարմինը անապական լինելով, չի կարող վերաներման ենթարկվել։ Այնուհետև Սանահնեցին վկայակոչում է Ասորական եկեղեցու մշակավոր հայրերը Ս. Եփրեմ Ասորուն, ով «Թագավորությանց գրքերի» իր մեկնությունում գրում է. «Հացն առաջադրության խորհուրդ էր անապական Մարմնոյն Տեառն մերոյ, զոր առեալ Ռաիթ եկեր, և որք ընդ մման էին, զի յայտ լիցի, թե ամենեքեան ճաշակելոց էին զանապական Մարմինն Տեառն մերոյ Թիսուսի Քրիստոսի»⁵⁴։

Անապականության մույն փաստարկը վերաբերվում է և գինուն ջուր խառնելուն։ Հայերը Հաղորդության ժամանակ մաքուր գինի են գործածում՝ առանց «օտար» տարր կամ ջուր

⁴⁸ Մատթ. ԻԶ 17-19, Մաթկ. ԺԳ 12-16, Ղուկ. ԻԲ 7-13, Հովհ. ԺԸ 28, ԺԹ 14։

⁴⁹ Մատթ. ԻԶ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19։

⁵⁰ Տե՛ս Հովհաննես Օձնեցի, Գիրք թղթոցում, 2-րդ հրտ., էջ 470-471, Գեորգ Լոռեցի, Գիրք թղթոցում, էջ 625-35, Ամանիա Սանահնեցի, աշխատասիրությանը Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2000, էջ 300-302։

⁵¹ Ելք ԺԲ 15։

⁵² Հովհաննես Օձնեցի, Մատեմադրութիւնք, Վենետիկ, 1953, 36, հմտ. Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 133։

⁵³ Գիրք թղթոց, մույն տեղում, էջ 626։

⁵⁴ Ամանիա Սանահնեցի, Ոջվան աշխտ, էջ 301։

խառնելու, այն հիմնավորմամբ, որ Հաղորդության խորհուրդը հաստատվեց Վերմատանը խորհրդավոր ընթերցում և ոչ թե խաչի վրա, երբ հոռմեացի զինվորներից մեկը գեղարդով խոզեց Քրիստոսի կողը և «իսկույն արյուն և ջուր եղավ»⁵⁵:

Էկումենիկ շարժման մշակավոր դեմքերից Ներսես Շմորինյան Հաղորդության հայկական ավանդույթը պաշտպանելուց հետո, կարևորելով թույն խորհուրդը և վերջինիս սի-րով ու հավատով կատարումը, գրում է. «Ջի թե ջրով ոք կատարե և եթե առանց ջրոյ, ոչ և ընդ միոյ ի սոցաճէ՝ կամ փառս ընդունիցի յԱստուծոյ և կամ տանջանս, այլ որք սուրբ սըր-տիւ և ուղիղ հոգսով մատուցանեն, փառաւորիմ ի մամճէ և որք անմաքուր խորհրդով և վատթար գործովք, տանջանաց ակնկալիցից՝ որով օրինակաւ և կատարեսցեն, եթե անա-պակ և եթե խառնեալ ընդ ջրոյ»⁵⁶:

II. 4. Քրիստոսի Ծննդյան տոնը.

Ասորիների և հայերի միջև առավել քննարկված հարցերից մեկը Քրիստոսի Ծննդյան տոնի օրն է: II դարի հեղինակ Կղեմես Ալեքսանդրացին մկարագրում է, որ Բասիլիդեսի գնոստիկյան աղանդի հետևորդները Աստվածհայտնությունը կամ Մկրտությունը տոնում էին հուլիսի 6-ին (15-ին)⁵⁷: Երուսաղեմում կամ Եգիպտոսում միմյան 5-րդ կամ 6-րդ դարը Քրիստոսի ծնունդը և Աստվածհայտնությունը տոնվում էին միասին:

Բթղեհեմում հունվարի 6-ի մախօրեին քրիստոնյաները հավաքվում էին Ծննդյան այրի վրա կայսրուհի Հեղինեի կառուցած եկեղեցում և տոնում Քրիստոսի Ծնունդը, իսկ հաջորդ օրը՝ Աստվածհայտնությունը, միաժամանակ մկրտելով Եկեղեցու մոր անդամ-ներին: Արևմտաառաքյան Եկեղեցին ևս Քրիստոսի Ծնունդն ու Աստվածհայտնու-թյունը տոնում էր միասին, սակայն 386 թվականից կամ դրանից հետո Ծնունդն սկսվել է տոնվել դեկտեմբերի 25-ին և Աստվածհայտնությունը՝ հուլիսի 6-ին: Արևմուտքում, ավելի որոշակի Հռոմում, արդեն Կոստանդինոս կայսրի ժամանակ քրիստոնյաները Քրիստոսի Ծնունդը տոնել են դեկտեմբերի 25-ին:

Ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին թե հուլիսի 6-ին կատարելու վեճին իրեն բնորոշ էկումենիզմի ոգով ամոքադառնալով, Շմորինյան Հայրապետը գրում է, որ եկեղեցական տոների տոնակատարությունների մեջ եղած օրերի տարբերությունները մրանց պարու-նակած հոգևոր խորհրդին որևէ վնաս չեն պատճառում և ավելի կարևոր է ունենալ առողջ և ճշմարիտ հավատ ու փառաբանել Աստծուն⁵⁸:

⁵⁵ Հովհ. ԺԹ 34:

⁵⁶ Ներսես Շմորինյան, Հնդհանրական թուղթը, էջ 135:

⁵⁷ Hans Lietzmann, Geschichte der Alten Kirche, Paperback Edition by Walter de Gruyter, Berlin-New York 1999, III էջ 321 (975).

⁵⁸ Ներսես Շմորինյան, Հնդհանրական թուղթը, էջ 94-96, 135-138:

II. 5. Զոհ մատուցելու սովորությունը.

Բար-Սալիքիի մեկ այլ մեղադրանքը, որը հաճախ կրկնվել է նաև հույների և լատինացիների կողմից, վերաբերում է զոհ մատուցելուն կամ մատաղի՞ն, որը կրոնա-ծիսական արարողություն է, քանի որ սկզբում քահանան օրհնում է աղը և այն տալիս ուտելու գառանը, ապա կենդանին զոհաբերվում է և եփված միսը բաժանվում: Մատաղ կարող է կատարվել ցանկացած ժամանակ, բացի պահքի օրերից: Հնում տարածված է եղել Աստծուն զոհ մատուցել Զատիկին, որի ժամանակ երբեմն նաև գառան արյամբ ցողել են տան ներսը որպես օրհնություն: Բար-Սալիքին քննադատում է այս սովորությունը որպես հրեական և մեղադրում հայերին, որ նրանք շարունակում են հետևել Հիմ Ուխտին, առանց իմանալու, որ Մովսեսի փոխարեն եկել է Հիսուսը, Հնգամատյանի փոխարեն՝ Ավետարանը, շաբաթի փոխարեն՝ կիրակին, եզան և ոչխարի փոխարեն՝ ճշմարիտ Գառը⁵⁹: Շնորհալից հերքում է Դիոնիսիոսի մեղադրանքները, վկայակոչելով ավետարանական վկայություններն ի պաշտպանություն հայկական սովորության, շեշտելով, որ մատաղը գալիս է նախաքրիստոնեական շրջանից և հաստատվել ու օրհնադրվել է Ս. Գրիգոր Լուսավորչից: Այնուհետև ասում է, որ եթե այն անգամ Լուսավորչի կողմից չի կատարվել, «այլ ի վերջնոյ ոմանց և յանձաճանից, զինչ պատճառ վնասու զոյ ի մատաղն կամ ի Զատիկն կամ ի հոգեհանգիստն առնելոյ, արդ կամ ցուցէք մեզ զվնասն հոգւոց որ ի նոցանէ և արդարացուցէք զբանս ձեր ի զրոյ վկայութենէ և մեք հաւանիմք բառնալ զսա և կամ մեք ցուցանենք զօգտակարութիւն նոցա, որ ոչ միայն վնաս չէ, այլ և օգուտ ոգւոց և դուք բարձէք ի մտաց զչար գայթակղութիւնդ զայդ»⁶⁰:

II. 6. Պահքի խախտելը.

Ոչ միայն ասորիները, այլև հույներն ու լատինները շարունակաբար քննադատել են հայերին Մեծ Պահքը շաբաթ և կիրակի օրերին խախտելու համար: Թրուլոյի 691 թ. ժողովին մասնակից հայերը առանձին մի կանոնով՝ N 56, նշում են, որ Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերին հայերը պահք են պահում, բայց պանիր և ձու են ուտում. «Մենք մանապես տեղեկացել ենք, որ Հայաստանում և այլուր ոմանք Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերին ձու և պանիր են ուտում: Այս պատճառով մենք որոշեցինք, որ ամբողջ աշխարհում տարածված Աստծո եկեղեցին պետք է պահի Պահքը՝ հետևելով մեկ կարգի և չուտի ոչ միայն որևէ տեսակի կենդանու միս, այլև ձու և պանիր, որոնք ևս կենդանական են»⁶¹:

⁵⁹ Դիոնիսիոս, Հակաճառություն. էջ 50, 83:

⁶⁰ Ներսես Շնորհալի, Հնդհանրական թուղթ, էջ 255-256:

⁶¹ Périclès-Pierre Joannou, *Fonti-Fascicolo IX – Discipline Générale Antique (IVc-IXc s.), vol. I/1, Les Canons des Conciles Oecuméniques*, Rome 1962, 193 (Canon 56). It appears contradicting that Canon 55 (*ibid.* 192-93) forbids fasting on Saturdays and Sundays of the Lent! For Syrian accusation concerning fasting see Bar-Salibi, 20, 27-28; Bar-Susan, էջ 59-62, 70-75 (Ասորական մեղադրանքի համար, կապված պահքի հետ, տե՛ս Բար-Սալիքի, էջ 20, 27-28, Բար-Շուշան, էջ 59-62, 70-75):

Հովհան Օձնեցի Կաթողիկոսը (կթդ. 717-728 թթ.), ով խմբագրել է «Կանոնագիրք Հայոցը», հեղինակն է և Դվիմի 720 թ. ժողովի 32 կանոնների, որոնք մվիրված են եկեղեցական կարգերի պահպանությանը, վերը քննարկված հարցին երկու կանոն է մվիրել: Վեցեկան կարգերի պահպանությանը, որ շաբաթ և կիրակի Ս. Պատարագ պետք է մատուցվի. որոշ կանոնը հրահանգում է, որ շաբաթ և կիրակի Ս. Պատարագ պետք է մատուցվի. «Արժան է ի սուրբ քառասնորդս պահոցն՝ յառուր շաբաթու եւ կիրակեի պատարագ մատուցանել ահիւ և երկիւղիւ. ըստ սահմանելոյ սրբոց հարցն յամենայն ժողովուրդս իւրեանց»⁶²: Զրթնորդ կանոնում ասվում է. «Այլ վասն պահելոյ եւ լուծանելոյ զշաբաթ եւ զկիրակեի ի սուրբ քառասնորդս պահոցն, այս յիւրաքանչիւր կամս թողեալ լիցի. միայն գոհանալով զԱստուծոյ՝ առանց խղճի եւ հակառակութեան եւ առանց բամբասելոյ զընկերն, զոր կամեսցի՝ եւ արասցէ հանդերձ պարկեշտութեամբ. երկուքին ընդունելի են Աստուծոյ եւ յաւանդութենէն Եկեղեցւոյ Քրիստոսի»⁶³:

Ի պատասխան հայերին ուղղված քննադատության, կարելի է վկայակոչել ասորերենից թարգմանված «Առաքելական կանոնների» 5-րդ կանոնը, որում ասվում է. «Եւ կարգեցին առաքելաքն և եղին հաստատութեամբ, թէ աւր շաբաթուն եղիցի տան և պաշտան ընդ ամենայն տիեզերս. եւ եղիցի յիշատակ ամենայն մարտիրոսաց. Պատարագ մատուցեն ի նմա քահանայք և ուրախութեամբ սաղմոսեսցեն, վասն զի Կարապետ է մեծի արքայից Քրիստոսի»⁶⁴:

Հատկանշական է, որ ասորերենից թարգմանված հենց այս կանոնն է, որ չի պահպանվել ասորական բնագրերում⁶⁵, սակայն «Առաքելական կանոնների» N 64 կանոնում ասվում է. «Եթէ ոք ժառանգաւոր զտցի զաւր կիրակեւէն կամ զշաբաթու պահելով՝ որոշեսցի»⁶⁶:

Այս կանոնն ակնհայտ կերպով մերժում է պահեցողության ծանր և խիստ ձևերը, թե հավատացյալները կարող են ուտել ձեթով, բայց ոչ մսով ու յուղով պատրաստված կերակուրներ:

Այնուամենայնիվ ամփոփիչ խոսքը վերստին պատկանում է Ս. Ներսես Օհորհալուն: Նա ընդունում է, որ ոմանք, հատկապես գինվորներն ու իշխանները, փաստորեն ձուկ ու յուղով պատրաստված կերակուր են ուտում և գինի խմում Մեծ Պահքի ընթացքում: Օհորհալին սակայն նաև մեղադրում է «ֆրանկներին» կամ լատին միսիոներներին, ովքեր Կիլիկիայում հայերին խորհուրդ էին տալիս քառասնորդ պահքի ընթացքում շաբաթ և կիրակի օրերին կաթնեղեն ուտել և որպես ամփոփում ասում է. «Այլ եկեղեցական դասք ամենեքեան եւ բազումք ի ժողովդոց ոչ միայն ի կթեղեն կերակրոց եւ ի ձկանց ի բաց կան, որ

⁶² Հովհաննես Օձնեցի, Մատենագրութիւնք, Վեներտիկ, 1953, էջ 36, 22-23, Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 518, (այստեղ՝ «ժողովների» փոխարեն ասվում է «ժողովուրդներ»):

⁶³ Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 518-519:

⁶⁴ Նույն տեղում, Առաքելական կանոններ, էջ 30-31:

⁶⁵ Հ. Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, Վիեննա, 1896, էջ 56-59: Տե՛ս նաև Կանոնագիրք Հայոց, էջ 543:

⁶⁶ *Punti-Fasciolo IX - Discipline Générale Antique (IVe-IXe S.)*, ed. by Péniclé-Pierre Joannou, vol. I/2: *Les Canons des Synodes Particuliers*, Rome 1962, 41, cf. Canon 55 of Trullo (Joannou, *ibid* I/1, 192-93, հայերենը տե՛ս «Կանոնք Կղեմայ», N 59, Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 91):

ամենեւին անիշեղի է յաւորս քառասնորդացն, այլ և յամենայն պարարտ կերակրոց եւ յըմպելեաց գինոյ. եւ թէ ոք անժողովալութեամբ սխալ է եւ զղջացեալ խոստովանի, ծանրագոյն բեռն ապաշխարութեան ի վերայ դնեմք»⁶⁷:

Հայոց Եկեղեցում է ժողովրդի մեջ պահեցողությունը բնորոշվում և ըստ այդմ արտահայտվում է երկու ձևով, առաջինը՝ ծով (ասորերեց սոմ՝ սոմա բառից), որ մշահակում է բացարձակ պահե պահել և ոչինչ չուտել երեկոյից մինչև հաջորդ երեկո, կամ գիշերվանից մինչև հաջորդ օրվա երեկո, և երկրորդ՝ պահե, որը բառացի մշահակում է պահել, հեռու մնալ մսից և կենդանական ծագում ունեցող սննդից:

III. Եզրափակում.

Ամփոփելով կարող ենք ասել, որ այս քննարկումները, բանավեճերը և մեղադրանքները այնուամենայնիվ չխաթարեցին Արևելյան Եկեղեցիների միությունը, որը սկսել էր ձևավորվել 5-6-րդ դարերից և իր լրումին հասել 8-րդ դարում: Ինչպես արդեն ասվեց այս ուսումնասիրության սկզբում, այդ միությունը կամ եղբայրակցությունը հիմնված է նրանց ընդհանուր հավատքի վրա, խարսխված Տիեզերական երեք ժողովների, ինչպես նաև պայմանավորված Արևելյան Եկեղեցիներում նրանցից որևէ մեկի Աթոռի առաջնայնության շուրջ վեճերի բացակայությամբ:

Այսպիսով համրացումարի բերելով Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքում օրենքների հակասությանը վերաբերող հիմնահարցերը, կարող ենք արձանագրել.

Առաջին - Ղպտի Ուղղափառ Եկեղեցում կիրառվող վերամկրտությունը.

Երկրորդ - Ս. Պատարագի հացին աղ և ձեթ խառնելը, ինչպես նաև Ուղղափառ Եկեղեցիներում ամուսնացյալ քահանաների ձեռնադրումը, որպես քորեպիսկոպոսներ:

Ես կարծում եմ, Ռիանալի երևույթ է, որ Եկեղեցիները, չնայած որոշ տարբերությունների և կանոնների հակասության, կարող են լինել միասին՝ հավատի, հույսի և սիրտ միության մեջ: Գուցե Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների օրինակը կարող է խթանել էկումենիկ շարժման առաջնորդների մտքերը և օգնել նրանց լուծելու այն առաջնային հարցերը, որոնք համարվում են Եկեղեցիների միության ճանապարհի գլխավոր խոչընդոտն ու զայրակողության քարը:

Ես կցանկանայի եզրափակել իմ ուսումնասիրությունը մեջբերելով Ներսես Շնորհալու տարբեր ծեսերի և ավանդույթների համակենցությանը վերաբերող խոսքերը. «Բայց հաստատելով գիտեմք, եթե ոչ այլ ինչ է հաճոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատքն և մաքուր վարքն: Այլ եթէ պարզ մտօք և ոչ հերձուածողական ինչ կարծեօք կատարին այսոքիկ, աւանդութիւնք են ազգաց և ոչ առաւելութիւն կամ նուազութիւն ինչ ի հաւատս: Վասն որոյ յորժամ գլուխն, որ է հաւատն, միանայ և յօդի ի գլուխն Բրիստոս, յայնժամ և անդամքն, որ են աւանդութիւնքն, ուղղին և կամ հաճոյանան միմեանց ի փառս Բրիստոսի Աստուծոյ»⁶⁸:

⁶⁷ Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթը, էջ 99-100:

⁶⁸ Նույն տեղում, էջ 100:

Ծնորձալի Հայրապետն իր այս պատգամը տալիս է Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված Առաջին թղթի այն խոսքերի ճշտնողությամբ, որոնցում ասվում է. «Արդ, ուտեք թե խմեք, կամ ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծո փառքի համար, գայթակղության պատճառ մի՛ եղեք հրեաներին և հեթանոսներին և Աստծո եկեղեցուն, ինչպես որ ես բոլորին ամեն ինչում հաճելի եմ լինում ու չեմ փնտրում իմ օգուտը, այլ՝ շատերինը, որպեսզի փրկվեն» (Ա. Կորնթ. Ժ 31-33):

*Անգլիեոնից քարզմանն էլ կինսաքանական գիրությունների
քնկնածու ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԸ*

ՊԱՏՄՄ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ԿԱՊՎԱԾ ԽԱԹԵ ՅԵՂԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ուրարտուի թագավորներից առաջինը Մենուան (810-786 թթ.) է հիշատակում խաթե ցեղամիության մասին: Արածանիի հյուսիսային ափին գտնվող Պալու բնակավայրից հայտնաբերված արձանագրությունում Մենուան պատմում է, որ նվաճել է Օքեթերիա և խուզանա քաղաքների երկրները կամ մարզերը, նվաճել Ծուպանի երկիրը և հասել մինչև խաթե երկիրը. «խալդյան գորությանը արշավեց Մենուա Իշպուիճորդին, գրավեց Օքեթերիա քաղաքի երկիրը, գրավեց խուզանա քաղաքի երկիրը, գրավեց Ծուպանի երկիրը, հասավ մինչև խաթե երկիրը»⁽¹⁾ (Hate):

Ակներև է, որ Մենուան արձանագրությունում չի հիշատակում խաթե ցեղամիության մեջ մտնող ցեղային երկրների մասին: Պատճառն այն է, որ այդ արձանագրությունում Մենուան պատմում է իր այն նվաճումների մասին, որոնք հասել էին մինչև խաթե ցեղամիության սահմանը, իսկ ինքը՝ խաթե ցեղամիությունը, դուրս է մնացել այդ նվաճումների ոլորտից:

Արձանագրությունում որպես խաթե ցեղամիության հետ կապված կարևոր փաստ պետք է նկատի ունենալ այն, որ առաջին անգամ հիշատակությունը ենք գտնում, թե մոտավորապես որտեղ է գտնվել այդ ցեղամիությունը: Եթե սույն արշավանքի ընթացքում Մենուայի կողմից նվաճված Օքեթերիա քաղաքի երկրի տեղադրությունը անորոշ է, ապա խուզանա քաղաքի երկիրը տեղադրվում է Արածանիի հյուսիսային կողմում գտնվող հետագա խոզան բնակավայրի շրջանում, իսկ Ծուպանի երկիրը, որը համապատասխանում է հետագա Ծոփքին, տեղադրվում է Վերին Եփրատից արևելք, նրա Արածանի վտակի աջ կամ հյուսիսային կողմում: Տեքստի տվյալներից հասկանալի է, որ հենց այդ Ծուպանի-Ծոփքի սահմանի մոտ էլ գտնվել է խաթե ցեղամիության տարածքը: Արձանագրության գտնվելու վայրը, այն է՝ Արածանիի աջ կամ հյուսիսային ափին գտնվող Պալու բնակավայրը, մատնացույց է անում, որ խաթե ցեղամիությունը տարածված է եղել Ծուպանի-Ծոփք երկրի անմիջապես հյուսիսային սահմաններում:

Մենուան իր մի այլ արձանագրությունում, որը հայտնաբերվել է Վանից և ունի տարեգրության նշանակություն, պատմում է դեպի խաթե ցեղամիությունը կատարած իր մի այլ արշավանքի մասին: Ըստ այդ տեքստի մի հատվածի տվյալների. Մենուայի գործն այս արշավանքի ընթացքում արդեն թափանցել է խաթե ցեղամիության սահմաններից ներս, գրավել այդ ցեղամիության մեջ մտնող Օուրիշիլիմի և Թարխիզամանի քաղաքները, ինչպես նաև Օադալեխիմի ցեղի երկիրը. «Այդ նույն տարում զինվորներին ուղարկեցի

¹ Г. А. Мелikianishvili. Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, № 39.

տեքստում ընդգծում է, որ նախապատրաստվել է հարձակվել ինչպես խաթե ցեղամիությանը, այնպես էլ «խիլարուադա թագավորի երկրի» կամ Մելիտեա երկրի վրա): Արգիշթի I-ի կողմից կազմակերպված արշավանքի ընթացքի նկարագրությունը ցույց է տալիս, որ Մելիտեա երկրում լուրջ ռազմական գործողություններ տեղի չեն ունեցել: Դրա պատճառը, հավանաբար, այն է, որ Մելիտեա երկիրը Մեմուայի ժամանակ նվաճվել էր ուրարտական պետությանը կողմից և դրվել հարկի տակ, իսկ այժմ Արգիշթի I-ի ժամանակ, այդ երկիրը, հասկանալով ուրարտական արշավանքների ծանր հետևանքները, դիմադրություն ցույց չի տվել և առանց մարտերի ենթարկվել Ուրարտուին (Արգիշթի I-ը տեքստում ընդգծում է. «salmaschi Մելիտեա քաղաքը», որը, հավանաբար, նշանակում է՝ կամ առանց կռիվի ենթարկեցի Մելիտեան, կամ թե շրջանցեցի այն և այլն): Դրան հակառակ, ըստ տեքստի տվյալների, Արգիշթի I-ը լուրջ ռազմական գործողություններ է ծավալում խաթե ցեղամիությունում: Նա կռվով ու արյունահեղությամբ այդ ցեղամիությունից նվաճում է Նիրիբաի-խուբի, Թուաթեխի, Մարմուանի, Կա(լա)անի երկրները և Ուրմանի, Ադանի, Պիթեի(րա)նի քաղաքները:

Ըստ այս արձանագրության, արշավանքի սկզբում Արգիշթի I-ը շարունակում է Ծուպանի-Ծոփքից հյուսիս գտնվող խաթե ցեղամիությանը նվաճման Մեմուայի կիսատ թողած գործը: Նա այդ շրջանում նվաճում է Նիրիբաի-խուբի երկիրն իր Ադանի արքայական քաղաքով և Ուրմանի սովորական քաղաքով հանդերձ: Դրանցից Ադանի բնակավայրը հիշեցնում է Նաիրի ցեղամիության Ադանի երկիրը, իսկ Ուրմանի բնակավայրը՝ նույն ցեղամիության Ուրման երկիրը⁶, երկրներ, որոնք գտնվել են վերին Եփրատի արևելյան կողմում, իհարկե, Արածանի գետից հյուսիս ձգվող տարածքում: Այդ տարածքում էլ, բնականաբար, պետք է փնտրել Նիրիբաի-խուբի երկիրը, որը ոչ մի կապ չունի հյուսիսային Միջագետքում գտնվող Նիրբու երկրի հետ: Դրանից հետո նոր Արգիշթի I-ը անցնում է վերին Եփրատը և թափանցում նրա արևմտյան Մելիանի կամ Մելաս (Թոխմա-սու) վտակի ավազանը, որտեղ էլ, ըստ այս արձանագրության, հասնում է ինչպես մինչև Պիթեի(րա)նի քաղաքին⁷, այնպես էլ Մարմուանի ու Կա(լա)անի երկրներին ու գրավում դրանք: Ինչ վերաբերում է Թուաթեխի երկրին, ապա այն, ըստ կոմտեքստի, գտնվել է Մելիտեա կամ Մելիդ-Քամմուու երկրից դեպի հյուսիս-արևելք ձգվող տարածքում, քանի որ այդ երկիրը գրավելուց հետո է նոր միայն Արգիշթի I-ը մոտենում Մելիտեա կամ Մելիդ-Քամմուու երկրի սահմանին:

Այսպիսով, ըստ Մեմուայի և Արգիշթի I-ի տեքստերի տվյալների, խաթե ցեղամիությանը գրաված տարածքը սկսվել է Ծուպանի (Ծոփք) երկրի հյուսիս-արևմտյան սահմաններից ու տարածվել մինչև վերին Եփրատի արևմտյան Մելիանի կամ Մելաս (Թոխմա-սու) վտակի ավազանը: Վերին Եփրատի հյուսիսային հատվածը, փաստորեն, կազմել է խաթե ցեղամիության գրաված տարածքի ողնաշարը, որի աջ ու ձախ կողմերում տարածված են եղել այդ ցեղամիության մեջ մտնող արյունակից ցեղային երկրները:

⁶ И. М. Дьяков, Ассииро-вавилонские источники по истории Урарту (АВНИУ) (Восток древней истории (ВДИ) М., 1951, № 2, № 10 (IV-43, V-22-33)).

⁷ Պիթեի(րա)նի քաղաքանունը հիշեցնում է Նաիրի ցեղամիության Պաիթեի երկրանունը (АВНИУ, № 10 (IV-43, V-22-33)).

Ի. Մ. Ռյակոմովի¹² այն կարծիքը, թե ուրարտացիներն իրենց պետությունից արևմուտք ապրող բոլոր բնակիչներին անվանել են «խաթթեթ» (խաթիմի), իսկ բոլոր մարզերը, որոնք գտնվել են Եփրատից արևմուտք, անվանել են խաթե, չի հիմնավորվում: Վերոհիշյալ սեպագիր արձանագրությունների փաստերը ցույց են տալիս, որ ուրարտացիները խաթե անունով են կոչել միայն խաթե ցեղամիությունը:

Խաթե ցեղամիության բնակչության լեզվով մեզ արձանագրություններ չեն հասել: Մեզ են հասել միայն Երա Երալեխիմի, Թուրաթիսի, Նիրիբաի-խուբի, Մարմուամի, Կալ(լա)անի երկրանունները, Օուրիշիլիմի, Թարխիգամանի, Ուրմանի, Աղանի, Պիթեիրանի քաղաքանունները, Իարշա կամ Իուարշա դիցանունը և Մելիանի գետանունը:

Խաթե ցեղամիության լեզվի, միայն էթնիկական պատկանելության հարցի պարզաբանման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պահպանել մախաուրարտական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրությունները: Նման տեղեկություն է պահպանվել Աքքադի թագավոր Նարամ-Սինի (2550) սեպագիր մի տեքստում: Այդ տեքստում Նարամ-Սինը պատմում է իր դեմ ապստամբած 17 երկրների ու միայն թագավորների մասին: Այդ երկրներից մեկը կոչվել է Խաթթե անունով: Ահա այդ 17 երկրների և միայն թագավորների ցուցակը՝ 1) Անմաիլա՝ Գուդուսուայի կամ Գուսուայի թագավոր, 2) Բուանու՝ Ռակկի թագավոր, 3) Լուպանիլա՝ Ուլլիլիի թագավոր, 4) ... Նապալա...-ի թագավոր, 5) Պամբա՝ Խաթթիի թագավոր, 6) Զիպանի՝ Կանեշի թագավոր, 7) Ռուր... (Պուրուշխանայից), 8) Հուվարուվա՝ Ամուրրուի թագավոր, 9) Տիսսեցկի՝ Պարասիի թագավոր, 10), 11) Մադակինա՝ Արմանիի թագավոր, 12) Կիպպու՝ Եղեցիների թագավոր, Ամանու, 13) Թասսի՝ ...-ի թագավոր, 14) Ուր-խարակ՝ Լարակի թագավոր, 15) Ուր-բանդա՝ Նիկկիի թագավոր, 16) Իլլուշխումալի՝ Տուրկիի թագավոր, 17) Տիսբեցկի՝ Կարսաուրայի թագավոր¹³:

Ակներև է, որ Խաթթե անունը կրող բնակչությունը մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսին ուներ իր երկիրը, այսինքն՝ իր կայուն տարածքը, որտեղ այդ ցեղը հասել էր պետության աստիճանի, որի թագավորն էր Պամբան կամ Փամբան: Արձանագրությունում Խաթթեն 5-րդ երկիրն է: Այն հիշատակվել է Կանեշի հարևանությամբ: Իսկ Կանեշը համադրվում է Կեսարիայի հետ, որը գտնվել է Փոքր Ասիայում¹⁴: Այս փաստը ընդհանուր կարգով մատնանշում է, որ Խաթթե երկիրը պետք է փնտրել Փոքր Ասիայում: Խաթթե երկրի կոնկրետ տեղադրության կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում, երբ մեսիներ կոչվող ցեղերը հանդես են գալիս Փոքր Ասիայում, մվաճում են այնտեղ գտնվող Խաթթե երկիրը, տապալում միայն պետությունը, մ.թ.ա. 19-րդ դարից սկսած միայն փոխարեն ստեղծում իրենց պետությունը, որը կոչվում են Խաթթե անունով: Նեսիցների այդ պետությունը գտնվել է կենտրոնական Փոքր Ասիայում¹⁵: Այդ

¹² И. М. Дьяконов, Предистория армянского народа, стр. 135.

¹³ E. Forrer, Die Boghazkoi-Texte in Umschrift, II, Leipzig, 1930, S. 2: A. Sayce, JRAS, London, 1928, p. 206: Hrozný, "Archiv Orientalni", I, Praha, 1929, H. B. Figulla, Keilschrifttexte Aus Boghazkoi (KB), Leipzig, 1923, S. 43, N 13; Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 26:

¹⁴ Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 28:

¹⁵ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., 1971, էջ 152 և ծանոթ. 54:

պետությունը մ.թ.ա. 12-րդ դարի սկզբին մվաճում ու կործանում են մոր թափանցող ցեղերից մուշքերը¹⁶ կամ փոյուզիացիները¹⁷ և այնտեղ ստեղծում իրենց պետությունը, որը կոչվում է Մուշքիսի (KUR Muşkîni) կամ Փոյուզիա անունով: Ըստ Ուրարտուի թագավոր Ռուսա II-ի վերոհիշյալ արձանագրության տվյալների, այդ պետությունը գտնվել է ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված Խաթե ցեղամիության անմիջապես արևմտյան սահմանի վրա: Տարածքային այսպիսի մոտիկությունը թույլ է տալիս ենթադրել, որ հավանաբար ուրարտական դարաշրջանում խաթե անունը կրող ցեղամիությունը, որը գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, մասնավորապես Փոքր Հայքում և Բարձր Հայքի արևմտյան մասում, եղել է Նարամ-Սինի հիշատակած խաթե պետության մի հատվածը, որն արևելյան մասը:

Տպավորությունն այնպիսին է, որ Նարամ-Սինի հիշատակած խաթե պետությունը գրավել է ընդարձակ տարածք: Այն սկսվել է Կանեշ-Կեսարիայի կողմերից և ձգվել ընդհուպ Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքները, մասնավորապես ընդհուպ Փոքր Հայքը և Բարձր Հայքի արևմտյան կողմերը, ուր գտնվել է ուրարտական արձանագրությունների խաթե ցեղամիությունը: Փաստորեն, եթե նեսիներին հաջողվել է գրավել խաթե պետության արևմտյան հատվածը, ձուլել այնտեղ իրենց հանդիպական խաթե բնակչությանը, ապա նրա արևելյան հատվածն իր խաթե բնակչությանը մնացել է անկախ, կորցրել իր պետությունը, ապալինել վերին Եփրատի ավազանին ու հասել մինչև ուրարտական դարաշրջանը:

Պահպանվել են սեպագիր արձանագրությունների փշրանքներ Նարամ-Սինի ժամանակաշրջանի խաթե պետության բնակչության, այն է՝ խաթե ցեղի լեզվով: Սակայն նրանցով հնարավոր չէ վերականգնել խաթե ցեղի լեզվի հնչյունական համակարգը և որոշել այդ լեզվի էթնիկական պատկանելությունը¹⁸:

Հ. Աճառյանը¹⁹ այն կարծիքն է հայտնել, որ հայ ժողովրդի կողմից իրեն տրվող «հայ» և իր երկրին տրվող «Հայք» անունները ծագել են խաթե էթնոնիմից: Այդ տեսակետն է պաշտպանել նաև Ի. Մ. Դյակոնովը²⁰: Նրա կարծիքով, խաթե (Hate) էթնոնիմի «ate» զուգակցությունը հայերենում տալիս է «այ» զուգակցություն (հմմտ. pater-phater-hahir-hajr «հայր», mater-mather-mahir-mayr «մայր»), իսկ բառասկզբի «H»-ն հայերենում տալիս է «Հ», օրինակ՝ ուրարտական սեպագիր արձանագրությունների hubi բառը հայերենում հնչել է «հովիտ»:

Այս կարծիքներից ելնելով, կարելի է ասել, որ խաթեն եղել է այն մայր ցեղը, որի անունից ծագել է հայ ժողովրդի հայ անունը:

Նկատի ունենալով հետազոտողների մասնամշած հնդեվրոպական ծագում ունեցող վերոհիշյալ pater և mater բառերի «ate» զուգակցությունների և Hate էթնոնիմի «ate» զու-

¹⁶ И. М. Дьяков, Предистория армянского народа, стр. 130.

¹⁷ Նույն տեղում, էջ 166:

¹⁸ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., 1971, էջ 149:

¹⁹ Հ. Աճառյան, Հայոց ծագումը և մաթապատմական ջրբանը (Վտակ, Թիֆլիս, 1901), էջ 235:

²⁰ Ի. Մ. Դյակոնով, խեթերը, փոյուզիացիները և հայերը (Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1956, N 11), էջ 78 և ծանոթ. 1:

գակցության ցուցանիշները, կարելի է ասել, որ Hate էթնոցիմն ունի հնդեվրոպական ծագում: Այս փաստն էլ հիմք ընդունելով, կարելի է ասել, որ հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում ունի խաթե (Hate) անունը կրող վերոհիշյալ պետության բնակչությունը: Փաստորեն խաթեն եղել է այն մայր ցեղը, որից ծագել է ինչպես հայ ժողովուրդը, այնպես էլ մրա ու մրա երկրի անունները:

Այս կապակցությամբ իր վրա ուշադրություն է հրավիրում խաթե ցեղի կողմից մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ստեղծված պետության Պամբա կամ Փամբա թագավորի անվամբ ստուգաբանությունը: Ամենայն հավանականությամբ այդ անձնանվան հիմքում ընկած է հայերենի «փամբա» արմատը: Հ. Աճառյանը²¹ «փամբա»-ն դիտում է որպես բնիկ հայկական բառ և մեկնաբանում իբրև «ուռչիլ», «ուռած», «ուռած մարդ» (հաստափոր մարդ):

Բերված փաստն իր կողմից հաստատում է, որ մ.թ.ա. III հազարամյակում հիշատակված խաթեն ցեղը իրոք ուներ հայկական ծագում: Այն, որ հայկական ծագում ունեցող ցեղերը III հազարամյակում գոյություն են ունեցել Փոքր Ասիայում և մրան կից Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքներում, հաստատվում է ուրիշ այլ փաստերով:

Փաստերից առաջինն այն է, որ Նարամ-Սինից երեք սերունդ առաջ ապրող Աքքադի թագավոր Սարգոնի կամ Սարգոն Աքքադի (2633-2579) կողմից իր մի արշավանքից հետո Փոքր Ասիայից և հավանաբար մրան հարակից տարածքներից, մասնավորապես Հայկական լեռնաշխարհից իր երկիր տարած ծառերի տնկիներից երկուսը կրել են բնիկ հայկական ծագում ունեցող խնձոր²² և սալոր²³ անունները: Այս փաստն ընդգծում է, որ Նարամ-Սինից դեռ շատ առաջ Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի մրան հարակից տարածքներում ապրել են հայկական ցեղերը: Նրանք Նարամ-Սինի ժամանակ միավորվել են ու ստեղծել իրենց պետությունը՝ ի դեմս խաթե պետության:

Փաստերից երկրորդն այն է, որ խեթագետ Նշան Մարտիրոսյանը²⁴ Նարամ-Սինի հիշատակած խաթեն պետության բնակչության արևմտյան հատվածն իրենց ձուլող մետիներին լեզվով ավանդված սեպագիր արձանագրություններում բացահայտել է բնիկ հայկական ծագում ունեցող բառերի հսկայական շերտ: Այդ բառերից են՝ ջմար, գետին, դպիր, թառ, թարգման, փշրել, մետ, մեռնիլ, մեղր, մեծ, մասն, մաղթել, քերթել, հախտ, խազել, հատանել, համի (մեծ մայրիկ), խախանք (բարձրաձայն ծիծաղել), ափ, ուտել և այլ բառերը:

Բնականաբար մետիների լեզվում բնիկ հայկական ծագում ունեցող բառերը կարող էին տեղ գրավել այն ժամանակից, երբ մետիներն իրենց են ձուլել Նարամ-Սինի հիշատակած խաթեն պետության արևմտյան հատվածի բնակիչներին, որոնք ունեին հայկական ծագում:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Նարամ-Սինի հիշատակած խաթեն պետության բնակչության արևելյան հատվածի, այն է՝ ուրարտական սեպագիր արձանագրություններ-

²¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Բ. IV, Երևան, 1979, էջ 475:

²² P. de Lagarde, Armenische Studien, Göttingen, 1877, § 997; H. Hubschman, Armenische Grammatik, Leipzig, 1897, S. 305: Հ. Աճառյան, ՀԱԲ, Բ. II, Երևան, 1973, էջ 380:

²³ Պատրությունի, Հանդես ամսօրեայ, Վիննա, 1906, էջ 343:

²⁴ Նշան Մարտիրոսյան, Նպաստ մը հեթ և հայ բառաքնության (Պատմա-Բանասիրական հանդես (ՊԲՀ), Երևան, 1981, N 2), էջ 163-186:

²⁵ Հեղոթոտոս, Պատմությունը իմր ցրքից, Երևան, 1986, գիրք VII, § 73:

Հայ մայր ցեղից է ծագել հայ ժողովուրդը: Այդպիսին է եղել նաև հրա շարունակությունը Քանդակապետի ուրարտական դարաշրջանի խաթան ցեղամիությունը, այսինքն՝ այն պատկանում էր հայկական էթնիկական աշխարհին: (Նարամ-Սինի վերոհիշյալ սեպագիր արձանագրության Արմանի երկիրը, որը գտնվել է Ամանուսի, այսինքն՝ Ամանուս լեռների մոտ, արամեացիների երկիրն էր և ոչ մի կապ չուներ Արմենիայի հետ):

Այսպիսով, ուրարտական դարաշրջանի խաթան ցեղամիությունը, որի բնակիչները հիմնականում եղել են հայերը կամ արմենները, ունեցել է հզոր կենսունակություն: Այն սեպագիր արձանագրություններում հիշատակվել է դեռևս շումերա-աքքադական դարաշրջանից, այսինքն՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Այդ ցեղամիությունը գոյատևել է նաև ուրարտական դարաշրջանում: Այն նվաճվել է ուրարտական պետության կողմից, որի ներսում սկսվել է հայ ժողովրդի կազմավորման գործընթացը: խաթան ցեղամիությունը, բնականաբար, մասնակցել է հայ ժողովրդի կազմավորման գործընթացին որպես հրա զխավոր բաղադրամասը: Նրա անունից են ծագել հայ ժողովրդի կողմից իրեն տրվող «հայ» և իր երկրին տրվող «Հայք»)՝ անունները: Տարբեր ժամանակներում խաթան կամ Հայ մայր ցեղը հասել է պետականության աստիճանի: Դրանցից առաջինը Փամբաի զխավորությամբ ստեղծված պետությունն էր մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Ուրարտական դարաշրջանում, մասնավորապես Արգիշթի I-ի (786-764) ժամանակ, խաթան կամ Հայ ցեղամիության կազմում մտնող երկրներից ոմանք նույնպես հասել էին պետության աստիճանի և ունեին իրենց արքայական քաղաքները, հետևաբար նաև արքաները, օրինակ՝ Նիրիբաի-խուրի երկիրը, որի արքայական քաղաքն էր Ադանին: Այդ ժամանակ խաթան կամ Հայ ցեղամիությունում գոյություն ուներ նաև կրոն, պաշտամունք, որի աստվածներից էր Ի(ու) արշան:

Վերոհիշյալ փաստերը հուշում են, որ շումերա-աքքադական դարաշրջանում Հայկական լեռնաշխարհը հանդես է եկել հայկական էթնիկական աշխարհին պատկանող խաթան(թ)ե կամ Հայ երկրի և համանուն մայր ցեղի անվան տակ, այլ ոչ թե խորհրդական ծագում ունեցող Օուրբիա երկրի²⁶:

²⁶ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 26:

ԼԻԼԻԹ ՎՈՎՍԵՓՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՄԱՑՈՒՄ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ»

Հայ մատենագրությունում Երգ Երգոցի¹ մեկնության ավանդույթը կապվում է Կապա-ռոպկյան դպրոցի կրտսեր մերկայացուցիչ Գրիգոր Նյուսացու (335-394 թթ.) «Թուղթ յա-ղագս Երգոյ երգոց» աշխատության հետ: Ընդհանուր է, Նյուսացի-աստվածաբանի ամուսնը մուսուլմանականությանը և հետագայում չի հնչել իր մշակմանը եղբոր՝ Բարսեղ Կեսարացու, և ընկեր-րոջ՝ Գրիգոր Նազիանզացու անուանների պես, ավելի, հաճախ լուրջության է մատնվել, սա-կայն մյուս ավանդը քրիստոնեական գրականության մեջ մեծ է եղել, մուսուլման և՛ համեմա-տաբար քիչ ուսումնասիրված:

Երեք Մեծ Կապադոկիացիներից Նյուսացին ամենաշատն է կրել Որոգիների ազդե-ցությունը²: 553 թվականին Որոգիների պաշտոնական քննադատությունից հետո Նյուսա-ցու փայլը որպես աստվածաբանի խամրեց, սակայն յոթերորդ տիեզերական անվանվող ժողովն այն վերականգնեց: Գուցե հենց Որոգիների ավանդներին տուրք տալու պատճա-ռով է, որ Նյուսացին չի արժանացել այն փառքին, որին ժամանակին արժանացել են Գրիգոր Նազիանզացին և Բարսեղ Կեսարացին:

Գրիգոր Նյուսացին եղել է շատ հարգված կրոնական գործիչ և թողել է մատենագրա-կան մեծ ժառանգություն: Նրանցից մեզ հասել են մեկնություններ, քաղյա-խրատական և մեկնաբանական գործեր, խրատներ, թղթեր³: Հիմնականաբանային իմաստության գրքե-րից Նյուսացին մեկնել է Երգ Երգոցը (այսուհետև՝ Երգը) և ժողովողը: Իր երկերում նա օգտագործել է մեկնության այլաբանական եղանակը: Ի տարբերություն Որոգիների, որը Երգի մեջ տեսնում էր Աստծու և եկեղեցու կապը⁴, Նյուսացին տեսնում էր Աստծու հետ

¹ Մեր այս աշխատանքում օգտագործել ենք սույն գործի դեռևս ամուսիկ մնացող քննադի լավագույն ձեռա-գրերից մեկը՝ Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ շարադրամքի և ծանոթագրությունների մեջ՝ ՄՄ) ձեռ. հմր. 1013, որի էջահամարները մշտն ենք քաղվածքների մոտ՝ փակագծերի մեջ: Նյուսացու երկի թարգ-մանության ձեռագրերի ամբողջական մկարագրությունը տե՛ս մեր հոդվածը՝ «Գրիգոր Նյուսացու «Թուղթ յա-ղագս Երգոյ երգոց» աշխատության հայերեն թարգմանության ձեռագրերի մկարագրությունը»,- Խ. Արուստյանի անվան ՀՊՄՀ-ի «Գիտական հոդվածների ժողովածու», Բ. Բ., Երևան, 2002, էջ 185-194:

² Իր մեկնության առաջաբանում Նյուսացին հիշատակում է Երգի Որոգիների մեկնությունը. «Բայց եթե Որո-գիին աշխատասիրարար յաղագս գրոցս այսոցիկ փոյ» է ցուցնել, եւ մեջ գրով ասանդել յաշխատութիւնս մեր յաժարեցաք» (63ա):

³ Տե՛ս Հ. Ամասյան, Հայկական մատենագիտության, Բ. Ա., Երևան, 1959, էջ XLII-XLIII: Նույր գրքերի ցամ-կում մշտն է Նյուսացու հայերեն թարգմանված յոթ գործ. ա) Բնութեամբ գիրք՝ ԼԴ ճառ, ք) Կազմութեամբ՝ ԼԲ, գ) Կուսութեամբ՝ Ի, դ) Ժողովողի՝ Ը, ե) Երգի՝ ԺԴ, զ), Ի՞՞՞՞ երանությունը՝ Ը, է) Հայր մեր, որ իրկիմս՝ Զ:

⁴ Տե՛ս Որոգիներ Ալեքսանդրացի, Беседа первая Оригена на Песнь Псалмиста. «Под женихом разумей Христа, под невестою еси дщия и пороки - Иерусалим»,- Փետա անելով հասկացիր «Քրիստոսին, իսկ անեղծ և ամենը հարս անելով՝ Եկեղեցին»: <http://www.pagez.ru/Isa/0208.pbp>:

մարդկային հոգու կապի այլաբանությունը. «*Ի ձեռն Երզոյ երզոցս ի ներքոյ աստուածային անճառելի խորհրդոցն տամի զմիտսն, յորս վերնագիրն յաղազս հարսանեաց իմն է պատմութիւնն, բայց իմացեալն մարդկան Հոգւոյն առ Աստուած է խառնումն...*» (45ա):

Հայ միջնադարյան գրականությունում այս հեղինակի նկատմամբ եղած ուշադրության վկայություններ են հետևյալ փաստերը.

ա) «Թուղթ յաղազս Երզոյ երզոց» աշխատության ձեռագրերի մեծ թիվը.

բ) Այս երկին նվիրված պատճառ-լուծմունքների առատությունը.

գ) Նյութագու Լեկնության հատվածների զետեղումը ժառանգորդության ձեռագրերում.

դ) Հայ հեղինակների դրվատական վերաբերմունքը Գրիգոր Նյութագու անձի նկատմամբ և անդրադարձները նրա վերոհիշյալ գործին:

Նյութագու Լեկնության հայերեն տարբերակի ամբողջական վերնագիրն է՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիսացւոյ թուղթ յաղազս Երզոյ երզոց»⁵: Հնագույն ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի հմր 2684՝ 973 թ. Տարոնում գրված երկաթագիր օրինակն է⁶: Ի տարբերություն Երզնի Որոզինեսի մեկնության գրչագրերի, որոնք ժողովածուների մեջ զետեղված են Երզնի այլ հեղինակների (գերագանցապետ Վարդան Արեւելցու) մեկնությունների հետ⁷, Նյութագու մեկնությունն առկա է հիմնականում իր այլ ստեղծագործությունների հետ⁸, կամ էլ՝ առանձին⁹: ՄՄ ունի Նյութագու մեկնության շուրջ 17 ամբողջական ձեռագիր: Նրա Թղթի հատվածներ կան ձեռագրական պատմոսկ-պառիպանքների¹⁰, ինչպես նաև ժառանգորդների մեջ¹¹: Ժառանգորդային այս հատվածները վկայում են, որ

⁵ Տե՛ս Նիսացի՝ Թուղթ, 41թ. հմմտ. Գ. Զարբանյան, Մատենադարան Հայկական թարգմանության մասին, էջ 365:

⁶ Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ Ցուցակ ձեռագրաց ՄՄ). Բ. Ա. Երևան, 1965, էջ 854:

⁷ ՄՄ ձեռ. հմր. 3215, 1156, 1158, 2602, 6721, 9698, 9993:

⁸ Տե՛ս մեր հոդվածը՝ «Գրիգոր Նյութագու Թուղթ յաղազս Երզոյ երզոց» աշխատության թարգմանական ձեռագրերի նկարագրությունը», ձեռ. հմր. 3, 7, 14, 15, 16, 21, 22, 23, 24, 28:

⁹ Տե՛ս մույմ տեղում, ձեռ. հմր. 1, 10, 26, 27:

¹⁰ Ցուցակ ձեռագրաց ՄՄ, Բ. Ա., էջ 295՝ ձեռ. հմր. 311՝ 1066 թ., Անտարան, Անաստիա, գրիչ (և ծաղկո՞ղ) Գրիգոր Ակոռեցի, 23x15.5 սմ, 282 թերթ, երկայտւ, քլորոֆիլ երկաթագիր, 21 տող: Պառիպանքներ՝ մագաղաթ, քովամղակությունը՝ Նյութագու Լեկնության հատված: Նույն տեղում, էջ 728՝ հմր. 2137. Ժեղ. Գրիգոր Տաթևացի. Քարոզգիրք, տեղը՝ անհայտ, գրիչը՝ իգմաստիոս, ծաղկո՞ղ՝ Ամիրթաս, ստացող՝ Հովսեփ Գալվանց, 18x13.5 սմ, երկայտւ, քլորոֆիլ: Պատմոսկ-պառիպանքներ՝ մագաղաթ, ուղղագիծ երկաթագիր, քովամղակություն՝ հատված Նյութագու Լեկնության:

¹¹ Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վեճետիկ, Բ. Բ., Վեճետիկ, 1924, էջ 215 (այսուհետև՝ Ցուցակ վեճետիկի), հմր. 212/463՝ 1270-1271 թթ., ժառանգորդ. տեղը՝ խորհրդային ամապատ կամ վանք ի Կիլիկիա, գրիչ և ծաղկո՞ղ՝ Վասիլ կամ Բասիլ, կազմող՝ Սարգիս կրոնավոր, ապա՝ Խաչատուր Փեշտավյան (1840-ից), 55x41 սմ, երկայտւ, 479-480 թերթ, 39 տող, 169թ-70ա: Նույն տեղում, էջ 78, 100՝ հմր. 202/512, 1637 թ., ժառանգորդ Գ. տեղը՝ Երուսաղեմ, գրիչ՝ Մկրտիչ Ղազարյանց, ծաղկո՞ղ՝ հավանորեն իմը, ստացողը՝ Մախ Զաքարիա քահանա Իլովցի, ապա՝ մի թոցատեցի, 28՝8x20.5 սմ, միասյուն, 649-650 թերթ, 32 տող, 139ա-40ա, 434ա- 5թ: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Թադևոսեանց, կազմեց Նորայր եպս, Պողարեան, Բ. Ա., Երուսաղեմ, 1966, էջ 437, 450 (այսուհետև՝ Ցուցակ Երուսաղեմի), հմր. 154 Ա., 1737 թ., տեղը՝ անհայտ, գրիչ. ստացող և կազմող՝ Եղիա վրդ., 31x22x5 սմ, 642 թերթ, 44 տող:

մրա երկի հայերեն տարբերակն օգտագործվել է ոչ միայն գրտակամ, այլև՝ գործնական
նպատակներով:

Հայ հեղինակները Նյուսացու անունը միշտ հարգանքով են հիշել, իսկ Երզնի մեկնու-
թյան առումով այլ հեղինակների կողքին նախապատվությունը տվել են Նյուսացու գոր-
ծին, բավական է հիշել Գրիգոր Նարեկացու, Վարդան Արևելցու, Գրիգոր Տաթևացու ա-
նունները:

Նարեկացին իր «Մեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի»¹² աշխատության մեջ ամենա-
տարբեր առիթներով անդրադարձել է Նյուսացու երկին և միշտ հարգանքով է հիշել
մրան՝ տալով միայն հեղինակի անունը՝ առանց մրա մեկնության խորագիրը հիշատակե-
լու: Նյուսացու Մեկնությունը հետևողության օրինակ¹³ է եղել Նարեկացու մուկնախի
Մեկնության համար, որի առաջաբանում Նյուսացին անվանվում է «կատարեալ վարդա-
պետ և հոգիաբան» (271):

Երզնի մեր մի այլ մեկնիչ՝ Վարդան Արևելցին (1200-1271 թթ.), իր մեկնության¹⁴ առա-
ջաբանում, որն ուղղված է գործի պատվիրատու Կիրակոս Գանձակեցուն, Նյուսացուն
համարում է «մեծն աղբիւր եկեղեցոյ» (1ա): Արևելցու ծաղկաքաղ Մեկնության¹⁵ մեջ
Նյուսացուց արված քաղվածքները բավական շատ են, լուսանցքներում մրանք ունեն
«Գր.» հեղինակահիշ հղումները և առանց բացատրության միշտ առաջին տեղում են:
Արևելցին Նյուսացու շարադրանքը հիմնականում վերապատմում է, սակավ դեպքերում
անում է նաև բառացի քաղումներ՝ հաճախ լրացնելով դրանք իր մտքերով: Նյուսացու
անունը հիշատակվում է նաև Երզնի Գրիգոր Տաթևացու մեկնության մեջ¹⁶:

Նյուսացին հայագիտության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված հեղինակ է.
այդուհանդերձ, մրա երկերի գնահատման ուղղությամբ որոշակի աշխատանք արվել է:
Նրա կյանքին և գործին վերաբերող առաջին հղումները պատկանում են «Նոր Հայկազ-
յան բառարանի» հեղինակներին, որոնք օգտագործել են Մեկնությունը¹⁷: Թարգմանու-
թյան ժամանակին անդրադարձել է նաև Գ. Զարբհանալյանը, որը Նյուսացու՝ «Յինն երա-
նութիւնս», «Նորին ի ժողովողն», «Մեկնութիւն Երզոց երգոյն» երկերի թարգմանությունը

¹² Տե՛ս Արքույ Բոքոյ մերոյ Գրիգորի Նարեկայ վամից վամակամի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 271, 282, 285, 294, 296, 301:

¹³ Նյուսացի-Նարեկացի առնչությունները քննվել են մեր՝ «Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնությունը» հոդվածում, ժողովածու պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշ-
խատողների 52-րդ գիտաժողովի մյուսերի, Երևան, 2003, էջ 214-215:

¹⁴ ՄՄ ձեռ. հմր. 5452, 1ա-65բ. Արևելցու մեկնության հնագույն գրչագիր օրինակն է՝ 1265 թ. գրված Հաղպա-
տում: Ամբողջական վերնագիրն է՝ «Հաղպատում ի մեկնության վարդան վարդապետիմ Երգ երգոցին»:

¹⁵ Մեկնությունը հյուսված է Երզնի Նյուսացու, Ռոզդեմեսի, Նարեկացու և Հիպոդիտոս Բոստրացու մեկնու-
թյունների հիմամ վրա:

¹⁶ ՄՄ ձեռ. հմր. 5869, 376բ-99բ. ումի հետևյալ վերնագիրը. «Համառու հաւացումն ի տեսութիւն լուծմանց
Երզոյ երգոյն, աշխատասիրեալ Գրիգորիտս հսկողի, արի և եղբաժիկ հոնտորի և քաջ փիլիսոփայի հայոց,
աշակերտի եռամեծիմ Յոհաննու Ռոտմեցոյ, ի լուսաւոր քամից վարդապետիմ վարդաճայ: Նյուսացու մասիմ՝
381ա, 382բ:

¹⁷ «Արքույ Գրիգորի Նյուսացու եպիսկոպոսի՝ եղբոր Բարսղի կեսարացոյ՝ Մեկնութիւն Երզոց երգոյն Սողո-
մոնի... Իմ թարգմանութիւմ՝ միջակ ոճով»՝ ՆՀԲ. հ. Ա., Վենետիկ, 1836, էջ 16:

դրել է 466 թվականի ներքո (ի թիվս կրտսերագույն թարգմանիչների այլ գործերի՝ Պատմութիւն Ալեքսանդրի, Նոճնոսի մեկնութիւնք առասպելաց և Եպիփանոսի գրվածքների)¹⁸։ Զարբանալյանը Նյուսացու անդրադարձել է նաև մի այլ աղիթով. առանձին- առանձին ներկայացրել է նրա գործերը, արել նրանց վերաբերող լեզվաբանական ուշագրավ դիտողություններ և շատ բարձր է գնահատել Երզնի մեկնությունը¹⁹։

Նյուսացուն բարձր է գնահատել նաև Կիմ Մուրադյանը, որը զբաղվել է երեք մեծ կապաղովկիացիների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի և հայ գրականության վրա նրանց երկերի ունեցած ազդեցության հարցերով. նաև դիտարկել է Երզնի Նյուսացու մեկնության փոխադարձությունը Նարեկացու և Վարդան Արևելցու համաձուլման երկերի հետ²⁰։

Եկեղեցական հայրերի գործունեությունը լուսաբանող իրենց աստվածաբանական երկերի մեջ Նյուսացու անդրադարձել են նաև ուսու ընդհանուրները²¹։

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. Նյուսացու Մեկնությունը կազմված է Առաքարանից, տասնհինգ²² ճառերից, որոնց կոչվում են «խաւք», իսկ ճառերը ներառվում են

¹⁸ Տե՛ս Գ. Զարբանալյան, Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնաց, էջ 116. («Ժամանակագրական ցուցակ հայկական թարգմանութեանց՝ բաժնում»). Մոյո տեղում, էջ 365-7, 367-70 համառոտ նկարագրություն Նյուսացու Մեկնության և նրա պատճառ-լուծմունքի։

¹⁹ Տե՛ս Գ. Զարբանալյան, Պատմութիւն մատենագրութեան հունաց, Ռոմմայնցոց և հարց եկեղեցւոյ. վեցմտիկ, 1883, էջ 761. «Առանց վախի՝ հմութեան անուամբ ճարտարախօսաց հետ կրօնաց գիմքը գուգակշով։ Ոճը մաքուր է և ըմբացիկ, քաղցր, հաճոյական, լի առատ և ճշգրիտ բաղդատութեամբ։ Նիւսացւոյն ուրիշ գրումները՝ հեղինակին խորունկ և ընդարձակ հմտութեամբ ճշմանակներ են... Որդիներս վրայ ունեցած համարմունքը՝ բանի տեղ մը չպիտեջ է սեպուել...»։

²⁰ Տե՛ս Կ. Մ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացիի հայ մատենագրության մեջ, Երևան, 1993, էջ 136-75՝ Գյ. Դ. «Նյուսացու ճառերից և թղթերից կատարված հետազոտ ջաղումներն ու հղումները», էջ 157՝ «Համապատասխան աստվածաշնչական սկզբնաղբյուրի առկայության պայմաններում էլ Նարեկացու ընդհանրական հատվածների հիմքը մնում է Նյուսացու մեկնության հայերեն թարգմանությունը», էջ 175՝ «Վարդան Արևելցիի ծանոթ է եղել Նյուսացու աշխատության հայերեն թարգմանությանը և իր երկը շարադրելիս օգտվել է դրանից»։

²¹ Տե՛ս http://www.krotov.org/spravki/persons/04person/greg_nis.html. - Карсавин Л. П., Святые отцы и учителя церкви, т. X, XI, Москва, 1994; Лосский Вл., Очерк мистического богословия восточной церкви, св. Мистическое богословие, Киев, 1991; http://antology.rchgi.spb.ru/Category_of_Nissu/Research.htm. - Прот. И. Мейендорф, Введение в синастическое богословие, N. Y., 1985; Кириенко Э. Керн, Золотой век синастического письменности, т. V: http://markobineti1.narod.ru/versiorus/alltexts/vita_moyzis.htm. - Стасюк Ю., Богословие и жизнь христианина в «Жизни Моисея» Григория Нисского, 2001; Филарет Гумилевский, Историческое учение св. отцов церкви, том II, С.- Петербург, 1882, ст. 144-148; Удалцова, Культура Византии IV-VII вв., М., 1984, ст. 73, 299, 344, 348, 525, 669; Христианство (словарь в трех томах), т. 1, М., 1993, ст. 444-445; Памятники Византийской литературы, М., 1968, ст. 84-85; Երզնի Նյուսացու մեկնությունից թարգմանություններ Տառ. Григорий Нисский, Точное изъяснение Песни Песней Соломона, Творения, ч. 3, Москва, 1862, с. 125, 128; A. Wifstrand, The new edition of Gregory of Nyssa's Commentary on the Song of Solomon. // Journal of Theological Studies, 12 (1961), pp. 291-298; Լուսերոմտային ցանցում Գրիգոր Նյուսացու home page-ը՝ bhsu.edu/atlasciences/as/faculty/dsalomon/nyssa.

²² Մեր գործածած օրինակը՝ ՄՄ՝ ձեռ. հմր. 1013 ութի տասնհինգերորդ ճառը, որ սակայն Նյուսացուն չէ և պարունակում է Երզնի բնագրի հավելյալ հատվածը, որ Նյուսացին չի մեկնել։

«թանգ» բառով: Ամեն ճառ սկսվում է Երգի քնաբան-քաղվածքով. որոնք բաժանվում են ավելի փոքր հատվածների և մեկնվում առանձին-առանձին²³:

ԱՌԱՋԱԲԱՆԸ. Այն տեղեկություններ է տալիս ոչ միայն մեկնության գրության համազանցների մասին, այլև ճանաչողական մեծ արժեք ունի որպես մեկնության այլաբանական սկզբունքի միջնադարյան տեսական կարևոր մի հիմնավորում: Եթե հաշվենք, որ եկեղեցին երկար ժամանակ վերապահությանը էր վերաբերվում Որոգիներ Ալեքսանդրացուն, իսկ Նյուսացու գործընկերներ Բարսեղ Մեծն ու Գրիգոր Աստվածաբանն այլաբանական մեկնության հանդեպ առանձնակի սեր չեն ունեցել, ապա կարելի է ասել, որ Նյուսացին եղավ Որոգիներից հետո Ալեքսանդրյան դպրոցի որդեգրած այս մեկնական եղանակի գլխավոր կենսատու: Որոգիները տվել է գաղափարը, իսկ Նյուսացին տեսականորեն հիմնավորել է այն:

Առաջաբանն սկսվում է գործի մեկենասին ուղղված դիմումով. մեկենասը սրբուհի Օլիմպիադան էր, որն իր թարծրատոհմիկ ամուսնու մահից հետո, ի թիվս այլ եկեղեցիների, մեծ գումար է նվիրել ճան Նյուսիայի եկեղեցուն. Նյուսացին Կոստանդնուպոլսում եղած ժամանակ (382/83 թ.) հանդիպել է այս տիկնոջը, որ նրան խնդրել է մեկնել Երգը²⁴: Հատկությամբ²⁵, հիմնվելով վարք Սրբոցի վրա, գործի մեկենաս է համարում Թեոդոս Մեծ թագավորին, նույն ակնարկը կա նաև Մեկնության պատճառ-լուծմունքներում²⁶, որոնցից մեկում մշվում է, թե Թեոդոս թագավորի պալատական երգիչները Երգը բառացի էին հասկանում (110ա). Նյուսացին իմանալով այս մասին՝ արքային խնդրել է թույլ չտալ հայհոյելու Սուրբ Հոգին. «Մի՛ տար հայհոյել գՀոգին Սուրբ, զի այն բանը առակառորդ քան զամենայն իրս աստուածայինս սրբագոյնք են...» (110ա). այս լսելով՝ արքան խնդրել է մեկնել Երգը: Ըստ մի այլ պատճառի՝ Նյուսացուն Երգը մեկնել խնդրել է նրա ուսումնական Պողոս անուցով թագավորազն կրոնավորը, որ իր ձեռքի տակ ուներ շատ կրոնավորներ, որոնք Երգն ուղղակի էին հասկանում (110բ):

Մեկնության մեջ նրա մեկենասի անվան հիշատակություն չկա. կա միայն իր գործի պատվիրատուի նկատմամբ հեղինակի դրվատական վերաբերմունքը և վկայություն, որից իմանում ենք, որ մեկենասն այս գործը պատվիրել է նախ բանավոր, ապա՝ գրավոր:

Ծարադրանքից երևում է, որ մեկնության այլաբանական եղանակը հակառակորդներ է ունեցել, որոնց Նյուսացին հարկ է համարում ցույց տալ այս եղանակի արժանիքները: Այնուհետև Նյուսացին համեմատություններով և Սուրբգրական զուգահեռներով ապացուցում է այլաբանական մեկնության կարևորությունը: Մեկնիչը խոսում է պատկերավոր լեզվով, ասելով, թե Աստվածաշնչի խոսքերը նման են «ամմշակ կերակուրի», առանց ցորենը փշրելու, սերմերն առանձնացնելու, առանց ցորենը մանրելու և այլուր պատրաստելու, բանական մարդկանց կերակուր հացը պատրաստել չի լինի, ուստի և անհրաժեշտ

²³ Այս մասին ավելի հաճախակիորեն խոսելու ենք առանձին:

²⁴ Տե՛ս Զարբհամադեան. Պատմություն մատենագրության հունաց, հռոմեացիների և հարց եկեղեցու, էջ 759. հիմք. <http://www.kratov.org/spravki/persons/20person/ficovs.html>. - Георгий В. Флоровский, Восточные славяне IV века, Париж, 1931:

²⁵ Ա. Հատկությամբ, Սուրբ Գրիգոր Հայրապետ Նյուսացի, էջ 48:

²⁶ Տե՛ս ՄՄ ձեռ. հմբ. 1897, 110ա-2ա:

է ավետարանական վարդապետությունը, որ մաքրի կալը հարդից, այսինքն՝ մանրամասնի Աստվածաշնչի խոսքերը (տե՛ս 63ա):

Նյութացին դա ապացուցում է Աստվածաշնչական զուգահեռներով: Ո՞վ կարող է լիճել լավագույն օրինակը, եթե ոչ՝ Քրիստոսը. և բերում է Քրիստոսի կյանքից երկու կարևոր դրվագ՝ առակներով այլաբանելը և խորհրդավոր ըմբռնելը (42ա):

Փաստորեն Նյութացին այլաբանությանը տարբեր անուններ է տալիս (տե՛ս ընդգծումները): Առհասարակ Նյութացու համար էական խնդիր չէ անունը, մեր համար կարևորը հոգին է, հոգևորի ոլորտը. Մեկնության համար կարևորը հոգևոր իմաստն է, բարոյական կողմը: Նման պարագայում անուններն ավելորդ են. *«Եւ կամ իբրեւ գխորին քան եւ զասացուածն իմաստնոյ եւ կամ այլ ինչ յառակացն, զորս ի ձեռն ի վեր հանելով ի տեսութիւն՝ եւ ի դարձուած քանին եւ յայլաբանութիւն. եւ եթէ այլ ինչ ոք անուանել կամեսցի, ոչ ինչ յաղագս անուանն վիճիմք, միայն թէ զաւգուտս իմաստիցն ունիցի»* (41բ): Ապա ավելացնում է. *«Վարի մեկնութեամբն, որպէս հաճոյ է իւր՝ յազուտն հայելով. ոչ ինչ հոգ տանի անուանն, որով պարտ իցէ անուանել զտեսակ մեկնութեանն»* (41բ):

Աստվածատեսությունն ըստ Նյութացու բացառում է բառերը (անունները), քանի որ դրանք մարդկային մտքի արգասիք են, իսկ մարդկային միտքը ևս արարված է. ուրեմն և ամկարող է իրական պատկերացում տալ Աստծու էության մասին: Գործողությունը մեզ պատկերացում չի տալիս գործողություն կատարողի մասին: Ուստի արարված աշխարհի հրաշքները ևս ամբողջությամբ չեն արտահայտում աստվածային փառքն ու մեծությունը: Այսուհանդերձ, Նյութացին չի ժխտում խոսքի հզոր ուժը. *«Գիրն սպանանէ»* (41բ): Այս հիմքով են պաշտպանվում Աստծու երրորդության անունները՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի:

Աստվածաշնչի բնագիրը, ինչպես տեսանք, Նյութացու համար խորհրդանշիչ է, որ ցույց է տալիս հոգևորի առկայությունը, այդ պատճառով էլ խաբուսիկ է Աստվածաշնչի բառացի ընկալումը: Նյութացու պատկերացմամբ Սուրբ Գրքի մարմինը մի վարագույր է, որը ծածկում է Աստվածաշնչում թաքցված փառքը:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ. Նյութացին ըմտել է մեկնողական գրականության մեջ լայնորեն կիրառվող հետևյալ եղանակը. ամեն ճառի սկզբում դրել է Երգի մի ընդարձակ քաղվածք, որ մեկնելիս բաժանել է ավելի փոքր հատվածների. հատվածումներն արել է իմաստային ամբողջականության պահպանման սկզբունքով²⁷. Երգի համապատասխան քաղվածքը կրկնել է նաև մեկնության ավարտին:

Ուսումնասիրությունը պարզում է, որ Երգի բնաբանային քաղվածքների կրկնությունը Նյութացու մեկնության մեջ միօրինակ չէ՝ առկա են որոշ այլասացություններ²⁸:

²⁷ Հատվածաբաժանումը միօրինակ ձևով չի արվել. գլխավոր քաղվածքներն իրենց հերթին մասնատվել են ավելի փոքրերի՝ պահպանելով իմաստային ամբողջությունը: Այսպես՝ «Որդիք մատր իմոյ մարտեան ընդ իս. եղին զիս պահապան լայզուք. զայցի իմ ոչ պահեցի» (51բ-2ա) արդեն քաժանված բնաբանն իր հերթին քաժանվել է երեք առանձին մասի և մեկնվել առանձին-առանձին. «Որդիք մատր իմոյ մարտեան ընդ իս լեղիմ զիս պահապան լայզուք» զայցի իմ ոչ պահեցի»:

²⁸ Հ. Ոսկյանը Երգի քմնական բնագիրը կազմելիս Նյութացու Երգի մեկնության թարգմանությունը չի օգտագործել. տե՛ս Հ. Ոսկյան, Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանությունը. էջ 5-7:

Սկսվածքի բնաբան <i>խեթի հայեցալ յիս արեգակն (51ա):</i> <i>Հովուեա՛ զուլս ի խորանս հատից (49բ):</i>	Ավարտի բնաբան <i>Արեգակն. աւե. թիւր հայեցալ յիս (51ա):</i> <i>Հովուեա՛ զուլս ի տաղատարս հատանցն (54բ):</i>
<i>Ջի վիրատրեալ սիրով եմ ես (61բ):</i> <i>Հաւաքեցէք յիս խնձորս (61բ):</i> <i>Ըմբռնեցուք մեզ աղուեսումս փոքումս (69ա):</i>	<i>Ջի խոցոտեալ սիրով եմ ես (61բ, 67ա):</i> <i>Ծածկեցէք զիս խնձորովք (66բ):</i> <i>Կալարուք մեզ աղուեսումս փոքումս (75ա, 75բ):</i>
<i>Ո՞ է սայ, որ եղանէ յանապատէ իբրեւ զսեղն ծխոյ խնկեալ (76ա):</i> <i>Ահա գառոյք Սողոմովցի (75ա):</i> <i>Հանդերձ ամեմայն մայրիւքն Լիբանանու (94ա):</i>	<i>Ո՞ է սայ, որ եղանէ յանապատէ իբրեւ զծառ խնկոյ ծխեալ (76ա):</i> <i>Ահա մահիճք Սողոմովցի (79բ):</i> <i>Հանդերձ ամեմայն փայտիւքն Լիբանանու (97ա):</i> <i>Վարսք իմ մանր անձրեալք զիշերոյ (106բ):</i>

Նյութացին թեւ երգի մեկնության այլաբանական եղանակի շատագույն է, սակայն մրա համար կարևոր է նաև բառական մեկնությունը²⁹ և մրա զուգորդումը Աստվածաշունչի հոգևոր իմաստներին:

Նյութացու Մեկնության կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրման բանալի կարելի է համարել «*Իբրեւ զաշտարակն Դաւթի պարանոց քոյ...*» դարձվածին վերաբերող՝ Ռեղինակի հետևյալ մեկնաբանությունը. «*Բայց մեր դիտադրութիւն է ի մանալ զաստուածային բանին զգաւութիւն զիս Դդ համեմատի աշտարակին այնմ մասն այս եկեղեցւոյ, որում պարանոց է անում: Նախ առաջին՝ պատշաճագոյն է քննել, զոր ի մերոյ մարմնոյ զմասն պարանոցին անուամբ կոչենք եւ ապալ այնումեւնեւ յարմարեցուցանենք ի նա զեկեղեցւոյն անդամոյն զանուն» (88ա):*

Ինչպես տեսնում ենք, բնագրի բացատրման համար մեկնիչն առանձնացնում է երկու կարևոր պահ.

ա. Բառացի մեկնություն (այս օրինակում՝ մարդու մարմնի համապատասխան հատվածի՝ պարանոցի քննություն).

բ. «Հարմարեցում» եկեղեցու համապատասխան հատվածին, որն իրագործվում է համեմատության միջոցով:

Այս օրինակը Ռուշում է, որ Նյութացին ոչ թե մոր խորհրդանիշներ է ստեղծում, այլ բերում է առկա բառի և այդ բառով արտահայտված խորհրդանիշի կապն արտահայտող ա-

²⁹ Նյութացում ամփոփվածորեն հետևող՝ Երգի Նարեկացու մեկնության մեջ խորհրդանիշների բառացի մեկնության մկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար թուլացած է, իսկ հաջորդ՝ Արեւելցու և Տաթևացու մեկնությունների մեջ ավելի փոքր տեղ ունի: Սա հավանաբար պայմանավորված է այն հանգամանկով, որ կապադովկյան դպրոցի ողջ զրական վաստակն ուղղված էր մոր գաղափարախոսության մշակմանը, ուստի և պահանջում էր այսպիսի մամուլակրկիտ վերաբերմունք: Մոռանալու չէ նաև Երգի բնագիրը, որն առանձնակի զգուշություն էր պահանջում: Նարեկացու, Արեւելցու, Տաթևացու համար տեսական հիմնավորման խնդիր այլևս չկար, ուստի նրանք կարիք չուսեին Նյութացու մասն մանրամասնելու Երգի բնագրի բառային իմաստները:

պացույցներ, որոնց փնտրտուքի ժամանակ նրա մեկնության հենքը դառնում է քառակամը՝ բնագրի ուղիղ, բառական իմաստի պարզաբանումը: Նյութացից այն կոչում է *«Գիթական ասացուածք»*: Մեր կարծիքով սա է Նյութացու մեկնության ուշագրավության հիմնական դրսևորումներից մեկը³⁰. *«Հարկաւոր է ոչ կալ մնալ ի գրեցելումս մեկնութեանն, այլ փոյթք մտածութեամբ փոփոխմամբ առնուլ զբանն ի հոգեւոր տեսութիւնն՝ ի միթական ասացուածոց զմիտսն ի բաց կացուցանելով»* (80ա):

Բառական իմաստի պարզաբանումը հեղինակին դրդում է աստվածաբանական թեմաներից անցնել կենցաղային ցկարագրությունների, խոսել լեզվաբանական, մարդակազմական երևույթների մասին, հետաքրքիր տեղեկություններ հաղորդել տարատեսակ բույսերի ինչպես բուսիչ, այնպես և հրաշագործ հատկությունների վերաբերյալ: Երգի բնագրի թելադրանքով Նյութացին հաճախ է անդրադառնում մարդու մարմնի առանձին մասերի քննությանը, խոսում է նրանց նախ դիրքի, ապա՝ դերի մասին, ցկարագրել-քննել է պարանոցը, կոկորդը, սիրտը, աչքերը³¹:

Պարանոցը ուսերի կենտրոնում է և պահում է գլուխը, կազմված է ոսկորներից, որոնք բնույթով նման չեն բազկոսկրերին, որոնք անբաժանելի են, այլ ձևավորվում են ողերով և ջլերով իրար միացող մանր ոսկորներով:

Սիրտը կրծքերի մեջտեղում է և շնչերակով շերտություն է մատակարարում ողջ մարմնին, դիրքը՝ *«ի մէջ ստեանցն»*, դերը՝ *«Աղբիւր իմն ի մեզ շերտութեան... յորմէ շնչերակաւն յամենայն մարմինն շերտութիւն բաժանի, որով... ամենայն անդամք մարմնոյն լինին հրով սրտին շեռեալք»* (60բ):

Աչքը, այսինքն տեսողությունը, ամենակարևոր զգայարանն է. *«Աչաց... է գործ տեսանելն, յաղագս որոյ ըստ տեղւոյն դրից քան զամենայն զգայութիւնսն գերիվերոյ կան՝ յառաջնորդութիւն ամենայն մարմնոյն կարգեալք ի բնութենէս»* (114բ):

Մեկնության մեջ մեծ տեղ ունի նաև բույսերի տարատեսակ հատկությունների քննությունը, նրանց վերաբերող տեղեկությունները հաճախ քանադուրանական ծագում ունեն:

Այսպես՝ խուցկի մասին պատմում է, թե կանայք նրանով իրենց մարմիններն օծում էին տղամարդկանց դուր գալու համար, այն պահում էին հագուստների մեջ կամ կախում էին պարանոցից: Կարճ ասած, խուցկն այսօրվա ըմբռնմամբ օգտագործվել է որպես օծանելիք (60բ):

Կիճամոնց³² ունի շոգը կամ շերտությունը զովացնելու, քնած մարդուն խոսեցնելու հատկություններ, օգտագործել են բաղնիքներում և դրել են եռացող ջրի մոտ (99ա):

Նկատելի է, որ ասացական բայերը, որոնցով սովորաբար արվում է մեջբերումը, այս կարգի հատվածների համար նրորորդ դնքով, հոգնակի թվով են, ի տարբերություն աստ-

³⁰ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աստվածաբանական մեկնություններում համեմատաբար քիչ են այս կարգի անդրադարձները, հարկ ենք համարել ավելի մաճրամասն ներկայացնել դրանք:

³¹ Համոզված ենք, որ Նյութացու Մեկնություն և «Բնութիւն ի մարդոյն կազմութիւն» երկերի միջև ընդհանրություններ կան, սակայն նրանց քննությունը մեր ուսումնասիրության ոլորտից դուրս է:

³² Կիճամոնց անուշաբուս բուրմունքով կեղև է, սուր օծության յուղի քաղաղամյութից է. տե՛ս ՆՀԲ, Բ, Ա, էջ 109Գ, ԼԲ. Արամեան, Երգ երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց, էջ 76, ծան. 4:

վածաշնչական քաղվածքների, որոնց դեպքում բայը սովորաբար եզակի թվով է. «ասեմ».
«լաղազս մորալ ամցանեմ թանի»:

Քրքումը բուժիչ է. «*պիտանացու ի բժշկութիւնս ծաղիկն*» (99ա), մոճիմ ունի ամուշահոտ և չփտող փայտ, որի ողորկության հարմարության և մշակման գեղեցկության պատճառով այն կիրառել են հյուսմության մեջ. «*Անոշահոտ է մոճ եւ փտութեանց ինքն ոչ է ընդունակ եւ առ ամենայն հիւսմական արուեստատրութիւնն պատշաճագոյն է, ողորկ լինելով եւ դիրայարմար եւ առ քանդակելոյն գեղեցկութիւն...*» (64ա):

Նյութացիմ ունի մաւ լեզվաբանական երկու դիտարկում, որոնք առնչվում են բնագրային թարգմանություններին: Ոչ ճիշտ կամ աղավաղված թարգմանությունը կարող է պատճառ դառնալ բնագրի սխալ ըմկալման, ինչպես «*Որդիք մարտ իմոյ մարտեան ընդ իս, եղիմ գին պահապան յայգոշ*» արտահայտությունը: Այն բազմակի ենթակամերով է, որոնցից երկրորդը՝ «մրանք» ենթական գեղչված է: Սակայն կարող է մաւ հասկացվել, թե իմ մոր որդիներն ինձ պահապան դրեցին, մի բան, որ մեկնական իմաստին հակասում է, քանզի մոր որդիները մեղքերն են: Եվ Նյութացիմ զգուշացնում է երբայերեմից արված ոչ ճիշտ հունարեն թարգմանության վերաբերյալ (51բ):

«*Առաքումն քո դրախտ մոմենեաց*» արտահայտության առիթով մշտն է. թե երբայական բնագրին ավելի մոտ է՝ «*քո բերանից առաքված խոսքը մոմենիների դրախտ է*» արտահայտությունը. «*Ջի որ հաւաստեաւ հային յերբայական բանիցն յասացուածսն փոխանակ ասելոյն, թէ՛ Առաքումն քո ի բերանոյ քումնէ դրախտ մոմենեաց*», որ է այսպիսի իմն եթէ. «*Բանքդ քո ի բերանոյդ առաքեալ, որպէս դրախտ մոմենեաց*» (98ա):

Մեկնվող մյուսի նկատմամբ այսպիսի բժախնդրությունը բացահայտում է գիտնական-մեկնիչի գիտական կարողությունները: Եվ ոչ մի դեպքում՝ լիմի աստվածաբանական մեկնաբանություն, կենցաղային նկարագրություն թե գիտական բացատրություն, հեղինակի խոսքը ձանձրալի չի դառնում, այլ խաղաղ ընթացքով սահում է Երգի «դժվարահաս» գաղտնարաններով:

Մեկնության մյուս և Նյութացի-բարոյախոսի համար ամենակարևոր կողմը «*հոգևոր տեսության*» պարզաբանումն է: Սա արդեն ծնվում է Աստվածաշնչի շրջանակներում և սնվում է մրանից՝ համեմվում է ամենատարբեր սուրբգրային քաղվածքներով: Այս դրսևորումով ինչպես ընդգծվում է աստվածաբանական երկի վերամշարվածությունը, այնպես էլ շեշտվում է մեկնության բարոյական կողմը: Դա է մեկնության բարձրագույն (Որոգիցյան ըմբռնմամբ՝ ամագոգիական) իմաստը, որ մարդ արարածին հորդորում է իր մեջ փմտրելու և գտնելու կատարյալին, բարության ձգտումով, մաքուր վարքով ու մտքով մամակելու նրան:

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ - Եթե փորձենք մի բանաձևով ամբողջացնել Երգի Մեկնության աստվածաբանական թեման, ապա մեր կարծիքով դա կհմչի այսպես «ԾԱՆԻՐ ԶՔԵԶ», այսինքն՝ քո մեջ ճանաչի՛ր Աստծուն:

Եթէ ո՛չ ծանիցես զանձն քո, գեղեցիկդ ի կանայս,

եղե՛ր դու զհեռ գարշապարացն հատից,

եւ արածես զուս քո ի վրանս հովուաց (Ա. 7):

Սա՛ է փիլիսոփայական այն ատաղձը, որից ծնվում է աստվածաճանաչողության դառը և քաղցր ճանապարհը: Ըստ Նյուսացու՝ դա ճանապարհ է, որը հաղթահարվում է կատարսիսի՝ ինքնամաքում միջոցով: Ուրեմն՝ ով մաքրի իր հոգին, մա կտեսնի և կզգա աստվածային սերը: Ներքուստ ունեցիր հրաշալիք և զեղեցիկը, որպեսզի միշտ ձգտես ձեռք բերել ավելին. «*Քանզի որպէ՛ս արդե՛ք առանց տրտմութեան որ լինիցի, գիտելով, զի այնքան վեր ի ճանապարհաւքն բարձրացեալ սիրով առ բարոյն ընդունելութիւն մաքրեալ անձն չեւ եւս*» (69ա):

Բոլոր ցանկությունների սահմանն Աստված է: Կատարյալին ձգտելու մարդու անհագ ցանկությունն արդեն մրա կատարելությունն է: Աստվածաճանաչողության ճանապարհն անհագ սիրո ճանապարհն է: Եվ պատահական չէ, որ հոգևոր այդ կապն արտահայտվում է սուրբ ամուսնության տեսքով. Աստված սեր է:

Մուծէ՛ք զիս ի տուն զինույ,

կարգեցէ՛ք ի վերայ իմ զսէր,

հաստատեցէ՛ք զիս իողով,

կուտեցէ՛ք յիս խնձոր,

զի խանդակաթ եմ ես սիրով (Բ. 4-5):

Ողջ Երզն այս անհագ սիրո այլաբանական պատկերն է: Նյուսացին Աստծու մկառմամբ սիրո պատկերն արտահայտել է հոգեբանական կտրվածքով: Այդ սերն արբեցնում է և բնութագրվում է այսպես. «*բորբոքումն սաստիկ ցանգութեանն*», «*ոչ երբեք դադարէին ի տենչալոր*»: Փեսա-Բրիստոսը կոչվում է մահ «*փափագելի*»: Նյուսացին ունի մի ուշագրավ միտք, որով հոգեբանական մուրք դիտարկումը փոխադրում է աստվածաբանության դաշտ. վայելքի սպասումը բորբոքում և սաստկացնում է ցանկությունը (ծողովուրդն ասում է՝ Ուշ լինի՝ մուշ լինի), Նյուսացին գրում է. «*Մեծագոյն փափագումն զնորայ բաղձանն բորբոքէ յապաղման վայելմանն, որպէս զի անիցէ ցանգութեամբն ուրախութիւնն*» (53բ):

Մեկնության մեջ Երզն Գ. 6 տումը մրա բնագրի շատ հատվածներ այլաբանորեն բացատրելու մեկմակետ-բանալին է:

Ո՛վ է սա, որ ելեալ ցայ յանապատէ՛

իբրև զծուխ ծառացեալ բարձրացեալ... [Գ. 6]:

Նյուսացին ակնարկում է Մովսեսի «աստվածատեսությունը»³³ (62եմբ, որ մա Օրենքներն ու Մարգարեությունները ևս հասկանում էր այլաբանորեն): Աստված Մովսեսին երևաց մախ կրակով, ապա՝ ծխով. կրակով և ծխով երևալը խորհրդանշում է Աստծու անճանաչելի և անհասանելի լինելը, սրանով էլ բացատրվում են Երզնի մի շարք հատվածների (Բ. 13, 14, Գ. 1, 3, 4, Ե. 2, 5, 6) իմաստային հակասությունները:

Աղանեա՛կ իմ, ընդ հովանեալ վիմիդ՝

առ պատուարաւ պարսպիդ:

Երևեցո՛յ ինձ զերեսս քո,

Եւ լսելի արա ինձ զբարբառ քո,

զի բարբառ քո քաղցր է.

³³ Մովսեսին վերաբերող հատվածները հաճախեղեպ են՝ տե՛ս Նիսացի. Մեկնություն, 45բ, 46ա, 78ա, 106բ:

Եւ տեսիլ քո գեղեցիկ [Բ. 14]:

Նյութացու համար իմաստային այդպիսի հակասությունները մտահոգության խնդիր չեն փնջպես արդեն տեսանք Առաջաբանում), քանզի դա ինքնին բացատրվում է Աստվածային էությանը. Աստված անքննելի է, կարելի է հայել Աստծուն, բայց ոչ ճանաչել և տեսնել. «*Ո՛ր ոք արդեալք հանդուրժէր քում երեսմանդ, զի ոչ ոք է, որ տեսանէ զերեսս Տէառն եւ ապրէ*» (63ա):

Աստծուն հայել՝ ճշմանկում է քայլել Տիրոջ հետ, ընթանալ Նրա ետևից. իսկ ով խոտորվում է այդ ճանապարհից կամ զուլիք բարձրացնում է՝ տեսնելու Նրան, այլ ճանապարհով է գնում [տե՛ս Երգ. Ա. 7, Նիսացի, Մեկնություն, 91ա]: Աստվածատեսության վերելքի հաղթահարման ճանապարհին մարդկային հոգին գիտակցում է, որ դա անհասանելի վերելք է, բայց դա խոտորվելու պատճառ չէ, այլ՝ հակառակը: Անհագ ցանկությամբ է արթնանում հարսը՝ բացելու իր սիրտը փեսայի առաջ և արժանանալու նրա սիրուն: Հարսն այդ սերը ձեռք է բերում «*պատմունճանք հանելուփ*» (53ա), այսինքն՝ հողեղեն կրքերից ազատվելով և մաքուր սրտով Աստծու հարսնարան մուտք գործելով (տե՛ս 43բ):

Տարա՛ն զիս արքայ ի սենեակ իւր (Ա. 3):

Աս, փաստորեն, միջնադարյան ըմբռնմամբ զիրք է Բրիտտուսի մասին, Ում հանդեպ սերն ամենագոր է:

Իսկ մեկնության հիմնական թեման աստվածային ճանաչողությունն է և մարդու բարոյական ճանապարհը: Այդ է պատճառը, որ այն համարվել է ոչ թե մեկնություն, այլ մի միստիկ օրագիր, որ ընթերցողին տալիս է մաքուր ապրելու և կատարելության ձգտումով Աստծուն մտանվելու խորհուրդը. «*Սա ոչ միայն միստիկ գաղափարախոսության ուրվագիծն է, այլ նախ և առաջ մի իմոտիվ միստիկ օրագիր է՝ էզզեցեմիկական տրակտատին ոչ քննորոշ տեսքով*»³⁴:

Նյութացի-Նարեկացի առնչության մեջ ուշագրավ է Աստծու և մարդկային հոգու միավորման միստիկայի ընդհանրությունը. քանզի հայ իրականության մեծագույն միստիկը Նարեկացին էր, ուստի և պատահական չէր նրա անդրադարձը Երգի Նյութացու մեկնությանը:

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՌՈՒՄԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ³⁵. Հայ իրականության մեջ Նյութացու երկին շարունակաբար դիմելը բացատրելի է նաև նրա թարգմանության լեզվաոճական հատկանիշներով: Հեղինակն ընթերցողի հետ վարում է մի բաց զրույց, որ զգալի է հատկապես ճառերի սկզբնամասերում: Մեկնությունը հաճախ սկսում է հարցումով. մեկնաբանելիք նյութի նկատմամբ այսպիսի մոտեցումն ավելի կենդանի և դինամիկ է դարձնում կատարվել աշխատանքը: Նկատենք, որ ոճական հարցադրման այս ձևը Երգի հայերեն մեկնությունների շարքում օգտագործել է մասամբ Նարե-

³⁴ Տե՛ս <http://krotov.org>, Георгий Флоровский, Восточные сгуды IV века, Париж, 1931:

³⁵ Անշուշտ ճաշատակաբարմար կլինեն Երգի՝ Նյութացու մեկնության թարգմանության լեզվաոճական իրողությունների և պատկերավորման միջոցների ըմբռնումը (հատկապես Ռոմանիշների շղթայական գործածության դեպքում) անվ մեկնության մայր-դամզորիմ զուգարդելով, սակայն եմբակայական պատճառով այդ ըմբռնումը չի արվել, ուստի մեկնության լեզվաոճական դրսևորումները դիտարկելի են Նյութացու երկի հայերեն թարգմանության շրջանակներում:

կացին, իսկ Գրիգոր Տաթևացու համանուն մեկնությունն ամբողջությամբ կառուցված է հարց ու պատասխանի ձևով:

«Զի՞նչ է ասացնել» (60բ). «Զի՞նչ արդեւք յայտոսիկ իմանայցենք» (69բ). «Զի՞նչ արդեւք յայտոսիկ մտաւ ածիցենք» (91ա). «Զի՞նչ արդեւք իցէ այս» (54ա). «Զի՞նչ է անդաստան եւ ապա զի՞նչ է աւժանդակութիւն անդաստանին եւ զարութիւն» (68ա). «Զիա՞րդ մանրամասնաբար մեզ նկարագրէ զգարնանոյն շնորհ» (70բ). «Զի՞նչ իցէ արդեւք կատարեալ վերին ճանապարհն» (74ա). «Զի՞նչ արդեւք իցէ պատճառ հողմոյն այնորիկ փոփոխման» (102ա):

Նյութացին օգտագործել է նաև հարցական նախադասությունների շղթա՝ կրկնելով միևնույն հարցական դերանունը. այս ձևով շեշտել է հարցման երանգը. «Զիա՞րդ եղեւ պոռնիկ քաղաքն հաւատարիմ Սիովն, զիա՞րդ լքաւ դուստր Սիովնի իբրեւ զտաղաւար յայգւոջ, զիա՞րդ նստաւ միայնացեալ քաղաքն յղփացեալ ժողովրդովք... զիա՞րդ աղտեղացաւ ոսկին եւ այլայլեցաւ արծաթն...» (53ա) կամ «Զի՞նչ է ծմերանի այն ծաղիկն եւ թառամեալն, զի՞նչ յերկիր ի ծայրոց ծառոցն վայր լուծեալ, զի՞նչ լոն երգեցաւդ հաւուցն ձայն, զի՞նչ ծով, որ գոչէ ալեալքն, զի՞նչ առ ալսոքիկ եւ անձրեւն, զիա՞րդ ինքեամբ գնալ անձրեւն...» (72ա):

Հեղինակն ընթերցողին հաճախ դիմում է հրամաններով. «Հայեա՛ի վեր հոգոյ ականբ, քե՛զ ասեմ, ո՛ր լսող, հայեա՛ ի վեր յերկինս յայս եւ տե՛ս...» (101ա), կամ «Բայց լուիցո՛ւք, զիմչ եւ ընդ եկեղեցւոյն խաւսի» (69բ):

Խոսասփելով երկարաբանություններից, իր խոսքը երբեմն կարճում է այսպես. «Բայց աւելորդ է յերկարել զխոստովանել բանս... լսեմք եւ մեք ամենեքեան...» (57ա), «Բայց պարտ եւ արժան վարկանիմ ոչ կալ մնալ մտաց ի մանրամասնաբար յայտոսիկ նկարագրութիւն, այլ սոքաւք առաջանալ» (71ա). կամ մեկնությունն ավարտում է՝ «եւ այսոքիկ զայսքան» (60բ):

Իր խոսքով հեղինակը կողմնորոշում է ընթերցողին՝ նրա ուշադրությունը սևեռելով առավել բարդ մեկնական հատվածների վրա, այսպես. «Այժմ առաջի եղեալ մեզ աստուածային բանից տեսութիւնս յերգոյ երգոցս յարմարութենէ դժուարահասանելի իմն եւ ծածկեալ իմաստութեամբ յանճառելիսն պարունակել իմաստիւքն մեծապէս ուշադրութիւն են պէտք» (101ա):

Հայտնի է, որ միջնադարյան աստվածաբանական մեկնության վերջնական նպատակը բարոյական իմաստի վերհանումն էր: Նյութացու մի շարք ակնարկներ շեշտում են իր մեկնության բարոյախրատական կողմը: Նա ոչ միայն մեկնիչ է, այլև՝ բարոյախոս, ոչ միայն մեկնում է Երզը, այլև դրանով խրատում և ուսուցանում է ընթերցողին

Մեկնությունը հյուսելու հատուկ եղանակ ունի. ամեն մոր հատվածի անցնելիս համառոտ վերապատմում է նախորդ հատվածի կամ հատվածների մեկնությունը. սրանով մեկնական հատվածների միջև ներքին կապը երբեք չի խզվում: Անգամ երբ մեկնում է բովանդակությամբ նախորդից խիստ տարբեր թվացող որևէ քաղվածք, դրանք ընդհանրացնում է վերապատմումներով: Այս կարգի ընդմիջարկումները կրկնվում են այլուր՝ նպաստելով մեկնական հատվածների դյուրընկալելիությանը:

ՊԼԱՏՈՆԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ³⁶։ Աստվածաբանական երկերը, ինչպես նաև աստվածաշնչական մեկնությունները, ունեն խոսքի կառուցման առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են ինչպես միջնադարյան կրոնական աշխարհայացքով և աստվածաբանական թեմատիկայով, նույնպես և բարոյաուսուցողական եղանակով ընթերցողի վրա ազդելու հեղինակի սկզբունքային մոտեցումով։ Այս առումով արժեքավոր են եկեղեցու հայրերի գործերը, որոնց գործածած պատկերավորման միջոցները, Աստվածաշնչի հետ միասին, հսկայական ազդեցություն են թողել ողջ միջնադարի վրա։ Այդ իսկ պատճառով Նյուսացու մեկնության պատկերավորման միջոցները փորձում ենք ներկայացնել հնարավորինս համաձայնորեն, քանզի Երգի հայերեն մեկնությունների վրա ևս դրանք շատ մեծ ազդեցություն են ունեցել։

Միջնադարյան հեղինակները հակված էին ամենուր և ամեն ինչում տեսնելու հոգևորը, հավերժը և անմահը, որը հակադրվում էր մարմնավորին, ժամանակավորին։ Հոգևորը ներկայացվում է նյութական աշխարհով. «Տեսանելի առն է զանոնսանելին» (73բ)։ Անտեսանելին տեսանելի դարձնելու միտումը նկատելի է հատկապես եկեղեցու հայրերի զորավածքներում, որոնք պետք է ոչ միայն պաշտպանեին նոր ընդունված հավատը, այլև՝ նրա զաղափարախոսներն էին և մշակում էին նրա աստվածաբանության հիմնական դրույթները։

Այս առումով բացառություն չէ նաև Նյուսացու մեկնությունը, այստեղ ևս աշխարհը երկատված է. «Մի՛ որք ախտաւոր եւ մարմնական»³⁷ տակաւին մեռեալ էին հին մարդոյն ժահահոտութեամբ նեխեալ առ անասնական անբանութիւնսն ի վայր քարշեսցէ զաստուածաշունչ իմաստից..., այլ արտաքս հանելով իւրաքանչիւր ոք զհինքն ինքեամբ եւ արտաքոյ միլթական աշխարհիս լինելոյ, եղցէ առիմակ իմն անախտութեամբ ի դրախտն եւ ի ձեռնն մաքրութեանն մնանել Աստուծոյ (45բ)։

Երկատված է նաև մարդը. «Հանգի կրկին եղելոյ մարդկային բնութիւնն. մինն հոգոյ անախտութեամբ զաւրանայ եւ միւսն՝ ախտի մարմնին...» (104բ)։

Անճառելի և անհասանելի էությանը վերաբերող խոսքը պետք է պատշաճեր թվանդակությանը, և գրականության առջև դրվում է «բարձր» ոճ ունենալու պահանջը, ու քննադատվում է այդ ոճին օտար ցանկացած դրսևորում՝ այն համարելով «գեղջուկ բանի» գրված։ Մարդկային կյանքը, բնության երևույթները, կենդանական աշխարհն ու ողջ տիեզերքը խորհրդանշաբար ընկալելու, հոգևորն ու հավերժը կոնկրետ պատկերներով տեսնելու անհրաժեշտությունից ծնվում է միջնադարյան գրականությանն այնքան բնորոշ առանձնահատկությունը՝ վերացականությունը։ Սրան նպաստում է նաև միջնադարյան հեղինակի վերաբերմունքը սեփական երկի նկատմամբ. նա խուսափում է ոճի անհատականացումից՝ առաջնային համարելով աստվածաշնչական կամ հայրաբանական որևէ հեղինակավոր երկից արված քաղվածքները։ Պատահական չեն նաև հեղինակների թերարժե-

³⁶ Միջնադարյան երկերի պատկերավորման միջոցների մասին տե՛ս, Ляховен, Д., Поэтика древнерусской литературы, Москва, 1979, стр. 80-208։

³⁷ «Ախտաւոր» և «մարմնական» բառերի զուգորդումը պատահականություն չէ. մրամք իմաստները փոխադարձաբար լրացնում են իրար և պարզում միջնադարյան ըմբռնումը մարմնավորի նկատմամբ. ամենայն մարմնավոր բան ախտավոր է և հակառակը։ Այսպիսի կապակցությունների զուգորդումը հաճախադեպ է։

քության զգացումը, դժվարեցնելի և խորհրդավոր իմաստները մեկնելու անկարողության վախը. «*իցէ՛ արդենաւք կարողութիւն ըստ արժանաւորութեան մերձեմալ ի մեծ բնութիւն իմաստիս, որքա՛ն զսքանչելիս աստուածային մեծութեանս պարունակէ բանս, որքա՛ն երեսցուցանեն զարութիւնն Աստուծոյ զգերազանցութիւնն ասացելոցս միտք*» (75ա): Այս ամենը խորհրդավորություն և միաժամանակ վերաբարձություն է հաղորդում «նորք» գրքերի ոճին: Սակայն հեղինակներն այդ ոճին հասնում են մի քանի միջոցների կիրառմամբ.

Միջնադարյան մեկնողական և ընդհանրապես գրական երկերը լի են կաղապարային դարձած աստվածաշնչական քաղվածքներով: Այդպիսին են մահ Երգի մեկնությունները, որոնց մեջ կան քաղվածքներ, որոնք պարբերաբար կրկնվում են ինչպես միևնույն մեկնության մեջ, այնպես և փոխանցվում են մեկնությունից մեկնություն: Այս դեպքում կարևոր է հեղինակավոր այն մեկնությունը, որի ազդեցությունը տարածվում է հետագա մեկնությունների վրա: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երգի հայերեն մեկնությունների համար այդ հեղինակությունը եղել է Նյուսացուն: Ստորև մերկայացնում ենք աստվածաշնչյան մի մասն երկու քաղվածքները³⁸, որոնք Նյուսացու օրինակով անցել են հայկական մեկնություններին.

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆԶ

Եթե ոք ծարաւ իցէ,
եկեսցէ առ իս եւ արբ-
ցէ (Յովհ. Է 37):

Ջի երկայն աւուրք եւ
ամբ կեմաց՝ յաջմէ
յիւրմէ, եւ յաճեկէ
իւրմէ փառք եւ
մեծութիւն (Առակ. Գ
16):

ՆՅՈՒՍԱՅԻ

Եթե ոք ծարաւ իցէ,
եկեսցէ առ իս եւ
արբցէ (Նսաւք Ա.,
թղ. 47ա):

Երկայնութիւն
կեմցադոյ եւ ամբ
կեմաց՝ ընդ յաջմէ
յիմաստութեանն եւ
յաճեկէ իւրմէ
նոխութիւն եւ փառք
(Նսաւք Գ., 67բ):

ՆԱՐԵԿԱՅԻ

Թե ոք ծարաւի իցէ,
եկեսցէ առ իս և
արբցէ (280):

Երկայնութիւն
կեմաց յաջմէ, և
յաճեկէ իւրմէ փառք
և մեծութիւն (291):

ԱՐԵՎԵԼՅԻ

Եթե ոք ծարաւի է,
եկեսցէ առ իս եւ
արբցէ (3բ):

Ջահեկն զգլխովն,
որ ունի փառք եւ
մեծութիւն եւ աջ
նորայ պատեցէ.
ունի երկայն
աւուրք եւ ամբ
կեմդանութեան
(16բ):

ԱՍՏԾՈՒՆ ՏՐՎԱԾ ՍՏՈՐՈՓԵԼԻՆԵՐԸ. Սրանք մեկնությանը հաղորդում են առանձին վերացականություն: Աստվածության գաղափարի վերացարկմանը Նյուսացին հասնում է Աստծուն տրված աճումների ոճական կիրառությամբ: Նա օգտագործում է երկու տեսակի աճումներ. ա) բնորոշումներ, որոնք ձևավորվում են «աճ» նախածանցով. բ) վերացական: Ավելացնենք, որ այդ աճումները հաճախ հոմանշային կա՛մ իմաստով մոտ բառերի զույգերով են, կա՛մ էլ շղթա թվարկումով դրված են կողք-կողքի.

³⁸ Կան շուրջ 20 այսպիսի քաղվածքներ:

ա) ժխտական անուհներ. «Անմեղքեանի եւ անտեսանելի... զաստուածային զարու-
թիւնն զուցանէ» (48ա). «Անսահմանելի եւ անըսքոնելի աստուածութիւնն» (90բ). «Անտե-
սանելի եւ անհասանելի, զոր ոչ ոք ետես երբեք» (92ա)³⁹. «Անյեղյեղուկ եւ անայլայելի
բնութիւնն ունենով» (73բ):

բ) վերացական անուհներ. «Ինքն է կեանք եւ հաստատութիւն» (44բ). «Իմաստուն, զա-
րար, բարի, սուրբ երանութիւն եւ մշտնջենաւորութիւն, դատար, փրկիչ...» (48բ). «Ե-
րանելի եւ յաւիտենականն եւ որ քա՛ն զամենայն միտս գերազանց է բնութիւնն» (73ա):
Վեոթիմ օրինակում «և» շաղկապի կրկնությամբ հաջորդում են բնորոշումները, որոնցից
վերջինով ցանկացում է ասել, թե մարդկային միտքը ի զորու չէ ճանաչելու աստվածու-
թյունը:

Աստվածային անուհները զուգորդվում են շաղկապական կամ բառական կրկնություն-
ներով: Նկատելի են բառական վերջընթեր կրկնություններ, որոնցով կրկնվող բառն ուժե-
ղացնում է խոսքի հուզական լիցքը՝ ընդգծելով այն բուն ասելիքը, որն առանձնացնում է
հեղինակը. «Զի յոյս ճշմարիտ է նա եւ կեանք ճշմարիտ եւ արդարութիւն ճշմարիտ» (61բ):

Նյութագու մեկնության մեջ հաճախ հանդիպող ռեական միջոցներից է նաև համագոր-
անդամների երկար շղթան: Դրանք պարբերաբար հաջորդում են իրար (կարող են լինել
նաև հոմանիշներ), հաճախ զուգորդվում են նախդիրների, շաղկապների, ինչպես նաև
վերջածանցների կրկնությամբ: Ռեական այս միջոցի կիրառությամբ հեղինակի լեզուն
դառնում է «ծորում և երկար»: Կարծես չկարողանալով բառերից մեկն ընտրելու, նա
դրանք պարզապես դնում է իրար կողքի: Բառերն ընթերցողի վրա ազդում են ոչ այնքան
իրենց տրամաբանական իմաստով, որքան իմաստների խորհրդավոր բազմազանու-
թյամբ⁴⁰. «/Ոչ գայլ ինչ զինքեամբ շուրջ տեսանելով կարծել զինքն տեսանել, զոր կրեն ան-
այցելուքն ինքեանց՝ զուժ կամ զգեղեցկութիւն կամ զփառս կամ զզարութիւն կամ զընչե-
ղութիւն, զլիւթութիւն, զհպարտութիւն եւ կամ զամպարտութիւն կամ զմարմնոյ մե-
ծութիւն կամ զդիմաց գեղեցկութիւն կամ գայլ ինչ» (54ա,բ). «կամ» շաղկապը և «ութիւն»
ածանցը կրկնված են 8-ական անգամ, «զ» նախդիրը՝ 11:

Հոմանիշություն. Հայնորեն կիրառվող ռեական եղանակ է: Նյութագու մեկնության մեջ
հանդիպում ենք հիմնականում հոմանիշ զուգների: Միջնադարյան գրականության մեջ
հոմանիշների դերը էապես տարբերվում է մոր գրականության մեջ նրանց ունեցած դերից,
եթե մոր գրականությունը հոմանիշ բառերն ու արտահայտություններն օգտագործում է
խոսքի միօրինակությունից խուսափելու համար, միջնադարյան գրականության մեջ
նրանց գործածությունը միտումնավոր է՝ նրանք փոխարացնում են իրար՝ ընդլայնելով բա-
ռիմաստը⁴¹:

ա) Առանձին բառերով արտահայտված հոմանիշներ. Հոմանիշները կարող են զու-
գորդվել նաև շաղկապական համ հնչյունական կրկնություններով. «Զձայնիցն զարութիւն
յառնէ եւ մատակա եւ մերձար լիցի յուսոյն» (71բ): «Մոտակա-մերձար» հոմանիշային
զուգը կառուցված է «և» շաղկապի կրկնությամբ:

³⁹ Ժխտական անուհների զուգը լրացվել է հոմանիշ դարձված, որն իրականում առաջին բառի հոմանիշն է:

⁴⁰ Ռեական այս միջոցը լայնորեն կիրառված է Նարեկացու «Մատան»-ի մեջ:

⁴¹ Հնարավոր է նաև, որ թարգմանչի միջամտության արդյունք լինեն:

կրկնություններ ստեղծվում են նաև միևնույն ածանցի կիրառությամբ. «Անճառեղի եւ անճայնելի բանիւքն» (107ա), նաև՝ «ոչ» միտակաճ մասնիկի կրկնությամբ. «Ոչ քարի գթեալ եւ ոչ անգանելով ի խորխորատ» (57բ):

բ) Հոմանիշության անդամներից մեկն արտահայտվում է բառով, մյուսը՝ կապակցությամբ. «Կամաւոր եւ ամենայն հարկաւորութենէ ազատ» (74ա):

գ) Հոմանիշությունը կարող է ձևավորվել կապակցություններով. «Ժամբաւ ջուրն այն, որ յարածամ բղխէ եւ յառաջ հոսի... յաճախապէս կայցէ մնասցէ առ միշտ բղխեցումն... ոչ դադարէ ջուրն միշտ հոսելով եւ յաւէտ բղխելով» (106ա):

դ) Առանցիկ մախադասություններով ձևավորված հոմանիշություն. «Այժմ անոյշահոտ է այցիմ, եւ տունալ լինի ի նմանէ բուրումն իմն անոյշահոտութեան հեշտալի» (73ա):

Նյութագիծ կիրառել է նաև ոճական հոմանիշությունը. Այս երևույթի առանձնահատկությունն այն է, որ թափմաստով իրար հետ կապ չունեցող արտահայտությունները մեկնության մեջ ոճական կիրառությամբ պայմանավորված միևնույն միտքն են արտահայտում: Այս արտահայտությունների կապող օղակը կարող է լինել ինչպես Աստվածաշունչը, այնպես էլ բառի սիմվոլիկ նշանակությունը: Ոճական հոմանիշները փոխադարձաբար լրացնում են իրար:

Փոխաբերությունները, համեմատությունները և մակդիրները.

Փոխաբերություններ. Ինչպես վերը նշեցինք, միջնադարյան գրական երկերում աշխարհը երկատված է: Իրական աշխարհի ցանկացած երևույթ՝ լինի տարվա եղանակ, սեր, համբույր, բույսեր կամ կենդանիներ, խորհրդանիշներ են: Իսկ միջնադարյան արվեստի, ինչպես նաև գրականության խնդիրն է եղել բացահայտել այդ խորհրդանիշները: Եվ լեզվի պատկերավորման միջոցների համակարգը ելնում է հենց այս կետից: Հեղինակը զբաղված է ոչ թե նոր խորհրդանիշների փնտրտուքով, այլ՝ ընդունված խորհրդանիշների բացատրության փորձեր անելով: Այդ է պատճառը, որ Երգի տարբեր մեկնություններում խորհրդանիշները հիմնականում նույնական են, տարբեր է այդ խորհրդանիշները մեկնելու հեղինակային վերաբերմունքը⁴²:

Օրինակ՝ խումկը առաքինությունն է, կնդրուկն ու զմուռնը՝ մահվան նշան, այցի՝ դրախտը, ձմեռը՝ կռապաշտությունը, գարունը՝ մկրտությունը և այլն: Խոսելով արդեն հայտնի խորհրդանիշի մասին և պարզաբանելով այն, հեղինակը գործածում է «ձևական փոխաբերություններ»: Միջնադարյան խորհրդապաշտությունը հաճախ փոխաբերությունները փոխարինում է խորհրդանիշներով⁴³: Երգի մեկնություններում գործածված փոխաբերությունների մեծ մասը միաժամանակ խորհրդանիշներ են:

Օրինակ՝ «Այցի է անմահութիւնն...» (53ա). «Մի ոչխար է քովանդակ մարդկային բնութիւնն» (53ա). «Տէրն տաշխն լինելով՝ ի մերքս կա ծրարեալ ի միտս» (60բ). «Պտուղն ամենայն իրաւք վարդապետութիւն է» (65ա). «Առաքինութիւն է իողն» (66բ) և այլն:

⁴² Նյութագիծ ըմտնել է մեկնության ծավալում եղանակը և խորացել է երևույթների ամենատարբեր ծալքերում: Նախկինում հնարավոր չափով համառոտել է իր մեկնությունը՝ նախապատվությունը տալով համեմատություններին: Արևելյան ըմտնել է բանաբաղությունը, իսկ Տաթևացին բավականացել է պարզապես խորհրդանիշների քվարկումով:

⁴³ Տե՛ս Лихачев Д., Поэтика древнерусской литературы, стр. 164.

Համեմատություններ. կազմում են ամբողջ մեկնության հիմքը: Որպես կանոն հեղինակը մեկնության հաջորդ՝ խորհրդամիշ-փոխաբերությունը քայլին անցնում է ծավալուն համեմատությունների միջոցով: Այս դեպքում Նյուսացին օգտագործում է մկարագրությունը. հիմքային է բառացի մեկնությունը. «Որպես», «իբրև» կապերի փոխարեն գործառնում է այնպիսի բառեր, որոնցով երևում է, որ երկու երևույթների կապն արված է միանություն հիմունքով. «Երբեմն ձիոյ նմանեցաւ... դարձեալ մանեկաց եւ տատրակաց նմանեցաւ» (77ա). «Ջերկրային առաքինութիւնսն մկարագրէ բանին... մարդ եւ նո՞ն փտութեան եւ ապականութեան անընդունակ... եւ առ այսոքին համեմատութեամբ առ վեհագոյնսն իւր փոփոխումն ցուցանի» (77ա):

Ի տարբերություն մոր գրականության, ուր համեմատություններն արվում են հիմնականում ըստ արտաքին հատկանիշի միանության, միջնադարյան գրականության մեջ համեմատությունների մեծ մասը հիմնված է ներքին հատկանիշների միանության վրա: Արտաքին հատկանիշի միանության հիման վրա ստեղծված համեմատություններն ավելի քիչ են, բայց Նյուսացու մեկնության մեջ կան մի քանի այդպիսի հոմանիշներ. օրինակ՝ «Քուն մահուան նման է» (104բ). «Զի՞նչ է արդեւք կարգ բանիս, որպէ՛ս յարմարին յիրեարս, զիս՝ որդ ամբողջ պահի կարգաւորութիւնն իբրեւ ի շղթայագործի իմիք իմաստիցս յարմարումն...» (71բ):

Մակդիրներ. Մեկնության մեջ բարոյական իմաստների փնտրտուքը երևում է հատկապես մակդիրների ընտրության մէջ: Որպես կանոն դրանք ընտրագրում են մարդկային կյանքը և վարքը. «Ապառաժոտ զոգիսն» (51ա). «ցաւդատր վարք» (51ա). «քաջագոյարձայնի» (61բ). «չար անընդուն» (63բ). «մեծային տրտմութիւն» (71ա). «չարժող մեղաւք» (71բ). «չար մաւրեկութիւն» (72ա). «չար հողմովքն» (72բ) ...: Հետաքրքիր է, որ «անձրև», «մեռ», «հողմ» բառերի հետ կապվում են բացասական իմաստ ունեցող մակդիրներ, իսկ «միւսմալայլ գեղեցկութիւն» մակդիրն ստեղծված է միանության հիմունքով:

Խոսքին առանձնակի գեղեցկություն են հաղորդում մարդու կյանքն ու բարոյական ճանապարհը բնութագրող մակդիրները, որոնք բարոյական ուղղվածություն ունեն՝ «Ապառաժոտ զոգիսն», «ցաւդատր վարք», «մաքուր եւ անոյշաճոտ առաքինութիւն», «խաւարային դիմացն», «պարզամիտ անմեղութիւն», իսկ հետևյալ երկուսը՝ «քաղցր խոցումն», «գեղեցիկ վերք», ստեղծված են իմաստային հակադրությամբ:

Զափազանցություններ. Նյուսացին գործածել է նաև չափազանցություններ. աստվածային էությունը քննելիս նա դիմում է այս ոճա-արտահայտչական միջոցին. «Մեծագոյն քան զայս սէր ոչ գոյ իմանալ» (53բ). «Ոչ ի՞նչ լէիցս այնպէս մեծ, որ քո մեծութեամբդ չափիցի» (54բ). «Կատարեալ միայն սա անոյշաճոտ է Աստուծոյ, քան զամենայն արիմացն խունգս» (95ա):

Կրկնություններ. Խոսքի ուղեմիկան է, որն առաջանում է բառերի, առանձին արտահայտությունների և նախադասությունների ամենատարբեր կարգի կրկնություններով:

Նյութագու մեկնության ամենատարածված արտահայտչամիջոցը շաղկապների կրկնությունն է: Նկատելի են «եւ», «կամ», «իբրեւ» շաղկապների, ժխտական «ոչ» մասնիկի կրկնության ամենատարբեր դեպքեր⁴⁴:

«Եւ ի գորտիցն, եւ ի խաարտիցն, եւ ի մարախոյ, եւ ի մծեխէ, եւ ի կարկտէ, եւ ի հրոյ ի վերայ անձրեացելոց, եւ յայլոցն» (57ա)⁴⁵:

«Ոչ» մասնիկի կրկնություն. «Ոչ տեսակ, ոչ դէմք, ոչ կերպարան երեւեալ, ոչ բնութիւն խնդրելոյն» (69բ. տե՛ս նաև 54բ. 73բ):

Միևնույն բառը կրկնվում է նախադասության տարբեր հատվածներում. «Կամաւոր եւ ամենայն հարկաւորութենէ ազատ. ալսպիսի էր Դաւիթ, որ զկամաւորն եւեթ եղելոյ լինքեմէ հաճոյանալ Աստուծոյ աղաւթը եւ կամաւք պարագրեալ խոստամայր» (74ա)⁴⁶:

Մեկնության գեղարվեստական հատվածները. Նյութագիմ խոսքի գեղագիտական ըմբռնում ունեցող հեղինակ է: Եվ մեկնության բնույթը նրան ամենակից չի խանգարել՝ ստեղծելու գեղեցիկ բնապատկերներ: Մեկնության մի շարք մասեր գրված են քնարական ներշնչանքով: «Զի ահա ձմեռն էանց» [Բ.11-13] հատվածը կերտված է զարմամային թարմության և կենսախնդության սպասումներով. «Ի ձմեռանի զուարճացեալքն խամրին, որք ի ծառսն են գեղեցկութիւնք եւ որ տներնովքն է վայելչութիւն ի բաց թաթափի հոտոցն, երկիր սառնու, լոնալ լինի երաժշտական հաւուց նուագերգութիւն, փաղչի ծիծեռառն, ընդարմացեալ լինի ծիծառնակն, աւտարանայ ի բունդն տատրակն, մմանէ ամենայն մահու տխրութեան, մեռանին բողբոջք, մեռանին դալարք իբրեւ ոսկերք ի մարմնոց զատուցեալք, մոյմպէս ոստք ի տներեոց մերկանան, աւելի տեսակ միանգամայն լինի» (72ա):

Աստվածաբանական մեկնություն լինելուց բացի, Նյութագու այս երկը նաև հետաքրքիր մի գրույց է, որով հեղինակի միտքը թափանցում է ոչ միայն հոգու զաղտնարանները, այլև՝ ամենատարբեր երևույթների խորքերը, աստվածաբանական երկասիրությունն ավելի պատկերավոր և ընկալելի դարձնելով: Հուզական լիքքով, հյութեղ լեզվով, միաժամանակ նաև մեկնողական հարուստ նյութ ունենալու հանգամանքներով է պայմանավորված Նյութագու Մեկնության այնքան մեծ ազդեցությունը Երգի հայկական մեկնություններին վրա:

Նյութագու Մեկնության ուսումնասիրությունը կարևորվում է հատկապես հետևյալ պատճառներով.

1. Այն դասվում է համեմատաբար վաղ թարգմանված երկերի շարքին և մեծապես ազդել է Երգի հայ մեկնիչների՝ մասնավորապես Գրիգոր Նարեկացու և Վարդան Արևելցու մեկնություններին վրա, որոնք յուրացրել են հեղինակի և՛ մեկնողական եղանակը. և՛ նրա մեկնության ռեալական առանձնահատկությունները: Ավելից՝ հայ մեկնիչների կիրառած մի շարք խորհրդանշանների մեկնություններ ավելի պարզ են դառնում, երբ նախապես ծանոթ ենք այս մեկնությանը:

⁴⁴ Այս մասին ակնարկել ենք հոսանքիշության, համագոր առնամներ շղթաների մասին խոսելիս:

⁴⁵ «Եւ» շաղկապի կրկնություններ տե՛ս Նիւսացի, Մեկնություն, 93բ, 98բ:

⁴⁶ «Պատեռազմ» բառի կրկնությունները տե՛ս մույն տեղում, 52ա, «Հիմզ» բառի կրկնությունները՝ 80բ-81ա: «Իմաստութիւն» բառի մը՝ 82ա, «Պատկառանք եւ պարկեշտութիւն» կապակցությամբ՝ 85բ:

2. Նյութացու Մեկնությունը «ծրագրային» է Երգի մեկնությունների մեջ. քանի որ այն հսկան պատկերացում է տալիս Աստվածաշնչի մեկնության այլաբանական եղանակի կառուցվածքային յուրահատկությունների մասին: Այդ իմաստով Նյութացու Երգի մեկնության առաջաբանը ճանաչողական արժեք է ստանում: Նյութացու համար այլաբանության կողքին կարևորվում է նաև բառացի մեկնությունը՝ «*նիթական ասացուածք*»-ը, որը ներառում է կենցաղային ու գիտական՝ մարդակազմական, լեզվաբանական ոլորտները. իսկ մեկնիչի բարձրագույն նպատակը դառնում է այլաբանությամբ բացահայտվող «*հոգեւոր տեսություն*»-ը, որի ակունքն արդեն Աստվածաշունչն է: Սուրբ Գիրքը Նյութացու համար նաև ոգեշնչման աղբյուր է, քանի որ շատ փոխաբերություններ, համեմատություններ աստվածաշնչյան ծագում ունեն:

Այս մեկնությունը պատկերացում է տալիս աստվածաբանական երկերի լեզվառնական առանձնահատկությունների մասին, ուստի և հաճախ ավելի ուշ ժամանակի մեկնությունների պատկերավորման միջոցները հասկանալու և պարզաբանելու բանալի է:

Ի վերջո, Երգի՝ Նյութացու մեկնությունը թազմիցս ընդօրինակված և գրական շրջանառության մեջ մտած դավանաբանական արժեք ունեցող երկ է: Նյութացու Երգ Երգոցի մեկնությունը կարելի է համարել ամենամիստիկական մեկնությունը Երգի մեկնությունների շարքում: Այն ուշադրության արժանի է մեզանում քրիստոնեական աշխարհայացքի, ինչպես նաև միստիցիզմի ձևավորման առանձնահատկությունների պարզաբանման համար:

ԳԻՏԱ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ՝ ՆՎԻՐՎԱԾ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԻՆ**

(սեպտեմբերի 8-13, 2003 թ.)

Արևելյան Եկեղեցիների իրավունքը հեղափոխության ընկերակցությունը, որը գործում է 1969 թ. սեպտեմբերից Վիեննայում, հսկայածավալ գործունեություն է ծավալել Քրիստոնեական Արևելքի Եկեղեցիների իրավունքի հեղափոխության բնագավառում: Այսօր ընկերակցության նախագահն է լյուզանդական իրավունքի նշանավոր պետաբան և բնագրագետ, պրոֆ. Մալրոս Տրոյանոսը: Ընկերակցության ղեկավար մարմնում մեկ փասնամյակից ավելի ընդգրկված է նաև Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պապի Ս. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը: Այս հաստատության անդամներն են իրավագետներ, կանոնագետներ, ծիսագետներ, Եկեղեցու պատմաբաններ, որոնք իրենց հեղափոխությունների կենտրոնում են պահում Արևելյան Եկեղեցիների կանոնադրությունը:

Ընկերակցությունը երկու փարին մեկ անգամ Արևելյան Եկեղեցու կանոնադրության հետ առնչվող հարցերի շուրջ կոնֆերանս է հրավիրում որևէ երկրում, ուր քննվում են գիտնականներին և Արևելյան Եկեղեցիներին և վերջիններիս պատմության հեղափոխություններին մտահոգող առավել կարևոր համարվող հարցերը: Այս փարի ընկերակցության ԺՎ Կոնֆերանսը փնդի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջնակեցական հարաբերությունների բաժնի հետ համալսելով՝ Ճաշկանդում (Կեչառիս) ու Դիլիջանում, և նվիրվեց Կովկասյան Եկեղեցիներին, նրանց իրավունքին: Ընկերակցության անդամներից կոնֆերանսին ժամանել էր ընկերակցության 35 անդամ, նաև Հայաստանից ու այլևայլ երկրներից մասնագետներ, որոնք հանդես եկան համապատասխան զեկուցումներով:

Ճաշկանդի գիտաժողովը բացվեց սեպտեմբերի 8-ի երեկոյան, Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում փրված գոհաբանական աղոթքով: Բացման խոսքով ներկաներին դիմեց ընկերակցության նախագահ, պրոֆ. Ս. Տրոյանոսը: Օրինության խոսք ասաց Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով կրոնական ոլորտում իրավական սկզբունքների հիմնադրություններին՝ խոհեմ և դավանանքի ազատության, կրոնների միջև հանդուրժողականության, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերման խնդիրներին շեշտելով. «Այլադավանի հանդեպ հանդուրժողականությունը հասարակական նորմ չպիտի դարձնի ուխտադրությունն ու դավանափոխությունը»: Ներածական խոսք ասաց Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Գիտաժողովում քննարկվեցին փոխաբերվող հարցեր: Նիսիների նախագահներն էին լուսաբանվող խնդիրների մասնագետներ, ընկերակցության անդամներ, Արևելյան քրիստո-

նեության պարմության և կանոնագիտության հանրաճանաչ մասնագետներ՝ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, պրոֆեսորներ Հուրեհր Կառլֆիլդը (Գերմանիա), Կոնստանդինոս Պիցակիսը, Ռիչարդ Պոպը, Վարգեզ Կուլթաթան, Ժորժ Նեղոնգապը և Ռադիու Պոեդան: Հարց ու պատասխանների ժամանակ եռանդուն մասնակցություն բերեց Կովկասում Վարդիկանի դեպյան և պապական նվիրակ արքեպս. Կլաուդիո Գուցերուտին:

Նապաշրջանի առաջին նիստը նվիրված էր Այսրկովկասյան Եկեղեցիների քրիստոնեացման և ենագույն պարմության սկզբնաղբյուրներին, ուր առաջին զեկուցումն ընթերցեց պրոֆ. Միշել վան Էսթրոկը: Բելգիացի գիտնականն իր զեկուցման մեջ անդրադարձավ Հայաստանում և Վրաստանում քրիստոնեության ընդունման հնագույն սկզբնաղբյուրներին՝ Ազաթանգեղոսի պարմությանն ու Վրաց դարձի պարմությանը, թվագրեց Հայոց պարմության վաղ շրջանի մի շարք իրադարձություններ (օր.՝ «Կանոնագիրը Հայոցից» հայտնի Նեոկեսարիայի ժողովը 314-319 թթ. միջև՝ ենթադրելով, որ այս ժողովը կարող էր հրավիրված լինել Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության առիթով): Հեղինակը Դ դարի առաջին կիսամյակով է թվագրում նաև վրացիների և աղվանների դարձը, համեմատում է վրաց թագավոր Միրիանին և Հայոց թագավոր Տրդատին, անդրադառնում է աղվան քրիստոնյաներից միակ պահպանված ձեռագրին՝ Սինայի Ս. Կապարիեն վանքում գտնված կրկնագրին:

Հայոց եկեղեցական կանոնների առաջին ժողովածուների կազմման ու խմբագրության պարմությանն էր նվիրված պ.գ.դ. Ա. Բոգդյանի զեկուցումը, որի ընթացքում կարևորվեց Շահապիվանի ժողովի (444 թ.) կանոնախմբի նշանակությունը, նրանում հավաստված վկայություններով հաստատելով այն կարծիքը, որ ժողովական հայրերի ձեռքին եղել է Հայոց Կանոնագրի նախնական խմբագրություններից մեկը: Մինչև Հովհան Օձնեցու (կթղ. 717-728 թթ.) կողմից «Կանոնագիրը Հայոց»-ի բնագրի վերջնական խմբագրումը, հիշատակվեց, որ հայագիտության մեջ խոսվում է այդ բնագրի խմբագրման ևս երկու փորձի մասին: Հեղինակը մասնակիցների ուշադրությունը հրավիրելով «Կանոնագիրը Հայոց»-ում տեղ գրած 24 կանոնախմբերի ժողովածուի վրա, փորձեց անդրադառնալ նաև Հայաստանում արմարներ ձգած «Կանոնագիրը Հայոց»-ի հետ գուցահեռաբար զարգացող բյուզանդական կանոնագրերին, առանց որոնց պարմության իմացության անհնարին է կատարյալ պարկեռացում կազմել կանոնական ժողովածուների զարգացման նախնական փուլերի մասին: Այս նույն մտաբեկությամբ կոչ արվեց նաև համեմատական նյութեր փնտրել ասորի հակերիկ, Մարոնիսի և Մելիկի Եկեղեցիների մարտնագրությունների մեջ:

Հայոց Եկեղեցում կանոնական հետազոտությունների և եկեղեցական իրավունքի զարգացման հարցերին էր նվիրված գիտաժողովի ինքուրդ նիստը: Այստեղ «Հայ Առաքելական Եկեղեցու իրավունքի զարգացումը ԺԹ-Ի դարերում» վերնագրով զեկուցում կարդաց Տ. Եզնիկ եպս. Պեպրոսյանը: Սրբազանի աշխատանքը նվիրված էր նշված ժամանակաշրջանում Հայ Եկեղեցու գործունեությունը կարգավորող հիմնական օրենքներին, Օսմանյան կայսրության մեջ գործող Ազգային սահմանադրությանը և Ռուսական կայսրության ներսում Հայ Եկեղեցու իրավական փնտրել կարգավորող Պոլոժենիին: Հեղինակը նաև անդրադարձավ եկեղեցական իրավունքի տեսանկյունից կարևոր ժողովներին և հետազոտություններին:

Հայ-Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Յորգե Յիզեքիմյանը ներկայացրեց «Իրավունքի զարգացումը Հայ-Կաթողիկե Եկեղեցում ԺԹ-ի դարերում» գեկուցումը: Խոսելով Կաթողիկե Եկեղեցում գործածության մեջ դրված «Արևելյան Եկեղեցիների կանոնագրքին», գեկուցողն անդրադարձավ 1929-1990 թթ. այդ գործի ստեղծմանը հայ-կաթողիկե հոգևորականների (հ. Կարապետ Ամատունի, հ. Վարդան Թևեյան, հ. Ներսես Սեթյան և այլք) մասնակցությունը օգտագործված սկզբնաղբյուրներին:

Մեծ հետաքրքրությամբ լսվեցին նաև Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կրոնական հարցերով խորհրդականների ելույթները: Ռազմիկ Մարկոսյանն ու Թամազ Պապուրաշվիլին ամենայն խորությամբ փորձեցին ներկայացնել երկու երկրներից յուրաքանչյուրում պետության և կրոնական համայնքների միջև ծագող խնդիրները, պետության և Եկեղեցու փոխհարաբերություններին վերաբերող հարցերը:

Գիտաժողովների նիստերից մեկը նվիրված էր «Օրենքի և համապատասխան կանոնների հակասությանը»: Այս բաժնում հետաքրքրաշարժ գեկուցումով հանդես եկավ Հայ Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը (տե՛ս էջ 63-80): Ընկերակցության հիմնադիր անդամ, պրոֆ. Կառլ Գերտլ Զյուրստի ելույթը նվիրված էր «Օրենքի և համապատասխան կանոնի հակասությունը Կաթողիկ Եկեղեցու տեսանկյունից» թեմային, ուր հեղինակն անդրադարձավ Կաթողիկ Եկեղեցու կանոնագրքի իրավական մի շարք ասպեկտներին:

Կոնֆերանսում հանդես եկավ նաև քյուզանդական իրավունքի սկզբնաղբյուրների և Օրթոդոքս Եկեղեցու կանոնական իրավունքի բնագրագետ և տեսաբան, պրոֆ. Ս. Տրոյանսը, որի գեկուցումը վերնագրված էր «Օրենքի և համապատասխան կանոնի հակասությունը Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների ընտանիքում և իրավունքի ձևափոխման մասնավոր հարցը Էկումենիկ երկխոսությունում»: Զեկուցման մեջ, ի լրումն մի շարք իրավականական նկատառումների, հեղինակն անդրադարձավ նաև Եկեղեցի և պետական փոխհարաբերության թեմի ամբողջականության հարցերին:

Գիտաժողովի ընթացքում լսվեցին մի շարք գիտական ծրագրերի կատարման ընթացքին նվիրված հաղորդումներ: Կանոնական իրավունքին վերաբերող իրենց ծրագրերը ներկայացրեցին Պաբլո Գեֆանյը («CIC - CCEO-ի ծանոթագրված ժողովածուն»), Իուան Մարտինիանը («Օրենքի և CCEO-ի հակասությունը հունական կաթողիկոսական Եկեղեցում»), Իննա Նալետովան («Տեսության գործունեության նոր ձևերը ժամանակակից Ռուս Օրթոդոքս Եկեղեցում») և Պոլ Ալլը («Վերագրությունը և անհրաժեշտությունը կարճ դարավարության»): Իրար լրացնող երկուական մեծ թեմաներ ներկայացրեցին Թոմաս Նեմեթը, Ռիչարդ Պոպը և Եվա Սյունկը (1. «Ավստրիական կայսրության ուղղափառ կանոնագրքներն ու քաղաքագրությունը», 2. «Օրենքը և կրոնը Միջին և Արևելյան Եվրոպայում») և Սպիրոս Տրոյանսը (1. «Արիստոտելի նոր հրապարակությունը», 2. «Մեկնված քրեական դատաստանագրքեր»):

Կոնֆերանսի նիստերից մեկը նվիրվեց ընկերակցության նախագահ Սպիրոս Տրոյանոսի գործունեության գիտաբանական հաշվետվությանը: Զննարկումներից հետո տեղի ունեցավ ընկերակցության Կենտրոնական խորհրդի վերընտրությունը:

Կոնֆերանսի կազմակերպման հարցերը սիրով իրենց վրա էին վերցրել Մայր Աթոռի Միջնեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Ս. Եզնիկ եպս. Պնփրոսյանը և Ընկերակցության քարտուղար Եվա Սյուննկը, որոնք մեծ ոգևորությամբ ավարտին հասցրեցին բավականին ընդգրկուն այս գիտաժողովը: Ցավով պիտի արձանագրել, որ ներքոհիշյալ գեկուցողների բացակայության պատճառով տեղի չունեցան Մոսկվայի համալսարանի պրոֆ. Սերգեյ Կարպովի «Ռոնպոսի Ուղղափառ Եկեղեցին (Բյուզանդիան և Տրապիզոնի կայսրությունը)», դր. Վասիլի Կոբախիձեի «Կանոնական իրավունքի զարգացումը Վրաց Օրթոդոքս Եկեղեցում» և օրթոդոքս Ատրինների Հալեպի եպիսկոպոս Ս. Մար Գրիգորիուսի «Իրավունքի ձևավորությունը Էկումենիկ երկխոսության մեջ Մերձավոր-արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների և Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների միջև. Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների նկատառումները» գեկուցումները:

Հուսանք, որ կոնֆերանսի նյութերը կհրապարակվեն առանձին հավորով: Ընկերակցության հաջորդ գիտաժողովը ծրագրվեց անցկացնել Իտալիայում և այն նվիրել Եկեղեցու և նրա թեմերի կանոնական սահմաններին վերաբերող փարբեր տեսակետների ըննարկմանը, մի խնդիր, որը հուզում է Օրթոդոքս Եկեղեցու ինքնագլուխ (Ավտոկեֆալ) Աթոռներին և հաճախ ռախումնային իրավիճակների պատճառ դառնում նրանց միջև:

ԱԶՍՏ ԲՈԶՈՑԱՆՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 1700-ԱՄՅԱԿՆ

(12-13 սեպտեմբերի, Ս. Էջմիածին)

*«Մուրը Էջմիածինը Երկնավորի
բացառիկ պարզեն է մեր ժողովրդին»:*
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Սեպտեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սկսվեց «Անցյալի ժառանգությունը, այսօրվա առաքելությունը և վաղվա հույսերը» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակին:

Դեռևս այս փարվա սկզբին Հայրապետական սրբապատե կոնդակով Նորին Սրբությունը 2003 թվականը հռչակեց Ս. Էջմիածնի փարի: Այս գիտաժողովը հորեկանական միջոցառումներից մեկն է, որի նպատակն է ներկայացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի կյանքում, նրա բերած նպաստը համաքրիստոնեական պատմությանն ու մշակութային, ինչպես նաև անդրադառնալ Հայ Եկեղեցու ներկայի և գալիքի առաքելությանը:

Տ. Ներսիս արքեպս. Պողապալյանի բացման խոսքից հետո գիտաժողովի մասնակիցներին իր օրհնության խոսքը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գեաեաքանքը հայտնելով գիտաժողովի կազմակերպիչներին (տև՛ն էջ 11):

Երկօրյա այս գիտաժողովի առաջին օրվա նիստերն անցան «Անցյալի ժառանգությունը» խորագրի ներքո, և ընթերցված գեկուցումները նվիրված էին 1700-ամյա այս սրբավայրի պատմությանը և հայ ժողովրդի կյանքում ունեցած բացառիկ դերին:

Ս. Էջմիածնի անցած պատմական ուղին համապատասխան շրջանաբաժանմամբ ներկայացրեց ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հայոց պատմության հուղվություն» գեկուցման մեջ:

Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման նախադրյալներին, չորրորդ դարում Եկեղեցի-պետություն հարաբերություններին և Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգի ձևավորմանն էր նվիրված պատմական գիտությունների դեկտոր Վրեժ Վարդանյանի «Ս. Էջմիածինը և Հայոց Եկեղեցին Դ դարում» գեկուցումը: Մայր Տաճարի սկզբնական հորինվածքի և ապա դարերի ընթացքում ձևավորված բազմաշերտ կառուցվածքին անդրադարձավ արվեստագիտության դեկտոր Մուրադ Հասրաթյանը «Մայր Տաճարի ճարտարապետական հորինվածքը» գեկուցումում:

Սկսյալ Ազաթանգեղոսի պատմությունից, թե ինչ ստեղծագործություններ են նվիրվել Ս. Էջմիածնին V-XVIII դարերում և այդ գործերում ինչպես է այն աստիճանաբար որպես գրական ուրույն կերպար իր համապատասխան արտահայտչամիջոցներով ու պատկերավորմամբ դարձել հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը, մարեննագրական մի շարք վկայու-

թյուններով ցույց տվեց բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դևրիկյանը «Մ. Էջմիածնի գրական կերպավորումը հայ մատենագրությունում» զեկուցումում:

Օբսֆորդի համալսարանի պրոֆեսոր Սեբաստիան Բրոկը «Էջմիածին. Անճառելի նկարագրությունը Մ. Գրիգոր Լուսավորչի վարդապետության մեջ և ասորական ավանդույթում» զեկուցմամբ անդրադարձավ Ագաթանգեղոսի «Հայոց Պատմության» աստվածաբանական այն ըմբռումներին ու բնորոշումներին, որոնք իրենց գուգահեռն ունեն IV-V դարերի ասորական գրականությունում:

Մեսրոպ աղբյակսկոպոս Աջնյանը «Էջմիածինը օտարների աչքերով» զեկուցումում ներկայացրեց Հայաստանով անցած եվրոպացի ճանապարհորդների և դիվանագետների ուղեգրությունների՝ Մ. Էջմիածնին նվիրված հաղվածները:

Հռոմի պրոֆեսոր Ռոբերտ Թաֆթի «Պաշտամունքը Սուրբ Էջմիածնում. Հայկական Մ. Պատարագի զարգացումն ինչպես է արվացովել հեթանոսությունից նկարագրական և եզրավակիչ ծեսերում» զեկուցումը նվիրված էր Մ. Պատարագի Հաղորդության ծեսի մի շարք արարողությունների պատմական զարգացման ընթացքին:

Տյուբինգենի համալսարանի (Գերմանիա) պրոֆեսոր Գաբրիել Վինկլերի «Էջմիածին. որոշ նշումներ նրա նշանավոր գիտնականների և մի քանի մշակումներ Էջմիածին անվանման և նրա հետ կապված տերմինների մասին» զեկուցման առաջին մասը նվիրված էր Մ. Էջմիածնի այն միաբաններին, ովքեր XIX դարի վերջին ուսանել են Գերմանիայում: Զեկուցման երկրորդ մասում աստվածաբանական և կառուցվածքային լեզվաբանության տեսանկյունից ընկնեցին Միածնի իջմանը վերաբերող այն հասկացությունները, որոնք հարաբերվում են «Էջմիածին» անվանման հետ:

Ավստրիացի գիտնական Ժամյն Դոմ-Տրագուրը «Էջմիածին անվանման պատմալեզվական ընթացությունը» զեկուցման մեջ անդրադարձավ Էջմիածին տեղանվան մատենագրական հիշարարություններին, թե ինչ բնորոշում և ընկալում է ունեցել այն վաղ շրջանի մեր մատենագրությունում, ապա կատարեց բառակազմական համապատասխան ընթացություն համեմատական լեզվաբանության տեսանկյունից:

Հայոց Եկեղեցու վաղ շրջանի ավանդությունները՝ Տիրամոր անձնագործ պատկերից մինչև Գրիգոր Լուսավորչի տեսիլը՝ «Մ. Աստվածածնից դեպի Մ. Էջմիածին. սրբավայրի աստվածաբանությունը» թեմայով զեկուցման նյութ էր դարձրել ամերիկահայ պրոֆեսոր Աբրահամ Տերյանը:

Գիտաժողովի երկրորդ օրվա զեկուցումները նվիրված էին Մ. Էջմիածնի այսօրվա առաքելությանը և հետագայի գործունեությանը: Ըստ այդմ օրվա երկու նիստերը կրում էին «Ներկայի առաքելությունը» և «Ապագայի հույսը» խորագրերը:

Առաջին նիստի առաջին՝ «Մ. Էջմիածնի ներկայությունը Սփյուռքի թեմերում» զեկուցմամբ Սփյուռքում հայ ժողովրդի ազգային-եղևոր ինքնության պահպանման գործում Մ. Էջմիածնին վերապահված առաքելությանն անդրադարձավ Եգիպտահայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանը: Համանման ձևով «Մ. Էջմիածնի առաքելությունն այսօր Հայաստանում և Արցախում» թեմայով զեկուցում կարդաց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:



ՄԱՐ ՏԱՏԱՐԻ 1700-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՔՈՒՄ



ՄԱՍՏՐԱԽԱՆԵ ԿԻՍՆԻՔԱՐՑԿԵ ՂԱԵՍԵՇԻԿՆԻՈՑ



Վենետիկի համալսարանի դասախոս, դոկտոր Ն. Լևոն Զեքիյանի «Ս. Էջմիածինը և քրիստոնյա հարանվանությունները, Ընդհանրական Եկեղեցու և մասնավոր (տեղային) Եկեղեցիների տրամասնության յուրահատուկ մի բնորոշ քրիստոնեական տիեզերականության մեջ» թեմայով զեկուցումը նվիրված էր Ս. Էջմիածնի և քույր Եկեղեցիների փոխհարաբերությանը, ինչպես նաև հայ հարանվանությունների կյանքում ունեցած դերին և նշակությանը:

Ոչ պարերազմական պայմաններում բանակում Եկեղեցու ունեցած դերին և առաքելության անդրադարձավ ՀՀ Զինված ուժերի հոգևոր խորհրդատու Ս. Արշեն արքեպիսկոպոս Մանույանը «Հոգևոր ծառայությունը բանակում որպես քրիստոնեական խաղաղության տարածման միջոց» թեմայով զեկուցումում:

«Ընկերային ծառայության ժամանակակից կոնցեպցիան և Եկեղեցին հեղինակություն հայաստանում» իր զեկուցումը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կոորդինատոր Սեդանի գրասենյակի Տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը նվիրել էր Հայաստանում Մայր Աթոռ ծավալած սոցիալական և բարեսիրական գործունեությանը, ինչպես նաև հոգևոր-եկեղեցական այն հիմնադրույթներին, որոնց վրա պիտի է խարսխված լինի այն:

Այսօրվա երիտասարդության կյանքում Ս. Էջմիածնի ներկայությանը և երիտասարդության հոգևոր հիմնախնդիրներին էր նվիրված Հայոց Եկեղեցու երիտասարդաց կազմակերպության անդամներից Նոյեմի Անդրեասյանի «Հայ երիտասարդության սպասելիքները Հայոց Եկեղեցուց» զեկուցումը:

Զեկուցումների այս շարքը եզրափակվեց Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի «Ս. Էջմիածնի դերը հաջորդ հարյուրամյակում» բովանդակալից տեսական վերլուծությամբ:

Գիտաժողովի ավարտին մասնակիցներին իր գնահատանքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը և մեծապես կարևորելով նման գիտաժողովների կազմակերպումը:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ
«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌՄԱՆԿԱՐՆԵՐԸ» ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ
 (Երևան, 15-20 սեպտեմբերի 2003 թ.)

Վերջին տարիներին հայագիտական այսքան բազմամարդ և բազմաբովանդակ գիտա-
 ժողով չէր եղել: Պետության հովանավորությունը վայելող միջազգային համաժողովին ի-
 րենց մասնակցությունն էին բերել Հայաստանի և արտասահմանի բազմաթիվ գիտնական-
 ներ: Ծրագրում ներառված էր շուրջ 190 զեկուցում, որոնցից ավելի քան մեկ երրորդն ար-
 տասահմանյան հայագետների ներկայացրածն էր: ՀՀ Գիտությունների Ազգային Ակադե-
 միայի և Երևանի Պետական Համալսարանի ջանքերով գումարված հայագիտական հա-
 մաժողովը կազմակերպվել էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ռու-
 սաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի, Երևանի Պետական Համալ-
 սարանի բարեկամների միության, «Ջորջ Իզմարիոս» հիմնադրամի և Գիտության և առա-
 ջադար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հովանավորությամբ:

Զեկուցումները բաժանվել էին չորս մասնաճյուղերի (պատմություն, բանասիրություն,
 մշակույթ, Եկեղեցի), որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր առանձին հանձնախումբ՝
 բաղկացած փվյալ գիտաճյուղը ներկայացնող գիտնականներից: Նրանց խնդիրն էր՝ հա-
 մակարգել զեկուցումները և նախապատրաստել մասնաճյուղերի նիստերն ու հետևյալ կյոր
 սնդակները:

ա. Հայաստանը տարածաշրջանային զարգացումների համակարգում,

բ. Հայկական ինքնության խնդիրը և հայապահպան գործունեությունը Միլյուոքում,

գ. Կրթության հիմնախնդիրը Միլյուոքում և Հայաստանում:

Գիտաժողովի ընդգրկումն աննախընթաց էր: Այստեղ զեկուցումներ էին ներկայացված
 հայագիտության գրեթե բոլոր բնագավառներից և մեր ժողովրդի բազմադարյան պատմու-
 թյան բոլոր ժամանակահատվածներից: Ներկայացված զեկուցումների մեծաթվությունը,
 երբեմն էլ վերնագրերի անորոշությունն առանձին դեպքերում թույլ չեն տվել մասնաճյուղե-
 րի ղեկավարներին ճիշտ որոշել զեկուցման պատկանելությունը հայագիտության այս կամ
 այն բնագավառին և հաճախ բանասիրությանը վերաբերող զեկուցումը հայտնվել է պատ-
 մության (օր.՝ Մայա Ռափավայի, Զազա Ալեքսիձեի, Գևորգ Տեր-Վարդանյանի, Գաբրիելա
 Ուլունդյանի, Միշել Վան Հաբրուկի, Աննա Շիրինյանի), փիլիսոփայության ու Եկեղեցու
 բաժիններում, կամ էլ՝ ընդհակառակը, վերջիններին վերաբերող նյութերը տեղ են գտել
 մյուս մասնաճյուղերում: Նիստերը միաժամանակ տեղի էին ունենում ՀՀ Գիտությունների
 Ազգային Ակադեմիայի, Երևանի Պետական Համալսարանի և Մաշտոցի անվան Մատեն-
 ադարանի նիստերի դահլիճներում, որոնց հեռավորությունը հաճախ խոչընդոտ էր դառ-
 նում և թույլ չէր տալիս մասնագետներին լսելու իրենց հետաքրքրող բոլոր զեկուցումները:

Համաժողովը բացվեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆ. Սարգսյանի ողջույնի և Ամենայն Հայոց
 Կաթողիկոս Գաբրելին Բ-ի օրհնության խոսքերով և ՀՀ նախագահ Ռ. Ջեյրարյանի, ինչպես
 նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հղած ուղերձներով: Ողջույնի խոսք

առաջ և Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Տեղի ունեցավ երկու լիազորմար նիստ, որոնցից առաջինում զեկուցումներով հանդես եկան Վլադիմիր Բարխուդարյանն ու Ռիչարդ Հովհաննիսյանը, իսկ վերջինում՝ մասնաճյուղերի և կյոթ սեղանների ղեկավարները ներկայացրեցին հնգօրյա քննարկումների արդյունքները:

Պատմության մասնաճյուղն ամենաընդգրկունն էր. քանի որ բաղկացած էր բուն պատմության և նրան հարող օժանդակ գիտությունների վերաբերող մի քանի ենթամասնաճյուղերից (Սեպագիր քաղաքակրթությունների, Հնագիտության, Ազգագրության և սոցիալական հարցերի, Ժողովրդագրության, Աղբյուրագիտության): Այս մասնաճյուղում Եկեղեցու պատմական դերին ամենվող զեկուցումներից կարելի է առանձնացնել ակադ. Հր. Բարթիկյանի («Հայագիտության-բյուզանդագիտության փոխադարձ առնչություններ»), Հարություն վրդ. Պարիկյանի («Մխիթարյան միաբանության ներդրումը հայագիտական մարզին մեջ»), Վ. Դիլոյանի («Աիմնոն Կաթողիկոս Երևանցու տեղը և դերը հայ քաղաքական մտքի պատմության մեջ»), Ի. Օժեի («Կաթողիկոս Ներսես Շնորհալու (կթդ. 1166-1173 թթ.) նամակագրությունը հույների հետ»), Ֆ. Բաբայանի («Ռոչիի Ս. Սարգիս վանքի պեղումները»), Ռ. Վարդանյանի («Հայոց տոմարական տոնացուցային եղանակները և հայ էին մատենագրության էիմանահարցերը»), Վ. Գրիգորյանի («Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի գիտական արժեքը և նրանց ուսումնասիրման հետաքննարկումները»), Միշել Վան Էսբրոնի («Սահակ Չորափորեցի և Սահակ Մոռթ») զեկուցումները:

Բանասիրության մասնաճյուղի նիստերն ամբողջացան լեզվի և գրականության ենթամասնաճյուղերի աշխատանքով: Այստեղ լաված զեկուցումներից կարելի է առանձնացնել Զ. Գրեյսինի («Նոր հայտնաբերված «Բառք Գաղիանոսի»»), Ն. Կաստիլյոյի («Գրիգոր Նազիանզացու աշխատությունների անանուն հայերեն թարգմանության բնութագրումը»), Հր. Թամրազյանի («Նարեկագիտություն. վիճակը և խնդիրները»), Ա. Օրենգոյի («Դյոմեդիի նոստա համակարգը և հայ մշակույթը»), Զ. Տեր-Ղափյանի (««Բանք իմաստասիրաց» ժողովածուները հայ միջնադարյան գրականության մեջ»), Թ. Վան Լինսի («Պոեզիան և ինքնությունը. Գրիգորիս Աղթամարցու օրինակը»), Վ. Ներսիսյանի («Հայ միջնադարյան բնարերգության տիպարանական հատկանիշները»), Վ. Կալցոյարիի («Հայ քրիստոնյաների պարականոն գրականությունը») զեկուցումները:

Մշակույթի մասնաճյուղի նիստերն ամբողջացան փիլիսոփայության և արվեստագիտության ենթամասնաճյուղերի աշխատանքով: Այստեղ լաված զեկուցումներից Եկեղեցու թեմատիկային մոտ էին Հ. Բուշաուգենի («Ավետարանական բաժանումների համակարգի բնությունը Ժ դարի հայկական Ավետարաններում»), Ա. Ղազարյանի («Է-ԺՂ դարերի հայկական և վրացական եկեղեցիների արտաքին կամարաշարը»), Ա. Արևշատյանի («Վկայաբանություն և շարականագրություն»), Ա. Բաղդասարյանի («Շարականների կերպարային բովանդակության մասին»), Հ. Պետրոսյանի («Մաչի գաղափարաբանությունն ու պատմությունը վաղքրիստոնեական Հայաստանում»), Ա. Տեր-Մինասյանի («Վաղմիջնադարյան Հայաստանի կենտրոնագմբեթ եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների ձևավորումը»), Մ. Բաջջի («Հայ ուխտավորը Իտալիայում. Լուկկայի Ս. Դավիթոսի պաշտամունքն ու պատկերագրությունը»), Դ. Զերթմենյանի («Մշակութային փոխազդեցությունները հայկական եկեղեցաշինության մեջ») զեկուցումները:

Համաժողովի մասնաճյուղերից մեկն անվանված էր «Հայոց Եկեղեցին և հայագիտությունը»: Ըստ Ծրագրի այսպեղ ներառված էր 20 զեկուցում, որոնցից 18-ն ընթերցվեցին: Զեկուցումները վերաբերում էին Հայոց Եկեղեցու պատմությանը, ստեղծած մշակութային արժեքներին, Ծխական գրքերին ու Վարդապետությանը:

Հայոց Եկեղեցու պատմության հարցերը ըննարկվեցին Էմմա Կոստանդյանի («Մաղաքիա Օրմանյանի պատմագիտական հայացքները»), Ազատ Բոգոյանի («Հայոց Եկեղեցու պատմության հեղափոխության խնդիրների շուրջ (վավերագիտական ցանկեր)»), Իրինա Գայուկի («Հայոց Եկեղեցու ձեավորման հիմնական բնութագրերը»), Մաքսիմ Եվադյանի («Հայաստանի քրիստոնեացումը. վերադարձ դեպի աղբյուրները»), Նինո Ապցիաուրիի («Վրացիների դարձի խնդիրները հայկական «Ցայամատուրե»-ի «Ս. Նինոյի վարքի» խմբագրություններում») զեկուցումների մեջ: Վերջին երկու զեկուցումների հեղինակներն աղբյուրագիտական լայն հենքի վրա փորձում էին դասակարգել Հայաստանի և Վրաստանի դարձի մասին պատմող բազմալեզու սկզբնաղբյուրները և խնդիր դնում պատմագրության առջև՝ վերանայել որոշ ավանդական պատկերացումներ:

Իրինա Գայուկն իր նյութում նախարկ էր դրել ներկայացնել Հայոց ինքնուրույն Եկեղեցու ձևավորման գործընթացը և ցույց տալ վերջինիս դերը Ուկրաինայում՝ մինչև Կաթոլիկ Եկեղեցու հետ միաձուլումը: Էմմա Կոստանդյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայ պատմագրության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Մաղաքիա Պապրիարք Օրմանյանի բազմալեզու գիտական վաստակին և հեղինակի պատմագրական վաստակի գլուխգործոց հանդիսացող «Ազգապատում» աշխատության մեջ արձարծված մի շարք ազգային-եկեղեցական հիմնաեարքերի: Հայոց Եկեղեցու վաղ շրջանի պատմության սկզբնաղբյուրներից մեկի՝ վավերագրերի ամբողջական ցանկերի ստեղծման և գիտական նկարագրության հարցերին էր նվիրել իր զեկուցումը Ա. Բոգոյանը:

Մշակույթին բերած Եկեղեցու ավանդի մասին խոսեցին Զավեն արքեպս. Չինչինյանը («Մխիթար Սեբաստացու կյանքն ու գործունեությունը»), Աբրահամ Տերյանը («Հայագիտություն առանց աստվածաբանության. վաղ հայկական իմաստասիրության խնդիրները»), Աշոտ Ստեփանյանը («Հայոց աշխարհն ու համաշխարհային սրբությունները (Աստվածամոր առաջին պատկերագրման ետքի շուրջ)»), Վարդան Դևրիկյանը («Սուրբ Էջմիածնի պատկերագրությունը»):

Զավեն Սրբազանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձավ Մխիթար Սեբաստացու և Նրա հիմնած միաբանության մշակութային վաստակին, ցույց տվեց Ս. Ղազարի միաբանների դերը Նոր շրջանի հայագիտության ձևավորման գործում: Ա. Տերյանն էլ իր ելույթը նվիրել էր միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի կազմավորման գործում Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի խաղացած դերին: Վ. Դևրիկյանն անդրադարձավ Ս. Էջմիածնի գեղարվեստական ընկալմանը միջնադարյան պատմական ու գեղարվեստական սկզբնաղբյուրներում:

Ծխագիտական խնդիրների և արարողական գրքերի հեղափոխությանն էին իրենց զեկուցումները նվիրել Արմենուհի Դրոստ-Աբգարյանը («Հայկական Ծարակնոցում Աստվածահայրության կանոնները»), Գաբրիել Վինկլերը («Անարկ հայկական Պապարագամատուցի պատմական ձևավորման ընթացքի»), Զրիստիան Հաննիկը («Հայ ծխական հիմնեղության փիլաբանությունը և դրա բյուզանդական առնչությունները»), Լուսիկ Ստեփանյանը («Սուրբ Թեոդոր արևելաքրիստոնեական Եկեղեցու սրբուհիների նախադի-

պար»), Կոդ Կոքսը («Բիբլիական ուսումնասիրությունները և հայկական Աստվածաշունչը»):

Առաջին երկու գեկուցումները նվիրված էին միջնադարում Հայոց Եկեղեցու երկու կարևորագույն արարողական գրքերի՝ Շարակնոցի և Պատարագամատույցի կանոնակա-նացման ու մեքորյա հեքագոությունյան խնդիրներին: Զ. Նաննիկն իր ելույթը նվիրել էր բյուզանդա-հայկական ծիսական հիմներգության համեմատության հիմնախնդիրներին: Կ. Կոքսը իր գեկուցման մեջ ի մի բերեց Աստվածաշնչի հրապարակման գործում վերջին փա-րիներին կապարված բնագրագիտական հեքագոությունները և խոսեց այդ կարևորագույն երկի լիակատար գիտական բնագրի կազմման հեռանկարների մասին:

Եկեղեցու վարդապետության հարցերը շոշափվեցին Արթուր Մաթևոսյանի («Նիկիո հանգանակը որպես հայ միջնադարյան աշխարհայացքի անկյունաքար»), Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի («Քաղկեդոնի ժողովը. պատմությունը, քրիստոսաբանական վեճերը և համաձայնության եզրերը»), Աբել քհն. Մանուկյանի («Ս. Թովմա Աքվինացու «Ընդդեմ Հայոց» թուղթը») գեկուցումներում: Մեսրոպ Սրբազանն իր ելույթում համակողմանիորեն ներկայացրեց Քաղկեդոնի ժողովի փեղը քրիստոսաբանական վեճերում և, անդրադառնալով Կաթողիկ, Ուղղափառ և Արևելյան Եկեղեցիների մեքորյա էկումենիկ երկխոսություններին, արտահայտեց հեքելյալ միտքը. «Եկեղեցիների մեջ համաձայնության հիմքը կկազմի այն նոր մտածումը կամ սկզբունքը՝ որ միևնույն ճշմարտությունը կարելի էր արտահայտել ոչ թե միակ բանաձևի մեջ, այլ մի քանի փարբեր բանաձևերով»:


Ա. Մաթևոսյանն իր ելույթում առանձնացրեց Նիկիայի ժողովի Հավատամքում ամրագրված միջնադարյան քրիստոնեության աշխարհաբանման չորս հիմնադրույթներն (Աստվածակենտրոնություն, Արարչապաշարություն, Անձնապաշարություն, Հայրնութնապաշարություն) և ցույց տվեց դրանց փեղը հայ միջնադարյան գաղափարախոսության համակարգում: Աբել քահանան իր գեկուցման մեջ ունկնդիրներին ծանոթացրեց Թովմա Աքվինացու «De rationibus fidei» (1264 թ.) աշխատության մեջ պահպանված «Ընդդեմ Հայոց» թղթում արծարծված հարցերին և մեկնեց. «...հոգիներու փրկութեան վերաբերեալ երկու Եկեղեցիներու իրարից փարբերող ուղղութիւնները»:

Հայոց Եկեղեցու մեքորյա հրապալ խնդիրներից մեկի շուրջն էր Գարեգին արդ. Հարությունյանի գեկուցումը, որը վերնագրված էր «Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցու կողմից իրագործվող երիտասարդության հոգեխնամության արդի հարացույցը և ապագայի հեռանկարները»: Գարեգին արեղան իր առջև խնդիր էր դրել՝ պարզել «երեսխաներին ու պատանիներին՝ լիարժեք կերպով կյանք մտնելու և չափաճատության մեջ առանց բարդությունների ինքնեզրվելու» խնդիրները, որոնք կարևորվում են Հայոց եկեղեցական դաս-տիարակության փեսանկյունից:

Համաժողովն ամփոփող նիստում որոշվեց հրապարակել ընթերցված գեկուցումները: Հուսանք, որ համաժողովում արծարծված հարցերը նոր մտորումների ու հեքագոությունների կնդնն ապագայում:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր



ՎԵՐԱԾՅՎԵՑ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

*«Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նսնհր
վաստակին շինողք նորա:
Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք,
ընդունայն տքնին պահուպսնք նորա»:
(ՍԱՂՄ. ԺԻԶ 1)*

«Նոր Գլումրի 2003» փառապոնը համընկավ մի արարողության հետ, որին երկար էր սպասել գլումրեցին: Տարիների տեսական ընդմիջումից հետո վերածվելու էր Սուրբ Նշան եկեղեցին՝ իր դռները հյուրընկալորեն բացելով բարեպաշտ ու հավատավոր գլումրեցու առջև:

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ


Եկեղեցու շինությունն սկսվել է 1852-ին և ավարտվել 1864-ին: Ինչպես տեղեկացնում է հյուսիսային դռան վրայի արձանագրությունը, եկեղեցին կառուցվել է իշխան Երկայնաբագուկ Արղությանցի և քաղաքի բնակչության օժանդակությամբ. «Առաքաբաշխ փրօք Պայծառափայլ կնյազ Ղաերամանի Երկայնաբագուկ Արղութեանց և ջերմեռանդ հասարակությանն Հայոց քաղաքիս կառուցաւ Ս. Աստուածածին եկեղեցիս սկսեալ ի 1852 ամի Փրկչին և աւարտեալ 1864 ամի»: Եկեղեցին արձանագրության մեջ հիշատակվում է Ս. Աստուածածին անվամբ, այլ ոչ թե Ս. Նշան, քանի որ այս վերջինիս շինության ժամանակ Աստուածածին անվազ եկեղեցին նորոգված չէր, և Ս. Յոթվիրաց պատկերը մտադիր էին այստեղ բերել: Օծման ժամանակ արդեն, 1870 թվականին, սկսվել էր Աստուածածնի նորոգությունը, ուստի այն օծեցին Ս. Նշան անվամբ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒՃՈՒՄՆԵՐ

Եկեղեցին խաչաձև է: Չորս միջնապատների վրա, կամարներից վերև, երկինք է խոյանում հրաշակները, սրածայր կաթողիկեն՝ վրան խաչը: Գմբեթն ընդհանրապես ունի տասներկու նեղ ու երկար լուսամուտներ: Ս. Նշանը զարդարված էր փայտից քանդակված ողկույզներ տնեցող խաչկալով: Բեմի աջ ու ձախ կողմերում կան երկու խորաններ. առաջինը՝ պարարագչին սպասավորելու, իսկ երկրորդը՝ խաչելության ու սրբոց պատկերների համար: Այստեղ ամեն երեկո լեցուն էր լինում ջերմեռանդ աղոթողների բազմությամբ:



ՎԵՐԱՍՏԾՎԱԾ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ





ՄԱԳԼԱՌԵՆԻ ՍՈՓԻԱԳԻ ԳԼԻՍԵՍՍԻՄԻՐ





ՇԽԱՆԱՐԻ ՎԻԶԱՄԱՆ ՀԱՅՏԱՄԵՆԻ ՕՐԴՈՒՄԷ Ս. ՍԵՂՈՒՆԸ

Եկեղեցու արևմտյան կողմում է գտնվում զանգակատունը կամ ժամատունը, որի վրա բարձրանում է գեղեցկաշեն կաթողիկեն ութ սյուններով և Ս. Խաչով:

Եկեղեցին ունի երեք դռն՝ հարավային, արևմտյան և հյուսիսային: Հարավային դռան վրա, մարմարյա քարին քանդակված է Ս. Աստվածածինը: Այս դռան հանդեպ է գտնվել Սահակ-Անուշյան օրիորդաց ուսումնարանը:

Արևմտյան ճակատին, դռան աջ և ձախ կողմերում, կան երկու նեղ, երկար լուսամուկներ, ինչպես նաև երկու կլորավուն լուսամուկներ՝ դրանցից բարձր:

Հյուսիսային կողմում կան նրեք մեծ լուսամուկներ, իսկ դռան աջ ու ձախ կողմերում են գտնվում նա երկուսը, որոնք նեղ են ու երկարավուն: Սրանցից ավելի բարձր կան երեք կամարաձև չափավոր հաններ: Նույն է նաև հարավային պատակողը:

Արևելյան կողմում է մեծ լուսամուկը՝ սեղանը լուսավորելու համար, և երկու փոքրերը՝ խորանների համար: Թվարկվածներից բարձր են տեղավորված մեկական կամարակալ լուսամուկներ: Գեղեցիկապատ երկու փոքրիկ պատուհանները լուսավորում են եկեղեցու ներքնատունը: Հյուսիսային, հարավային և արևելյան պատերի մեջտեղում բարձրանում են սև քարից ոլորածո դուռն փորված գեղեցիկ խաչեր:

Այսքանը եկեղեցու կառուցման պարմությունից: Իսկ այսօր, ինչպես երկու դար առաջ, ցնծություն է ապրում հավատավոր գյուրեցիկ, քանզի երկրաշարժից խոնարհված աղոթատունն այս անգամ ևս վեր է հասնում իր հավատավոր զավակների աջակցությամբ, թեև ոչ Արդությանց, այլ՝ Ղուկասյան:

ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

Մեղրեմբերի 27-ին, առավոտյան ժամը 9.45-ին, Գյումրիի մուրքին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պարավիրակությանը դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպս. Աջապահյանը, Շիրակի մարզպետ Ռոմիկ Մանուկյանը, քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, մարզային ու տեղական իշխանությունների այլ ներկայացուցիչներ և առաջնորդեցին դեպի վերանորոգյալ Ս. Նշան եկեղեցի:

Վեհափառ Հայրապետին ողնկցում էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ և թանգարանների վարիչ-տնօրեն Ս. Փառեն եպս. Ավետիքյանը և Մայր Աթոռի միաբաններ:

ՄՈՒՏՔ «ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ

Այստեղ պարվարժան հյուրերին դիմավորեցին թեմի հոգևորականաց դասը և մեծաթիվ հավատացյալներ ոչ միայն Գյումրիից, այլև մարզի այլ բնակավայրերից ու Հայաստանի աշխարհի քաղաքներ շրջաններից:

Հանդիսավոր թափոթով Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի նրբեցողությամբ առաջնորդվեց եկեղեցի, ուր քիչ հեղու պեղք է կատարվել Ս. Խորանի և Ս. Սեղանի հանդիսավոր օծումը Սրբալույս Մյուտոնով ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, մասնակցությամբ Ս. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի և Ս. Փառեն եպս. Ավետիքյանի:

ՄԵԿ ՕՐ ԱՌԱՋ...

Մեպրեմբերի 26-ի երեկոյան դարձյալ մարտաշար էր Ս. Նշան եկեղեցու բակը: Հավատարմորդ գյումրեցիների ներկայությամբ առաջնորդ Սրբազանը քահանայից դասի հետ կատարեց եկեղեցու լվացման և օծման արարողությունը՝ հաջորդ օրվան թողնելով հտորանի և Մեղանի օծումը:

Ս. Նշան եկեղեցին փակվելով 1930-ական թվականներին՝ հետագայում դարձվեց պահեստ, թափռն, աստղադիտարան և կանգուն պատերով մաքառեց մինչև 1988-ի ահեղ երկրաշարժը: Սակայն Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի և իր եղբայրների աջակցությամբ վերանորոգվեց, բարեգարդվեց և այսօր պատրաստվում է դմբաց դիմավորել հավատացյալ ու ավանդապահ գյումրեցուն:

ԼՎԱՅՈՒՄ ԵՎ ՕՇՈՒՄ

Ս. Յոթվեդ առաջնորդանիստ Մայր եկեղեցում կատարած երեկոյան ժամերգությունից հետո, Շիրակի թեմի բարնիսնամ առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի հանդիսապետությամբ, եկեղեցականաց դասը, հանդիսավոր թափոռով ու «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի Ս. Նշան եկեղեցի:

«Ուրախ լիք» շարականի երգեցողությամբ հանդիսավոր թափորն առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ, դասի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին Սուրբգրային համապատասխան հարվածներ:

Դուռն մտք Սրբազան Հայրը, հոգևորականաց դասը, ինչպես նաև ներկա մեծաթիվ հավատացյալներ, ծնրադիր, Տիրոջից հայցեցին. «Բաց մեզ Տէր, գոյուն ողորմութեան...»:

«Բաց մեզ Տէր» շարականի երգեցողությունից հետո, Տիրոջ ողորմածությամբ բացված դռնից ներս մտան բոլոր ներկաները: Մկսվեց եկեղեցու լվացումը՝ համաձայն նախնայաց սրբազան ծեսի: Ըստ այդմ լվացվեց ողջ աղոթատունը նախ սովորական ջրով, ապա՝ գինով, որից հետո հանդիսավորաբար կատարվեց օծումը: Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ առաջնորդ Սրբազանի, Սրբալույս Մյուռնուով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, չորս ավերարանիչները, փասներկու առաքյալների և մեր հավատի հայր ու առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի անունները կրող սյուները, դռները, մկրտության ավազանը՝ Մեղանը և հտորանը թողնելով հաջորդ օրվան:

Հավարտ օծման Միքայել Սրբազանը, անդրադառնալով օրվա խորհրդին, նախ շնորհավորեց ներկաներին, ապա խոսքն ուղղելով հավաքվածներին ասաց. «Միրելիներ, իրապես անքննելի են Աստուծո գործերը: Իմ այս մեղավոր ձեռքերով ես օծեցի փառարկի սյուները և մկրտության ավազանը:

Երբ մեկ փարի առաջ օծվեց Ս. Հակոբ եկեղեցին, ես այսչափ հուզում չապրեցի, որովհետև Սուրբ Նշանն այն եկեղեցին է, որի խորհրդավոր պատերի փակ մեծացանք ես և իմ ընկերը: Տարիներ հետո մեզանից մեկը վերաշինելու էր խոնարհված եկեղեցին, իսկ մյուսը՝ վերածելու...

...Վաղը շարունակվելու և բուն օծումը կատարվելու է ձեռամբ ազգիս Վեհափառ Հայրապետի, և այս արարողությանը ձեր ներկայությունն եք բերելու նաև դուք՝ այսպեղ հավաքվածներդ»:

Առաջնորդ Սրբազանը խորին շնորհակալություն հայտնեց քաղաքապետ Վարդան Ղուկասյանին՝ նորոգության աստվածաձեռն գործը բարեհաջող ավարտի հասցնելու համար: Այսպիսով հավատարմոր գյուրեցիներին՝ հաջորդ օրը ևս ներկա գտնվել վերածման հանդիսավոր արարողությանը:

ԶԵՌԱՄԲ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՏԱՐՎԱԾ ՕԾՈՒՄԸ

Սեպտեմբերի 27-ին ցնծություն էր ապրում ավանդապահ գյուրեցիներ: Թեմի առաջնորդի գլխավորությամբ մարգային, տեղական իշխանությունների ղեկավարները, հոգևորականաց դասը և հավատացյալների խումբերամ բազմությունը խանդավառությամբ ու անհուն բերկրանքով էին դիմավորում Հայոց Հայրապետին և Նորին Սրբությանն ուղևորող հոգևորականներին: Նրանց էր միացել նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը, արքեպիսկոպոս ժամանած էյուրեր, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ:

Հանդիսավոր թափորը «Հրաշափառ»-ով Ս. Նշանի գավթից առաջնորդվեց դեպի Խորան: Ժամը 10.00-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, սկսվեց Խորանի և Սեղանի վացումն ու օծումը: Նորին Սրբությանն օգնում էին Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

«Պաշտանիչ» աղոթքից հետո Նորին Սուրբ Օծությունը լուսաճառագ Ս. Սեղանից ներկայներին ուղղեց իր հայրապետական պատգամ-հորդորը, գնահատանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքը՝ ի մասնավորի շնչեղելով:

«Սիրելի՛ բարեպաշտ գյուրեցի հավատացյալներ, սիրելի՛ ներկայացուցիչներ տեղական, մարգային իշխանությունների, շատ հարգարժան և պատվարժան էյուրեր:

Գոհաբանություն եմ ուղղում մեր սրբերին, փառք ենք տալիս առ Աստված, որ Տերն արժանի դարձրեց մեզ՝ այսօր տեսնել հայոց անկախ պետականությունը և մեր ազատ լինելու լույսն խորհրդանշող վերածվող եկեղեցիները: Թափափած անցած տարիների ծանր լուծը՝ այսօր մենք հնարավորություն ունենք խոնարհված եկեղեցիները վերստին վեր խոյացնել, նաև կառուցել նորերը, որպեսզի հավատարմոր ժողովուրդը կարողանա աղոթքի այդ տաճարներում իր սրտի խոսքն ուղղել առ Աստված:

Այսօր գոհություն և փառք ենք բարձրացնում առ Աստված, որ վերստին շնանում ու պայծառանում է Գյուրի քաղաքը, որ վերստին ուրախությունն է վերադառնում ձեր օջախներից ներս, սիրելի՛ գյուրեցիներ:

Վերստին Աստծու ողորմության և հույսի դռներն են բացվել Հայոց աշխարհի և մանավանդ Շիրակ աշխարհի և նրա բարեպաշտ ժողովրդի առջև, քանզի օրավոր վերանում են հեղեղներ ավերիչ նրկաշարժի, որն այնքան ցավ, տրտմություն և սուգ բերեց ձեզ և մեր ժողովրդին:... Այսօր վերանորոգված, գեղեցկագուրդ և պայծառաշուք է նաև Ս. Նշան եկեղեցին:

Ի նշանավորումն այսօրվա տոնական խնդրության՝ Տերը մեզ արժանի է դարձնում Ս. Նշան եկեղեցու օծումը կատարելու ուրախությունն ապրել: Եկեղեցի, որի դռները հարկադրաբար փակված էին հավատացյալ ժողովրդի առջև: Այսօր այն վերածված է, և մենք երախտապարհ ենք հավատարմոր հայրերի Գյումրիի բաղաբալետը փոխարինելով Վարդան Ղուկասյանին, ում ջանքերի շնորհիվ իրականացավ այս նրազանքը:

Մեր մաղթանքն է և հորդորը ձեզ, սիրելի՛ գյումրեցիներ, որպեսզի ձեր հավատարմությունը մեր հայրերի սրբազան հավատքին անսասան պահեք, շեն ու պայծառ պահեք ձեր եկեղեցիները, հավատքով ու աղոթքով թրծեք նրանց որմերը և բարերը, որպեսզի ոչ մի կործանարար աղետ չկարողանա շարժել նրանց հիմքը, որպեսզի երբեք մեր ժողովրդի գավակներն իրենց հավատքի օջախները խանդաված չդնեն:

